

1041

15  
U - 65

1885

2010

2001

ՀԱՄԱՊՈՏ

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

9170-րդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԹԻԳՐԱՆՈՒՅՆԻ

6474.57

15  
~~4~~ 65

ՀԱՄԱՍՏՈՑ  
ՓԻԼԻՍՊՈՓԱՅԻԹԻՒՆ

(36)

ԳՐԵՑ

ԽՈՐԵԿ ԵՎ ԿՐՄԿՈՎՈՄ

ՀԱՅՐ Վ.ԱՆԱՑ ԱՐՄԱՉՈՒ

Հրամանաւ Հաստիաց կը բարեւեալ ուղարկուածու



Ի ՆԻԿՈՄԻԴԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ 2. Ս. ԱՍՏՈՒԱՇԱԽՆԻ Վ.ԱՆԱՑ ԱՐՄԱՉՈՒ

— 1885 —

ՅԱԾԱԾԱԿ

ՄԵՇԱԳՈՑՆ ՍԻՐՈՅ

ԵՒ Ի ՍՓՈՓԱՆՍ

ԱՆՄԻՒԹԱՐ ՏՐՏՄՈՒԹԵԱՆ

Ի ՄԱՀՆ

ՎԱՎԱՄԵՐԻԿ ՈՐԴԻՈՑՆ ԻՒՐՈՅ

ՏԻԳՐԱՆԱՅ

Հ. ԱԳՐԵՆԱՍԵԱՆ


ՆՈՒԻՐԵ

ՀԱՅՐՆ ՈՐԴԵՍԵՐ

ՀՕՄԲՈՐՉՈՒՄ Դ. ԱԹԱՆԱՍԵԱՆ

23 ԽԵՄՐԻԱՐ 1885

ԱՐԱԿՈՅ  
ՏԵՂՄԱՆ ՀՅՈՒՅՈՒՆ  
Վահովի և այլ



Վահովի ՀՅՈՒՅՈՒՆ  
ՏԵՂՄԱՆ ՀՅՈՒՅՈՒՆ  
Վահովի և այլ

## ՅԱԴԱԶԱԲԱՆ

Ենթակա մասնաւորութիւնը՝ իրեն զիմաւոր ծառայութիւն ընտրելով դասախրակութիւնը՝ բոլոր անդամներով ուսուցչութեան պաշտօն կը վարէ Վանուց վարժարանին մէջ՝ իւրաքանչիւրն իւր լաւ սերտած ուսմանն համար։ Նուասու՝ որ պատիւ ունեցեր է սոյն համեստ եւ ուսումնասէր հասարակութեան զիմաւորն ըլլալու՝ իմաստասիրական գասերը կ'աւանդէր աշակերտաց։ Բնչպէս նաեւ ՚ի կարգին Եկեղեցական Պատմութիւնն եւ Քրիստոնէական Առուածաբանութիւնը, որք նոյնպէս իմաստասիրութեան ընկերացող ուսումներ են։

Կարեւոր այս զիմաւութեանց համար լաւագոյն դասողքեր պատրաստ չկենալով՝ ստիպուած եւմք զգուշութեամբ թարգմանելով պատրաստել ուրիշ լեզուներէն, այն կարգի հեղինակներ միայն ընտրելով առաջնորդ՝ որոց կրօնական եւ իմաստասիրական վարդապետութիւնը հակառակ չ'ելլեր ոչ ուղիղ փիլիսոփայութեան եւ ոչ ողջամիտ աստուածաբանութեան եւ հետեւապէս ազգային աւանդութեան։ Որովհեաւ մեր ուսման չիմը որքան իմաստասիրական նոյնքան ալ եկեղեցական է, ուսափ ոչ իրիւ յանդուզն իմաստասէր փորձական վարդապետու-

թեան ծայրը նետուելով՝ նիւթապաշտութեան ասպարէզ  
կը բանանք մեր աշակերտաց, եւ ոչ իբրև յորի աս-  
տեածաբան ամեն ծանօթութիւն, բացայստութիւն  
կամ ապացոյց միայն եւ միայն աստուածային լուսոյ ըն-  
ծայել կ'ուսուցանենք: Սակայն, չենք մնապարծիք՝ թէ  
նորագոյն վերլուծութիւն կը կատարեմք իմաստափրա-  
կան եւ աստուածաբանական դասերու, այլ որքան կա-  
րելի է կը ջանամք՝ որ մէկ կողմանէ բանականութեան  
պատիք պահեմք, միւս կողմանէ ալ Աստուծոյ երախ-  
տիքը կամ Ճշմարտութեան ձրի պարդեւը իմաստուն եր-  
կիւղածութեամք մէծարեմք: Մեր, ինչպէս նահե մեր  
առաջնորդն եղող հեղինակին, աշխատութեան նորու-  
թիւնն յայսմ է՝ որ ուղիղ հաւատոյ եւ բարոյականի  
խանգար ածող փիլիսոփայական սիմալմունքները եւ նո-  
ցա հեղինակները ցոյց տալով մոլորութեանց արմատ ե-  
ղող դրութիւններէն համբակները կ'զգուշացնեմք: Հրա-  
պարակաւ եւ առանին այս եղած է սկիզբէն ՚ի վեր մեր  
համոզումն ու աշխատութիւնը, ինչպէս եկեղեցւոյ ա-  
տեանը եւ դասարաններու մէջ, նոյնպէս եւ հրապարա-  
կային թերթերու մէջ:

Ճշմարտութեան կամ Աստուծոյ կուսակիցները եւ  
մարդկային ողջմտութեան բարեկամները ժամանակին յա-  
րուցած նորութեանց դէմ՝ նոր եւ առաւել պայծառ բա-  
ցատրութիւն հանելու են եւ անսպէս ուսուցանել իրենց  
ունկնդիրները կամ աշակերտները, որովհետեւ դավա-  
փարաց հոսանքը անդադար է, եւ մշտահոս վտակի պէս  
ամեն անդամ յստակ չը վագեր. ինչպէս որ վտակի մը  
ոչ պղտորութիւնը նոր կ'ըլլայ եւ ոչ յստակութիւնը, նոյն  
պէս ալ վարդապետութեան ոչ ուղղութիւնը նոր է եւ  
ոչ մխալը, այլ ժամանակ առ ժամանակ մի եւ նոյն ուղ-  
ղութիւն կամ մի եւ նոյն սմալ նորէ նոր կ'երեւին,  
յորմէ կըշփոթին պատմութեան անտեղեակները:

Գերագոյն այս պարտաւորութեան համեմատ մեր  
համեստ նպատակն եղած է այս դասագրքով մեր աշա-

կերտաց եւ բոլոր ազդային ուսանողաց միտքը բանալ  
դէպ ՚ի ճշմարտութիւն իմաստափրական՝ ըստ ծրագրի  
եւ ըստ դասագրոց, որ քրիոտոնեայ աշխարհաց զիաուն-  
ները ընդունած են:

Այս անդամ հրապարակ կ'ելլէ միայն առաջին մա-  
սը, այն է Հոգեբանութիւնը ըստ իննդրոյ մեր պատուա-  
կան մէկ բարեկամին, որ ՚ի յիշատակ իւր սրբելի որ-  
դւոյն եւ մեր իսկ աշակերտի ուղեց իւր ծախութ պատ-  
գրել տալ, եւ այսու ազգային ուսանողաց օրհնութիւ-  
նը պազատել վասն հոգւոյ վազամեռիկն ՏիգրինԱՅ, որ  
ծաղկելու մօտ եւ յապագային հասուն պտուղ ընծայե-  
լու յուսալից տրամադրութիւններով լի՛ մանուկ հասակի  
մէջ՝ տարածամ մեռանելով ողքացոյց շատ զհայրն եւ իր  
բոլոր ուսուցիչները: Մնացորդ մասերն ալ հետզհետէ  
տպագրելով պիտի ջանամք ամբողջացունել:

Խ. Վ. ԱՐՄԱՆՈՒԹԻՒՆ



## ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

### ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Փիլիսոփայութեան վրայ առհասարակ .

Ա . Փիլիսոփայութեան առարկան : Փորձառութեան ներքեւ ինկող երևոյթներէն ունանք չենք կրնար, տարածութեան և շարժման պէս, զգայարանաց և անոնց օժանդակական միջոցներով ճանաչել, այլ միայն միայն մոռք, և կ'ըսուին խորհրդոց երևոյթք՝ ինչպէս են դատել, Յնչեւ, Կառեւ : Այս երևոյթներուն զգայարանաց ներքեւ չ'անկանելլ կը հաստատէ՝ թէ կարդ մը էութիւն կամ ընութեան կայ՝ որ էապէս որոշէ իմարմնոյ, և կ'ըսուի հոգեղէն էակ կամ հոգի : Ինչպէս որ բնագիտութիւնը մարմնոց և նոցայատ կութեանց և օրինաց վրայ կը խօսի, փիլիսոփայութիւնն ալ այս հոգւոց վրայ կը խօսի . նախապէս մեր հոգին կը քննէ, զի փորձառութեան ներքեւ ինկող առաջին հոգեղէն էակն է, անոր վիճակը կամ որպի՛-

սութիւնը կ'ատորագրէ , կարողութիւնները կը բացատրէ , և աննիւ թական ըլլալը կ'ապացուցանէ , յետոյ կը քննէ թէ ի՞նչ են հոգւոյն վերջին վախճանները , ի՞նչ են զիտութեան , երջանկութեան և առաքինութեան թէութիւնները , ի՞նչ են մոտաց և կամաց կանոնները , ամենէն վերջն ալ կը ջանայ գիտել այն անսահման էակը՝ յորմէ ամենայն էակը ստեղծեալ են , և ամենայն ազդ ԱՍՏՈՒԱԾ կ'անուաննեն :

Միայն փիլիսոփայութիւնը չէ՝ որ այս մեծ առարկայից վրայ ու սումն կուտայ . կայ գիտութիւն մը ևս , Աստուածաբանութեալ , որ կը խօսի մեր հոգւոյն և անոր երկնաւոր ծագման՝ յախտենական վախճանին և առ Աստուած պարտուց վրայ . սակայն ասոր սկսուած քը և շատիզները փիլիսոփայութենէն շատ տարրեր են : Աստուածաբանութիւնը գերբնական խօսք մը իրեն անխախտելի հիմն առնելով՝ և նոյն հիման պահապան և թարգման կրօնական հեղինակութիւնը սեպերով՝ աւանդած վարդապետութեանց վրայ վիճաբանութիւն չ'ընդունիր , այլ գերազդոյն և անսխալ հեղինակութեամբ կը պահանջէ՝ որ ըստ ներն առանց քննութեան ընդունիմք : Իսկ փիլիսոփայութիւնը , ընդհակառակն , ճշմարտութիւնը խելքով դտնել շանացող մարդոց գործ է . փիլիսոփային համար ամէն բան հետազոտութենէ սկսուելու է . համօղումն տալու կամ առնելու համար բացայացութենէ կամապացուցէ ուրիշ լցոս շիճանչէր , թէպէտե այս համօղումն ալ շատ անդամ վեր ՚ի վերոյ կրնայ ըլլալ , կրօնական հաւատքի չափ մաքուր եւ անփոփոխ խաղաղութիւն չ'ընծայեր մոտաց :

Ուրեմն փիլիսոփայութեան յատուկ նկարագերը և սահմանն է խելքով ճանաչել մարդկային

հոդին , Աստուած և այն ճիշդ միջայները՝ որովկը մարդկընայ դտնել ճշմարիսը , գեղեցիկը և բարին :

Բ . Փէլիսոփայութիւն բաժանումը : Գիտութեանց բաժանումը իրենց առարկային իմաստէն կախումն կունենայ , և ըստ այնմ ընդարձակ կամ բաղադրեալ մասեր կունենան : ՚ի Սկզբան , որովհետեւ ամէն փիլիսոփայ մէկ կերպ չ'ը իմանայր այս գիտութեան սահմանն և նպատակը , ուստի մէկ կերպ ալ չ'բաժանեցին : Հիները փիլիսոփայութիւն ըսելով ամէն բանի վրայ գիտութիւն ունենալ կը հասկնային : ուստի մարդկային հմտութեանց ամէն ճիւղերն ալ փիլիսոփայութեան մասն համարեցին . ըստ այսմ Պղատոն և անոր աշակերտները փիլիսոփայութիւն ըսելով կը հասկընային տրամախօսութիւն , բնագիտութիւն , բարոյագիտութիւն . Արիստոտել ալ երեք մասի կը բաժնէր , բանաստեղծական , գործնական տեսական , և ասոնց ներքեւ ուրիշ մասեր կը շարեր , բնագիտութիւն , չափագիտութիւն և փիլիսոփայութիւն առաջին կամ Աստուածաբանութիւն Արիստոտելի և անոր աշակերտաց լեզուով այս վերջինը կըսուեր նաև Բնապահպահէր նէտան , որ կ նշանակէ թէ այս գիտութիւնը այն էակին վրայ կ խօսի , որ անդը և ՚ի վեր է քան զբնութիւն երբեմն ալ Լուկանութեան կըսուեր . իրը թէ սորուառարկայնէ հետազոտութիւն այն ընդհանուր որպիտութեանց որովկը էակ մը կը ներկայանայ մարդկային մոտաց :

Երբ փիլիսոփայութեան սահմանը չափաւորուելով՝ եղեւ , ինչպէս հիմայ , գիտութիւն կամ ուսում միայն հոգեղին էակաց՝ բնականաբար բաժանում ներն ալ քիչցան :

Այսօր, չորս դմասւոր առարկայ կը ճանչցուի իվլիսոփայութեան, առաջին՝ Հոդի, և ասոր գոր ողութիւնները կարողութիւնները և բնութիւնը ։ Եկրորդ՝ շաւիզ մտաց և քննութիւն ճշմարտութիւն ։ Առաջին՝ բերելու հնարքին, երրորդ՝ ապացուցումն խստածային էութեան և նորա ստորոգելեաց ։ Չորրորդ՝ բարյական կատարելութիւն մարդոյ, և անոր պիւայլ պարտքերը և վերջին վախճանը ։ Այս չորս ուսուակ նիւթոյ համար փիլիսոփայութիւնն ալ չորս վսաւոր մասին կը բաժնուի ։ Հոդեբանութիւնն, Տրամբանիւնն, Առորուածանութիւնն, և Բարյագեբանութիւնն ։ Իրեւ սւելուած՝ բայց կարեւորագոյն մասն փիլիսոփայական ասագրքին կրնայ սեպուիլնաե. Փիլիսոփայութիւնն պատահիւն, որ ճշմարտութիւն ձեռք բերելու համար ամանակ ժամանակ գործածուած մարդկային տանելի ջանից վրայ կը խօսի, և կը պատմէ՝ թէ ո՞ր փիլիսոփայ ինչ վարդապետութիւն ունեցեր է.

Գ. Դաստիարակութիւնն առաջնա հիմնով դիմումութեան գիտուն երն իրենց մէջ փիլիսոփայութեան մասերը շարելու ողմանէ ալ շատ տարբերեցան ։ ոմանք Տրամարտութիւնը նախադաս համարեցին, ինչպէս միջին արու Դարրոյականք ։ ոմանք Հոդեբանութիւնը, յլք Աստուածաբանութիւնը ։ Ամենէն բնական և ալքի յարմար դասաւորութիւնն է յառաջ դնել ինդիքը ուստի միւսները կախումն կունենան, ցնայէս որ՝ այն առաջինը լուծուելուն պէս՝ հետևաներն ալ լուծուին, որպէսպի միտքը յայծ մերաւոր և ծանօթ ճշմարտութենէն ճանբայ ելլելով՝ իւրապէս վերանայ հեռաւոր և մութը մասցած մարտութեան ։ Արդ, մարդուն ներկայացող առաւ-

ջին առարկայն ինքն իսկ է, և իւր վրայ ուսած ծանօթութենէն կախեալ է իւր բարյական կատարելութիւնը և Աստուածդիտութիւնը, վասն որպէս փիլիսոփայութեան մասանց շարքին մէջ առաջին կարգը հոգեբանութեանն է։ Այսու ըսել չեմք ուզեր, Յոյն իմաստակաց ումանց պէս, թէ մարդն է շափ և կոպար ամենայնի, այլ վասնզի կ'ընդունիմք և այնպէս ալ է՝ թէ մեր հոգին և անոր իմացական զարգացումն և գաղափարաց արդասաւորումն ուսանելով ամէն որիշ հետազօտութեանց ճանապարհը կը դիւրանայ ։ կարելի է, օրինակի համար, որ էակի գաղափար ունենամք առանց ուսանելու կանխաւթէ ինչ է մեր իմացական և աղաս էութիւնը ։ պարտքըն ինչ է կրնամք հասկնալ եթէ չեմք սորմեր կանխաւ թէ ինչ է մեր բնութիւնը և ինչ է վախճաննիս ։ Հոգեբանութեան ետևէն կուդայ որամարանութիւնը կամ որ նոյն է՝ մարդկային մոտաց ծանօթէ անծանօթը հետեցունելու գրութեան գիտութիւնը ։ Ասկէց յետոյ կը բարձրանամք Աստուածանութեան, համառօտ նախագիտելիք մը ուսանելով բնազանցութենէն, որպէսպի Աստուած էակին վրայ ուսումն առնելէ յառաջ մտքերնիս լամշակած և բոլոր մուաւորական ոյժերնիս ժողոված լինիմք ։ Եւ որովհետև մեր բարյականին հիմք այնքան հաստատուն բռնել կարելի բան չէ, մինչև որ զԱստուած և անոր արդարութիւնը կամ կրօնքը չը սորվիմք, ուստի Աստուած աբանութիւնէ անմիջապէս յետոյ բարյագիտութիւնը պիտի զնեմք ։ Դեղագիտութիւն ըսուած մաս մ' ալ կայ ։ Ընդարձակ փիլիսոփայութեան մէջ որ կը ճառէ գեղեցկութեան և մեր դէպ առ այն ունեցած բնական զգաց.

ման վրայ . բայց որովհետեւ Եւրոպացւոց դպրոց-  
ներուն մէջ համառօտութեան ծրագրէն այս մասը  
դուրս ձգել սովորութիւն եղած է , մենք ալ անոնց  
պիտի հետեւիմք , թէպէտե բանաստեղծութեան և  
արուեստի զգացումն ունեցողներու համար օգտա-  
կար կրնայ ըլլալ : Ամենէ վերջն ալ փիլիսոփայու-  
թեան պատմութիւնը պիտի դնեմք , որ սորվիմք՝  
թէ սկիզբէն մինչև այս օրերս , մօտ 2,400 տարիներէ  
'ի վեր , փորձառութիւն և բանականութիւն մերթ  
միացեալ և մերթ բաժանեալ՝ ինչ խնդիրներ բա-  
ցեր են , ինչ վիճաբանութիւններ յարուցեր , և ի՞նչ  
պէս լուծեր են :

Դ . Փէլտոնիայութեան օդուո՞ն : Ուրեւ ժետութեանց հետ  
առնելութիւնը : Հիմները մարդկային կրթութեան միջոց  
կը համարէին փիլիսոփայութիւնը : կիկերոն կ'ըսէք՝  
թէ փիլիսոփայութիւնը հիմնարկեց քաղաքները ,  
աղնուացուց բարքերը , կատարելագործեց արուեստ  
ները , ուղղեց օրէնքները . սորվեցուց մարդոց՝  
թէ ի՞նչ միջոց կրնան գործածել առաքինի բյալու  
և մոլութիւն և կիրք զապելու համար : Հիմայ որ փի-  
լիսոփայութիւնը առջի պէս ամէն բանի գիտութիւնը  
չէ՝ կիկերոնի ըստածք թերեւ չափազանց համարուի ,  
սակայն այժմու այս չափաւորութեան մէջ ալ ար-  
դարեւ անգնահատելի է արժէքը և շատ մեծ են  
դարդիւնքները՝ որ կը բղիսին՝ նախ առարկայէն ,  
երկրորդ՝ ուրիշ գիտութեանց հետ ունեցած յարա-  
բերութիւններէն : Փիլիսոփայութեան առարկայն է ,  
ինչպէս արդէն ըստր եմք , հետազոտութիւն մարդ-  
կային բնութեան և անոր նպաստակին : Ասկէ աւելի  
ուսանելու արժանի ի՞նչ բան կրնայ ըլլալ . ո՞ր մարդ-  
կրնայ անտարբեր լինել և խմանալ չ'ուզեր , թէ ինք

ինչ է , և ֆասքալի ովէս մատանջելով չ'վիճառէք  
ամենախոր տիրութեամբ . — չ'գիտեմ ո՞վ զիս դրաւ-  
այս աշխարհը , ինչ է այս , ինչ եմ ես , ինչ է մար-  
մինս , զգայարանքներս , հօգիս՝ և ԵՍ ըսուած բանը՝  
որ կը խորհի այս բաներն և ինք երեն վրայ ալ կը  
մոտածէ , և դեռ շատ բաներ ալ կան՝ որ չ'դիտեր :  
Սա ստուգիւ գիտեմ՝ որ պիտի մեռնիմ , և մահէ  
աղատումն չ'կայ , բայց մահն ինչ է :

Եթէ մեր ծագման և վախճանին վրայ այս ծանր  
բայց վթին խնդիրները հասկցուին՝ քիչ աղզեցու-  
թիւն կընեն մեր բարոյականին և երջանկութեան  
վրայ : Դիցուք թէ հաւատքը մոքերնիւ լուսաւորեցն  
սակայն ուր գներմք մեր ներքին անհերքելի փափա-  
քը՝ որ շարունակ փնտուելու վրայ է՝ թէ ի՞նչ ապա-  
ցոյց ունիմք մեր այս հաւատքին , և ոչ ապաքին նոյն  
խոկ հաւատքի և կրօնի ճշմարտութեանց արժէքը  
կշռելու համար իմաստասիրութեան և խորհրդա-  
ծութեան ոյժը պէտք է : Եկեղեցւոյ ամենէն մեծ  
ծառայութիւն ընողներն ալ գլխաւորապէս նոյն խոկ  
այն քարդապետներն էին՝ որ փիլիսոփայութեան մէջ  
ալ մեծ անուն ունէին : Գալով այն աւընչութեան՝  
որ փիլիսոփայութիւնն ուրիշ գիտութեանց հետ  
ունի , երկու պաշտօն կը կատարէ . մէկ մը՝ որ գի-  
տութեանց հիմք կը փնտուէ , կը գտնէ . մէկ մ'ալ որ  
գործածուած մեթուսներուն վրայ հակողութիւն  
կընէ : Բացատրենք . ամէն գիտութիւն կամ մար-  
դուն վրայ են կամ մարդուն համար . օրինակի հա-  
մար , մէկը մարդ համոզելու համար է , և հուետո-  
րութիւն կ'ըսուի . միւս մը այս կամ այն ժամանակ  
մարդկային ընկերականութեան զարդանալուն վրայ  
կը գրէ՝ և պատմութիւն կ'ըսուի . ուրիշ մը , մարդոց  
քաղաքափար կազմութեան և գործարանաւորման

վրայ կ'իմաստասիրէ , քաղաքադիտութիւնն կ'ըսուի .  
ուրիշ մը պարտք և իրաւունք կը փաստաբանէ .  
իրաւագիտութիւնն կ'ըսուի և այլն : Ո՞չ ապաքէն  
մարդկեղէն բնութիւնը կամ կիրքը պէտք է գիտնայ  
հռետորը՝ որ համոզելյածողի , պատմիչը՝ որ քա-  
ղաքական շարժմանց պատճառները պատմէ . իրա-  
ւագիտը՝ որ իրաւանց և պարաւոց սահմանը ցու-  
ցանէ : կամ գիտութիւններ , ինչպէս են չափական  
և բնախօսական գիտութիւննք , որոնց հետ փիլիսո-  
փայութիւնն ուղղակի դործ չունի , և կամ չ'կար-  
ծուիր թէ ունի , ըստ ո՞չ ապաքէն ասոնք ալ սկզ-  
բունքներ ունին , որ մարդկային մտաց գրեթէ  
բնական բղխմունքներն են : Մարդ և բնութիւնն կամ  
աշխարհ՝ որքան ալ իրարմէ տարբեր են , քանի որ  
մէկն ուսանող է և միւսն ուսանելի . ո՞չ ապաքէն  
մարդ խելքով պիտի ուսանի : Յիրաւի , առանց  
հոգեբանի պէս գիտնալու թէ ի՞նչ է իմացականու-  
թիւնը՝ խելք դործածել և լաւ գործածել կրնայ  
ըլլալ , օրինակի համար շիտակ քայլելու համար  
մարդակաղմութիւն գիտնալու հարկ չ'կայ , այսինքն՝  
թէ սրունքներս քանի ոսկրէ , որքան ջիլէ , յօդու-  
ածէ , երակներէ և այլն բաղկացած են . բայց այն՝  
որ գիտէ թէ ի՞նչ կ'ընէ , և կամ այն՝ որ խորհելու  
ատեն գիտէ՝ թէ ի՞նչպէս կը խորհի , միշտ տգէտէն  
աւելի կը գիտնայ՝ թէ ի՞նչ գաղտնիք կան այս բանին  
մէջ՝ և տղէտէն աւելի լաւ կը բացատրէ իմացածը :  
Այլ և ամէն գիտութիւն յատուկ հիմնական ծանօ-  
թութիւնն մը ունի ներքեւը . օրինակի համար ,  
երկրաշախութեան համար տարածութեան գաղա-  
փարը , մեքենադիտութեան համար՝ զօրութեան ,  
չափադիտութեան համար՝ թուոց գաղափարն և այլն :

Բնագէտը կամ երկրաչափն իւր ուսման սկզբունք-  
ները կուրարար կը գործածէ , ուստի կուգան և  
ի՞նչ կարժեն՝ չ'իմանար : Փիլիսոփայութիւնն ամէն  
սկզբանց վրայ կ'աշխատի , ակը կ'երթայ , կը գտնէ ,  
ընթացքնին կը կանոնաւորէ , մեթունին կը պնդէ ,  
հետեանքնին կը կըռէ , Աստուծոյ վրայ ճառելով  
կ'ուսուցանէ՝ թէ բնութեան օրէնքները պահպանող  
մը կայ , որմէն տեղեկութիւն չ'ունենար բնագէտը :

Ուրեմն փիլիսոփայութիւնն ամէն գիտու-  
թեանց հետ յարաբերութիւն ունի , բարձրէն ամե-  
նուն վրայ կը նայի , ևս և ամենուն կարդ ու կանոն  
կը հրամայէ :

---

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

Տարբերութիւն մարդակալական եւ հոգեբանական եղելութեանց . — Գիտակցութիւն .

Ա . Հոգեբանական եղելութեան : Եթէ միայն զգայացնաց նայիմք՝ մարդուս էութիւնը գլխովին մարմնաւոր է , կեանքն ալ կանոնաւոր հետևանքն է մարմնեղէն գործարանաց . բայց եթէ միայն զգայացնաց չ'նայելով մենք մեր վրայ անդրադառնամք , պիտի իմանամք՝ թէ մեր էութեան խորը կայ ուրիշ կարգ մը եղելութիւն՝ որ բնաւ նիւթոյ հետ վերաբերութիւն չունի . ինչպէս իորնէւ , յէլւ , էաւորագիրէւ , համեւ , սիրէւ , ևայն : Այս եղելութիւները հոգեբանական եղելութեան կ'ըսուին , պատճառն որ մեր հոգին է այս եղելութեանց կամ ենթակայն կամ պատճառը : Այս եղելութիւններն են առաջին առարկայն և հիմունքը Հոգեբանական կամ գիտութեանն զհոգւյ :

Բ . Տարբերութեան հոգեբանական և մարդակաղմական եղելութեան : Ամէն մարդոց պէս մենք ալ մարմին ունիմք : Մնան դուռ ըսելով հարկաւ մեր այս մարմինը չեմք հասկնար . սակայն մեն ըսելց իրաւունք ունիմք . պատճառն որ՝ նախ մեր վրայ կարելի չէ փոփոխու-

թիւն մը լինի ցաւալի կամ հեշտալի , որ այս մարմիննիս չը ցնցէ . Մեր մարմնոյն եթէ բարիք մը լինի կը հաճիմք , չարիք պատահի կը վշտանամք երկրորդ՝ մեր այս մարմնոյն մէջ գոնէ մասեր ունիմք՝ որ մեր կամաց անմիջապէս կը հնաղանդին . օրինակի համար . — կուզէ՞ որ բայլու՞ շրջելուս պէս բաղուկս կըշարժի , միջդեռ ամենափոքր շիւլ մը՝ որ մարմնէս դուրս է՝ որքան խիստ հրամաններ տամ՝ տեղէն չը շարժիք : Ըսել է՝ թէ մեր այս մարմնոյն վրայ անմիջական և ուղղակի իշխանութիւն ունիմք՝ զոր բնաւ չունիմք ուրիշ մէկուն վրայ : Ուրեմն , երկու բան կայ վրաս . մին այս մարմինս է՝ որ ամբողջ էութիւնս չէ , սակայն ես հետը միացած եմ անրաժանների կերպիւ , որչափ ժամանակ որ մնամ այս աշխարհի վրայ . Մարդակաղմութիւնն այս կենդանացեալ մարմնոյն վրայ կը խօսի , նիւթը և ձեւը կը պատմէ , կազմն և գործողութիւններն կ'ստորագրէ , և ապա պատշաճ խելամոռութեամբ երեւյթներէն օրէնքները կը գուշակէ , գործարաններն և անոնց վարած պաշտօնը սորվելով՝ նպատակնին կ'եղրակացնէ , գործարանաւորեալ այս նիւթոյն կեանք տուող գաղտնի սկիզբն կամարմատը կ'որոնէ : Մարդակաղմութիւնն այս տեղ կը գագարէ , ց'այս վայր տեսնուած եղելութիւններն ալ առհասարակ կը չօշափուին և կը տեսնուին . որովհետեւ ուկը , միս , չիլ , մաղձ , ուղեղ և այլն են : Եթէ մեր վրայ այս եւ ասոնց նման եղելութիւններ միայն գտնուէին , մարդակաղմութիւն ուսանելով մարդկային ընութիւնն ամբողջ ուսած կըլլայինք . բայց մենք ուրիշ անանկ վիճակներ ունինք և գործեր կը կատարենք , որ բնաւ նիւթական գաւող գործիքն մասաւորական են , մարմնաւոր չեն . օրինակի համար

թէ կայ առանձին գիտութիւն մ'ալ՝ որ յատկապէս այս տարբեր երկութից և նոցա յատուկ արմատին կամ սկզբան վրայ կը խօսի . այս իսկ է Հոգենրանութիւնն : Օրինակի համար . մարմնոյս մէկ կողմը վէրք առնելնու պէս ջիջէ Ջիջ ցնցումն կը հաղորդուի , որ արագ կամ դանդաղ տեսովութեամբ կը հասնի մինչև հոն՝ ուր ջիղերը միացած են , և կ'ըսուի ուղեղ . բայց երբ այս հաղորդակցութիւնը կը լինի՝ ես կը վշտանամ : Յիրաւի՝ մարմինս է այս ցաւոյն միջնորդն և գրեթէ պատճառը , բայց շատ տարբեր բան է մարմնէն . շարժումն և ցաւ մէկ բան չեն . մէկն այս ինչ տեղ կ'ըլլայ , այն ինչ տեղէ կ'սկսի , այս ինչ տեղ կը հասնի , երագ կամ դանդաղ , ուղիղ կամ կոր կ'ըլլայ , պատկերն ալ կը շինուի , բայց միւսը ուրիշ բան չունի՝ այլ միայն տեղորութիւն , ցաւոյն երկարատեւը կամ կարճատեւը կ'ըլլայ , բայց լայնն ու նեղը չ'ըլլար , ասատիկ կամ տկար կ'ըլլայ , բայց ծուռ շիտակ չ'ըլլար , և վերջապէս գրի կամ գծի ներքեւ չեմկրնար առնել . Նորածին աղայն անդամ՝ որ գեռ իրեն մարմին ունենալն ալ չ'գիտեր , ևս և շատ մարդիկ որ իրենց կազմուածքին վրայ բնաւ տեղեւ կութիւն չունին , այսու աղատ չեն մնար ցաւ զգալէ : Ցաւել անրաժանաբար գիտնալն է՝ թէ ցաւ կը կրեմք : Ուրեմն բնական շատ ըսուածն բաղադրեալ երկոյթ մ'է , որոյ գլաւաւոր տարբերքը՝ այսինքն է նոյն իսկ ցաւը՝ բնաւ նիւթական բան չ'ունի իսկապէս : Բնական ցաւոց համար ըսածնիս նոյն և մի կերպիւ կը յարմարի զգայարան քներէ յառաջ եկած հեշտութեանց համար ալ : Սակայն , ցաւ կամ հեշտութիւն կրող ուրիշ վիճակներ ալ ունիմք , որ բոլորովին մասաւորական են , մարմնաւոր չեն . օրինակի համար

ապադայ բարւոյն ակնկալութիւնը յուսոյ խնդութիւն կը պատճառէ . մօտալուտ վասուց կանխառեսութիւնն երկիւղի տագնապ . սակայն կազմադիտութիւնը նիւթոյ ո՞ր ծալքին , ուղեղի ո՞ր մութ անկիւնը կրնայ ցոյց տալ կանխառեսութիւն , յիշողութիւն , մակարերութիւն , կամ որ նոյն է՝ խորհրդածութիւն՝ որ ոչ ձև կ'ունենայ և ոչ կերպարանք : Միքանի կազմագիտներ գանկուրանութիւն անունով գիտութիւն մը կ'ենթադրեն , որ իրը թէ հոգերանութեան պակասը կրնայ լեցունել , և կը պնդեն՝ թէ մարդուս մոռաւորական և բարոյական կարողութիւնները ուղղակի դորձարանաց միջոցաւ կարելի է ուսանիլ : Այս ալ քննեմք : Ապաքէն , մարդկայն կազմուած քին մէջ խորհրդածութեան գործարանը կամ թէ ըստմք , թէութիւնն ուղեղն է . սա եթէ եղծաւ՝ կեանք և խելք կ'եղծանին . եթէ մասնաւոր խանդարումն եկաւ վրան՝ մասնաւոր անկարդութիւն մը կ'յնայ խելքերնուս վրայ . եթէ առ ժամանակեաց ցնցում մը պատահեց՝ խելքերնիս ալ ժամանակ մը կախակայեալ կամ շփոթեալ կը մնայ : Ասկէց զատ , կրօնն կազմագէտք , ամէն մարդոց ուղեղն հաւասար ծանրութիւն չ'ունենալով , այլ ոմանց ուղեղն՝ այս կամ այն խորշին և մասնական զանդուածին կողմանէ՝ իրարմէ տարբերելով՝ մարդոց մտաւորական և բարոյական վիճակն ալ զանազան աստիճան կ'ունենայ և այլն : Սակայն , ոչ ապաքէն այս ամէն ենթադրութիւններն ապացուցանելու համար են՝ թէ ուղեղի այս հրաշալի յօրինուածութիւնը՝ խորհրդածութեան գործիք ըլլալու համար է , և ո՞վ աւանդեր է մեղայս գործարանին և անոր ձևոյն , տեղւոյն և կշռոյն

վրայ խորհրդածելու և հետևութիւններ գուշակելու հնարքը ո՞չ ապաքէն մեր մատորական և բարյական հանգամանաց գիտութիւնը , կամ որ նոյն է հոգերանութիւնը :

Գ . Գիտական մարդակազմութիւնն օր մը որ աստիճան կատարելութեան ալ հասնի՝ անկարելի է որ կատարելապէս ուսուցանէ մեզ թէ մարդըն ինչ է : Եթէ մեր ծանօթութեանց միակ և հարկաւոր աղբիւրը լինէին շօչափել , տեսանել , լրուել , հոսուսել , ճաշակել , հոգերանութիւնն ալ բան մը պիտի չը կրնար սորվեցունել մարդուն վրայ : Այլ սակայն , մենք որ գործարանաց ձեռօք մեր շըր ջապատն եղող նիւթական առարկայները կը տեսնեմք , նոյնպէս մեք զմեղալ կը տեսնեմք , մեր հոգւոյն մէջ ինչ որ կը դառնայ՝ կ'իմանամք , ինչ շարժում , ինչ վտիտիսութիւն և ինչ դնացք որ կ'ունենամք կը գիտնամք : Մասնաւոր սյս կարողութիւնը , տարբեր ամենակին ՚ի զգայարանաց , որով մեր ներքին կենաց խելամուտ կը լինիմք՝ Գիտական կամ ներքին զգայարանք ըսուածն է : Փիլիսոփայն դիմանալու համար թէ մարդն ինչ է , ինչ կրնայ ընել և ինչ բանի կը յօժարի՝ այս զգայարանքին օգնութեան պէտք ունի , որ միակ վկայն է մեր խորհրդոց , գործոց և ամենածածուկ զգայմանց : Այս սու ամենայնիւ անցողակի կամ վեր ՚ի վերոց տեսութիւնն ալ բաւական չ'է , ծանր և խորամուխ հետաքննութիւն պէտք է գործածել . Փոքր ճարտարութիւն չէ երթալ մեր ներքին կենաց բուն կեղրնը նոտիլ , բաղադրեալ երկոյթներ մի առմի իրարմէ զատել , աւելորդը նետել հարկաւորը ձեռք առնուլ , մէկ կողմանէ կորսուելու վրայ . և

դողները յիշողութեամբ բռնել՝ և մարդկային խոր-  
հրդոց ամենածածուկ և ամենանուրը մասերը գի-  
տակցութեան առջև բերել՝ բնական գիտութեանց  
մէջ զգալի փորձառութիւնն ի՞նչ պաշտօն որ ունի՝  
և ի՞նչ ճշդութեամբ որ կը կատարուի, անկէ շատ  
աւելի ճշդութեամբ պէտք է կատարուի իմանալի  
այս փորձառութիւնը մեր մոաւրական և բարոյ-  
ական կեանքը հետազոտելու ժամանակ :

Դ. Սուսաննէն՝ էկտակտուննան : Գիտնալ պէտք է՝  
որ հոգւոյն վրայ գիտութիւն տուող առաջին այս  
դործիքը, այսինքն է՝ գիտակցութիւնը, երադու-  
թեան և ապահովութեան կողմանէ արտաքին ըլլ-  
գայարանքներէ վար չի մնար : Նիւթամոլներ կան  
որ հոգեբանական եղելութեանց կարևորութիւն  
չեն տար, այլ նիւթական կարգի եղելութեանց  
միայն կապուիլ կ'ուզեն իբրև միակ դրական միջոց :  
Սակայն ովկ կրնայ կասկածիլ թէ չ'կայ վիշտ կամ  
ուրախութիւն, դաղախար, դատումն վափադ,  
նկատումն, գործողութիւն : Ուտքս կամ ձեռքս քա-  
րի զարկած ատենս ապահով կըլլամ՝ թէ քարը դո-  
յութիւն ունի, ի՞նչու ապահով չ'ըլլամ՝ թէ զգա-  
ցած ցաւս ալ գոյութիւն ունի : Կրնամ հասկնալ  
թէ երկու անդամ երկու չորսի հաւասար են . եթէ  
այս դաղախարի եղելութիւնը միանդամայն պայծառ  
չ'երկու գիտակցութեանն՝ ի՞նչպէս են Ուսողութեան  
առածները երկրաչափին համար :

Մանաւանդ թէ գիտակցութեան վկայութիւնը  
առարկութիւն չ'վերցներ, ի՞նչպէս ընդհակառակն  
կը պատահէ զգայարանաց վկայութեան : Ակեպ-  
տիկեաններուն դժուար եղած էր հաւատալ՝ թէ  
կարելի՞ բան է որ իմացական էակը ի՞նքիրմէ դուրս

ելլէ, և իրեն համար գլխովին օտար եղող արտաքին  
առարկայ մը երթայ ըմբռնէ : Ներքին զգայութեան  
մեղ ծանօթութիւն հաղորդելուն մէջ այս դժուա-  
րութիւնը չ'կայ, զի յայսմ ենթակայ և առարկայ ի-  
միասին են, ճանչողն ու ճանչցուողն ալ հոգին է :

Ա. Ա. և, նկատելի է՝ որ մարդկային բնութիւնն  
յիւրաքանչիւր մարդիկ կատարեալ ամբողջութիւն  
է : որքան տարբեր լինին իրարմէ գիտնականն և  
տղէտն, լէիրնիտոսն և կովարածը, քաղաքակիրթ  
մարդն և վայրենին, մտաւոր կարողութեանց կող-  
մանէ անթերի եղողն և խերքը պակաս դժբաղդը,  
սակայն, մարդ ըլլանին ճանչնող անյեղի նկարա-  
գիրը ամենուն վրայ մի և նոյն է, այնպէս որ փիփ-  
սոփայն ինքինք հետազոտելով կ'ուսանի ոչ եւր  
յատուկ խորհրդածութիւնը միայն, և իւր անձին  
մասնաւոր նշանները, այլ և ընդ հանուրները՝ և այ-  
նու համօրէն մարդկային բնութիւնը . և սխալ թէ  
ուղեղ, թերի՞ թէ կատարեալէ գիտողութիւնը, կը  
բազդատէ իր ներքին օրինակին հետ և կը հասկնայ :  
Այս կերպով շատ մը մնալար դրութիւններ՝ որ երբեմն  
իբրև մարդը բացատրող վերջին բառ շատ յարգի  
էին՝ գիտակցութեան ատեանն ելլելնուն պէս ամօ-  
թահար անհետացան :

Հոգեբանութիւն՝ յեցեալ մարդկային բնու-  
թեան ուղղակի հետազոտութեան վրայ՝ եղել գի-  
տութիւն այնքան դրական, որքան են բնական  
պատմութիւնն և բնական գիտութիւններ, զի թէ  
վճռաբար որոշ է առարկայն և թէ մեթօնն ապա-  
հով : մանաւանդ առաւելութիւն մ'ալ ունի, որ  
հետազոտողն առարկայն և գործիքը միշտ հետն ունի  
ուր որ երթայ, մինչդեռ ուրիշ գիտութեանց հա-

մար այնպէս չէ . զի , օրինակի համար , տարրալու ծութիւն , կենդանաբանութիւն , աստղաբաշխութիւն որքան գժուարութիւն ունին , և ո՞րքան տարիներ սպասելու ենք՝ որ հետազօտութեան նիւթն ու գործիքն մեկտեղ դան :

Ե . Ներէն հետազտութեան դժուարութէնէն : Սակայն , մարդկային հոգին կանոնաւորապէս ուսանելը շատ փափուկ է , հետազուտելու ատեն ամէն քայլափոխի մէջ անհնարին գժուարութիւններ կ'ելլեն առջևնիս : Արդէն ծնած վայրկեաններէս կ'սկսիմք արտորալյափտակութելու արտաքին բնութենէ . ասիկայ տընկակից բնադրում մ'է , զոր սովորութիւնն աւելի ևս կը մշակէ : Ասկէց զատ մեր ծանօթութեան առարկայ եղելութիւններն ամենքը միասնաբար կը ներկայանան , և քիչ ու թեթև կը տպաւորեն . այս պարագայն ալ պատճառ կըլլայ՝ որ կամ չենք գիտեր մեր ներսն անցածը և կամ սխալ կը գիտեմք : Վերջապէս , մեր հակամիութեանց և դաշլափարաց առաջին դարգացումն անանկ կանուխ և այնքան փափուկ հասակէ կ'սկսի՝ որ ինք իւր վրայ տեղեակ չ'եղող խորհրդածութիւննիս ինքինք ճանչնալու ոչ կարողութիւն կ'ունենայ և ոչ կամք : Աւելի ևս դժբաղագութիւն մ'ալ այս է՝ որ հասակնիս առնելնէս ետքն ալ գժուարութիւնները չեն պակսիր , գժուարութիւններ՝ որ յառաջ կուգան կանխակալ սովորութիւններէ , գրութենէ , կիրքերէ , և բովանդակասել իմացականութեան անկատարութէնէ : Ասոր համար է՝ որ սկիզբէն ՚ի վեր մարդուն վրայ գիտութիւնը շատ ծանր քայլ առած է գէպ ՚ի յառաջադրմանութիւն , տղիտութենէ աւելի մոլորութիւնը պատճառ եղած է ճանապարհին երկայնութեան :

Գլուխ Բ.

Կարողութիւն հոգւոյ . — Զգ այականութիւն . Խմացականութիւն . — Կամք :

Ա . Դաստիարակութէն երեսունից գիտականութէն : Գիտակցութեան երևոյթները ճանչելու և դասաւորելու համար այնքան միտք աշխատցնելու հարկ չ'կայ , ամէն վայրկեան մեր ներսն անցածը վերլուծել բաւական է :

Օրինակի համար . ահաւասիկ սա դիրքը՝ որ դեռ երեկ տպուեր է , և ես տեսած չ'եմ . եթէ ձեռքս չ'երկնցունեմ , չ'առնեմ , չ'բանամ , և բանալէս վերջ գրածին վրայ չը նայիմ , գիրքն ի՞նչ բանի վրայ կը գրէ՝ չ'եմ գիտնար չ Բայց բանալ նայելու պէս՝ գրերուն և բառերուն տեսքը աչքիս կը զարնէ , գրող հեղինակին խորհուրդը կ'ըմբռնեմ , կըդատեմ՝ թէ այս ինչ տեղ իրաւունք ունի , այն ինչ տեղ կը սխալի , գրուածին առ թիւ ուրիշ բիւրաւոր բաներ միտքս կուգան , կանխաւ տեսած մէկ պատկերս , պտտած մէկ տեղս , մեռած կամ քովս ներկայ չ'եղող մի բարեկամս ։ Վերջապէս գրքին մէկ ծայրէն միւսը երթալու ժամանակս երբեմն կը հաճիմ , երբեմն կը տհաճիմ , մերթ կ'զմայլիմ , մերթ կը զզուիմ , երբեմն կը զարմանամ և երբեմն կը բարկանամ : Գիրք մը կարդալու ատեն իմ ներսն անցած այս եղելութիւններէն գիտակցութեան երևոյթներն ի՞նչ են և ի՞նչ դասաւորութիւն ունին կրնամ հասկցնել :

Զեռքս երկնցուցի որ դիրքն առնեմ, բանամ, աչքս վրան հաստատեմ, կատիք եղելութիւններ են : Երեսներուն վրայ տպեալ զ բերը տեսնել, զ բողին մոտածութեան հետևել, ճշմարիտ են ըսածները թէ մոյար վրան դատաստան ընել, ի աստիճան եղելութիւններ են : Գրուածքին վրայ զմայլել կամ զզուել, սիրել, զարմանալ, սրտնեղիլ ասոնք ալ զ աստիճան եղելութիւններ են : Գիտակցութեան բոլոր երեւոյթներն այս երեք գլխաւորներն են՝ որոց ներքեւ ուրիշ եղելութիւններ ալ կան . ինչպէս՝ զգայական եղելութեանց ներք և կ'երթան ուրախութիւն և տրտմութիւն, սէր և ատելութիւն, երկիւղ և ակնկալութիւն յուսոյ, և այլ ամեն սիրտ գրգռողյօժարութիւններ և յուղմունքներ : Ի աստիճան եղելութիւններ են դաղափար, դատումն, յիշողութիւն . մակարերութիւն և մտաւորական յղացումներ, զերջապէս համարական եղելութիւններ են մեր դիտաւորութիւններն և գործերն և այլն :

Այս երեք սեռի եղելութիւններն ալ որոշակի տարբեր են իրարմէ, որոց թէպէտ ինչ բան ըլլալը հասկցնել դժուար կ'ըլլայ, բայց գիտակցութիւնը կ'ըմբռնէ, ինչպէս որ աչքերնիս գոյները և ականջնիս ձայները կ'ըմբռնեն :

Զգացումն իմացումն ըլլալը ով չի հասկնար : Այս այնքան ճշմարիտ է՝ որ երես սրտերնիս չափաղանց յուղուած ըլլայ՝ ինչպէս կը պատահի բարկութեան ժամանակ, մոքերնիս դատաստան չը կրնար ընել և չկրնար մակարերել, ինքզինքնիս անդամ չենք գիտնար . Մեր կենաց բիւր դիպուածոց մէջ տեմուած է զգացման և իմացման կամ խորհրդութաղիսումք : Ասոր համար է՝ որ սովորութիւնը կը մոռցնէ նեղութիւնները, կը մեռցնէ հեշտութիւն-

ները, և բան մը՝ որ երբեմն շատ խիստ կուղար մեղ : Ժամանակ անցնելով կ'ընտելանայ մեղ, և անտարբեր կ'ըլլամք վրան : Ընդ հակառակն կրկին և կրկին գործածութիւնը մեր գաղափարները մոքերնուամէջ աւելի որոշ կ'ընէ և խորապէս կը տպաւորէ : Կամաւորական եղելութիւններն ալ դժուարչեն հասկնալը :

Զգալ և մոտածել մեր ուղելին կախեալ չեն . բայց կամելը մեր իշխանութեան ներքնէ և Մարդինչպէս ուղել այնպէս չի կրնար մոտածել, օրինակի համար . չենք կրնար մոտածել՝ թէ երկուք և երկուք հաւասար են հնդի, բոլորակի շառաւիղներ հաւասար չ'են . երեւոյթք պատճառ չ'ունին, առաքինութիւնը խոտելի է . մոլութիւնը պատուելի է . Ուրիշ ասոնց նման բիւրաւոր պարագայներ կան, յորս ճշմարտութիւնը դէմյանդիման է, կը պաշարէ զմեղ, կը հնաղանդեցնէ ակամայ . մինչդեռ ուրիշ շատ անդամ խորհրդածութիւննիս մոքերնէս անդամ կը փախչի : Քիչ անդամ կը պատահի՝ որ երկրաչափ մը խնդիր մը լուծել ուղել ու չը կրնայ : Զգացման համար ալ այսպէս իմանալու ենք, ուղեմք չ'ուղեմք կ'զգամք, մեր ուղելովը չեմք կրնար ուրախանալ և կամ հեշտանալ, ինչպէս որ կրնամք մեր ուղելովը խօսիլ կամ լուել :

Բ . Կարողունեւու հոգու, : Հոգւոյն գործողութեանց այս վերլուծութենէ սա կը հետեւի՝ թէ ամէն եղելութիւն թէ՝ ի ներքս ՚ի մեղ ըլլայ և թէ՝ արտաքոյ ՚ի մէնչ առանց պատճառի չէ, Ուրեմն, հոգին՝ որ թատրն է այսքան երեւութից, և կը կատարէ այսքան զանազան գործեր, պետք է հաւատամք :

թէ ներդործական ոյժեր ունի, որոնցմէ այս դործերն յառաջ կուդան իրըև արդիւնք ՚ի պատճառէ: Այս ոյժերը կը բառուին կարողութիւնք, և այսպէս կը սահմանուին. զօրութիւնք՝ որ տպաւորութիւններ կը կրեն և դործեր կը կատարեն:

Գ. Կարողութիւն էնաուն ՚նշունք էլ հաստատուի: Բնախօսը մարմնոց յատկութիւնը համարալու համար ինչ ընթացք որ կը բռնէ՝ նոյնը կ'ընէ փելիստիայն ալ: Բնախօսն երբ կը տեսնէ՝ որ այս ինչ մարմնն ուրիշն վրայ աղդեց կամ ուրիշ մարմնոյ ներկայութենէն մասնաւոր վիճակ մը կրեց, կը դատէ թէ այս մարմններն իրենց մէջ առընչական յատկութիւններ ունին: Նոյնպէս ալ վիթիլստիայն երբ կը փորձէ՝ թէ հոգին կը սիրէ, կը մուտածէ, կը մակաբերէ, ապահով կը լինի՝ թէ սա կարողութիւն ունի սիրելոյ, մտածելոյ, մակաբերելոյ և այլն: Բայց զգալի փորձառութեան և իմանալոյն մէջ գլխաւոր տարրերութիւն մը կայ: Բնախօսը մարմնոց յատկութիւնը չտեսներ, երեսոյթներէն կը հետևցնէ, իրեն համար արդիւնքը ծանօթ է՝ իսկ պատճառն անծանօթ: Եթէ, օրինակի համար, տեսաւ՝ որ մագնիսն երկաթը իրեն քաշեց, չ'կրնար պատճառ մը չ'տալ այս եղելութեան, եթէ այս պատճառին մասնաւոր անուն մը տայ, այնքան անվտան կըլլայ, որ կը վարանի թէ արդեօք ելքքտրականութիւն է ըսէ՝ թէ ուրիշ դրութիւն մը ենթադրէ: Իսկ բարոյական կարդին մէջ պատճառ և արդիւնք փոխադարձաբար զիբարցոյ կուտան, տեսնելու կարողութեան դոյսութիւնը իւր դործերէն չ'ենք եղբակացներ, այլ ներքին զգայութեան ուղղակի և յանկարծ ըմբռմամբն

երկու եղբերը, պատճառ և արդիւնք, միանդամայն կ'ըմբռնենք: Մասածելու ատենս ոչ միայն դիտակի ցութիւն ունիմ կամքիս վրայ, այլ մէկ հայեցուածքով կամ յանկարծակի՝ մոտածող և ուղղող պատճառն ովէ՝ դիտեմ, այսինքն ԵՍ կամ ԵՍՈՒԹԻՒՆ:

Գ. Հոգւոյն կարողութեաներն երեւ են: Որովհետեւ հոգւոյն բոլոր գործողութիւնները կը բաժնուին ՚ի զգալի եղելութիւնս կամ ՚ի շացնոնս, յիմացական եղելութիւնս կամ ՚ի բոհութրու, ՚ի կամաւոր եղելութիւնս կամ ՚ի հործո: վասն որոյ հոգին ալ երկքարը բական կարողութիւններունի: Զնայականութեան կամկարողութիւնները, իմացականութեան կամ կարողութիւն դիտելոյ, կամ կարողութիւն դործելոյ:

Քնակիլաք հոգւոյն բոլոր կարողութիւնները մէկ բան կը համարէր. — այլեայլութիւն զգայականութեան: կ'ըսէր՝ թէ յառաջ կ'զգամք. այս վիճակնաւ կամ առաջն այս տպաւորութիւնը ծաւալելով կ'ըլլայ ուշագրութիւն, բաղդատառութիւն, դատումն, խորհրդածութիւն, իմաստամիրութիւն, ցանկութիւն, կամք. երբ ըսել կ'ուզեր՝ թէ զգացողութիւնը ցորենոյ հատի պէս է, որ աղալոր կ'ըլլայ ալիւր, խմոր, հաց, կարկանդակ և այլն: Բայց չ'եմ հասկնար՝ թէ ինչպէս չ'իմացաւ՝ քնակիլաք որ կամք և փափաք մէկ բան չեն, որովհետեւ շատ անդամ երարու հետ կը կոռուին երկուքը. և ի՞նչպէս չ'իմացաւ թէ զգալը խորհել չէ, որովհետեւ խորհուրդը զգայաւանքներէ վեր կրնայ բարձրանալ: Ուրիշ փելիստիայներ թէպէտեւ զգալ և դործել իրարմէ կը տարբերեն, բայց իմացականութիւնը կը մուռնան: Այս վերջիններուն նայելով՝ զաղախարները զգաց-

մունքներ են, որք կամքի ձեռօք այլ և այլ կ'ըլլան։  
Այս ալ Քօնտիյլաքի կարծիքն պակաս մղար չ'է։  
Հոգւոյն, ինչպէս գործերը նոյնպէս և կարուցութիւնները տարբեր են իրարմէ, խորհուրդը կամք չ'է, կամքը գուացումն չ'է, զգացումն խորհուրդ և կամք չ'է։ Այսու ամենայնիւ շատ պինդ կապակցութիւն կայ մէջերնին, երբեմն խորհուրդը զմեղ կը յափշտակէ, ինչպէս խորին մտածութեան մէջ կը պատսհէ. երբեմն զգացմունքը՝ ինչպէս կիրք ելածատեննիս, երբեմն կամքերնիս՝ երբ ամենայն զօրութեամբ արդելքի մը դէմկը կուուիմք, բայց այս ամէն դէպքերուն մէջ ալ հոգին միշտ ներկայ է և կենաց մէջ չ'կայ պարագայ մը՝ յորում հոգին չ'զգայ, չ'գիտնայ և չ'դործէ մէկ աստիճան. Ասկէց կը հետեւի թէ մեր կարողութիւնները փոփոխակի իրարմէ կախումն ունին և դէմ առ դէմ երերաց կը գործեն։ Զգայականութիւնը տեսակ տեսակ կերպեր կը բերէ իմացականութեան առջև, իմացականութիւնն ալ զգայականութեան, և երկուքը մէկէն կամքին վրայ կը ծանրանան. կամքը երբեմն կ'ընդդիմանայ, երբեմն ոյժ կուտայ անոնց. այս խաղըն հետեւանքն է մարդկային վախճանը դլուխ հանել. զգայականութիւնը մեղ կը մղէ դէպ 'ի մեր վախճանը, իմացականութիւնը կ'իմացունէ բուն վախճաննիս, կամքն ալ ճամբայ կը հանէ երթալու։



ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս զգայականութեան, Զգայութեան, Զգացմանց, Բնազմանց, Հակամիտութեանց, Կրից։

Մարդկային հոգւոյ կարողութիւնները մէջերնին կապակցութիւն ունին. 'ի կանուխ տիոց զգայականութիւնն սկսելուն պէս իմացականութիւն և կամքանոր կ'ընկերանան։ Մանկութեան ժամանակ գաղափարաց շրջանակը շատ նեղ և կամքերնիս անհաստատ կ'ըլլայ, բայց հոգին դիտէ ուրախանանալ, արտմիլ, ատել, բարկանալ, երկնչիլ, և ասոնց պէս գրդումունքներ կրել։

Զգայականութեան ամենէն առաջին եղելութիւնը զգայութիւնն է, այսինքն այն եղելութիւնը՝ որ արտաքին առարկայն մեր գործարանաց վրայ ներգործելուն պէս մեր ներսը կ'անցնի։

Ա. ՎԵՐԱԴԱՐԵՆԻՆ. ՎԵՐԱԴԱՐԵՆԻՆ : Զգայութիւնը հինդ որոշ կերպերով արտաքին առարկայից հետ հոգւոյն յարաբերութիւն ընել կուտայ. հինդ կերպին փոխարէն ալ հինդ զգայարանք ունինք. շշագիտէն, բեսանէլէն, հորորէլէն, լելէն, հաշոնէլէն։ Շոշափելուք՝ մարմնոց դիմահարութիւնը, ծաւալը, ձեն և բարեխառնութիւնը կ'իմանամք. տեսանելեօք՝ մարմնոց գոյնը կամ գունաւորեալ ծաւալը. լսելեօք՝ ձայն. հոտոտելեօք՝ հոտ, ճաշակելեօք՝ համ կառնեմք։

Այս տարբեր զգայութիւններն ամէն անդամ բաժանաբար տեղի չեն ունենար, այլ երբեմն միան դամայն կը գործեն և վոտիոխակի կ'ընդունին մարմնոց զդալի հանգամանաց տպաւորութիւնը. ինչպէս՝ անթափանցկութիւն, ձե, հեռաւորութիւն աշբով ալ կ'իմանամք, աչքին իմացածներն ականչով, հոտոտելեաց իմացածները ճաշակելոք ալ կ'իմանամք։ Հեռուանց մարմին մը տեսնելով՝ կ'իմանամք թէ անթափանցիկ կամ դիմահարէ, զանգակին ձայնն առնելով կ'իմանամք՝ թէ մօտ կամ հեռու ենք, պոտող մը կերած ատեննիս անոր ձեւ կ'իմանամք։ Ոչ թէ լսելիքը հեռաւորութիւն կ'իմանայ, կամ տեսանիքը մարմնոց ծանրութիւնը կը կշռէ, կամ շշափելիքը դոյն կամ ձայն կը շշափէ. այլ հոդին ձայն լսելուն պէս՝ ձայնէն մինչև իւր կեցած տեղը ի՞նչ հեռաւորութիւն կայ՝ կը դատէ, գունաւոր բան մը տեսնելուն պէս կը դատէ՝ թէ տեսածը պինդ կամ կակուղ բան մի եր. մակերեւոյթ մը շշափած ատեն կը դատէ՝ թէ ի՞նչ դոյն կայ վրան։ Վերլուծած այս եղելութիւններնուս մէջ երկու տարերք կան. մին իմացական՝ և միւսն զգայական. և առաջինն երկրորդին կը տիրէ, դի երկուքին վերջնական արդիւնքն ըմբռնումն է։

Ըմբռնումներ կան, զոր մէն մի զգայարանք իրենք կուտան յատկապէս. ըմբռնումներ ալ կան, զոր շատ մը զգայարանք՝ օժանդակ ունենալով յիշողութիւնը, մեկտեղ դարով կուտան. Առաջինք բնական կամ այլ բնական ըմբռնումնք կ'ըսուին, երկրորդներն ալ ստոցական կամ առլուստնեամբ ըմբռնումնք կ'ըսուին. պատճենին զգայարանով դարձնական ընկերացող դատումներ են՝ քան թէ ըմբռնումնք։

զգայարանաց վերագրուած յանցանքները հասարակութեան դատման յանցանք են. Զգայարանք՝ իւրաքանչիւր յիւրում կարգի՝ չեն խաբեր. միտքն է որ կը խաբուի, զգայարանաց ըսածը լաւ չ'հակնալով։

Բ. Զգացնան. բնագրումնան. հակադրութեան, իւր+ զգայականութիւնէ կախեալ մի միայն եղելութիւն զգայութիւնը չէ, մեր հոգւոյն մէջ ուրիշ շատ մը եղելութիւններ ալ կան՝ որոց չ'արմարիլ չ'այսութիւնն անունը տալ, ինչպէս են զգացումն համեմատութեան, ներդաշնակութեան, կարգի, գեղեցիկութեան, զգացումն բարույ և չարի, պարտեաց և առաքինութեան, զգացումն մեծարանաց, ակնածութեան, սիրոյ, ատելութեան, երկիւղի, յուսոյ և սոնցմէ ուրիշ կարգ մը եղելութիւններ ալ կան, որոց մէջ զգայականութիւնը զանազան կերպարանք կ'առնէ։ Երբ հոդին հաճոյական առարկայի մը պատճէ՝ իւ հեշտանայ, իւ սիրէ, իւ գահածէ ունենալ, իւ յասաց, չունենալուն վրայ անհանդիս կ'ըլլայ, իսկ երբ անհաճոյ առարկայի մը պատահի՝ իւ նեշտէ, իւ զարէ, իւ մրգէ, իւ վախաց, կամ աղաւած ըլլալ կ'ուզէ. Երբ աղէկ բան մը ձեռքք բերել կամ չ'սիրած մէկ բանը հեռացունել հարկ ըլլայ՝ հոդին ինքնիրեն բունութիւն կ'ընէ, կը զայրանայ, կը բորբռքի, ասկէց առաջ կուգայ, յանդինառնեան, յալունիւն, բարկութիւն։ Հաճոյ կամ անհաճոյ առարկայից այս հանդիպութը հոգւոյն մէջ հակահարուած մը յառաջ կը բերէ. ընդունած տպաւորութեան համեմատ կը յուզուի հոդին, իւր ըստած եղելութիւններն են ասոնք. այս կիրերէն զատ կան նաև անօն, նախանձ, արդումն, զարման+ և այլ ասոնց նմաններ.

բայց առաջնորդ տակ կ'երթան ,  
— Աօնը , կըսէ Պօսիւէ , յանցանքի կամ բնական  
թերութեան համար ուրիշն անարդանաց ենթակայ  
լինելու տրտմութիւնը կամ երկիւղն է , զոր կը փա-  
փագիմք ծած կել կամ զմեղ արդարացնել : Նախանց՝  
ուրիշն բարւոյն վրայ տրտմելն է , և վախնալն՝ թէ  
այլըց ունենալովն մենք կը զրկուիմք , կամ յուսա-  
հատիլ՝ թէ քանի որ ուրիշն ձեռք է՝ մենք չեմք կը ը-  
նար ունենալ , և անոր դէմ ատելութիւն զդալ՝  
Մըս-ք . է , մեր սրտին այն վիճակը՝ զոր կ'ունենամք  
երբ կը տեսնեմք՝ որ ուրիշ մ' անանկ աղէկ ու մեծ  
դործեր կը դործէ , զորս չեմք յուսար՝ թէ մենք և ս  
պիտի կրնամք ընել , կամ չեմք համարձակիր վստա-  
հելու թէ պիտի ընենք : Զարձնաւ կամ հիացո՞ն է այն՝  
որ կը պատահի մեր վրայ , մէկ մը՝ երբ կ'ուրախա-  
նանք արտաքոյ կարդի բան մը տեսնելով , և կը հե-  
տաքրքրուիմք անոր պատճառը գիտնալ , մէկ մ'ալ՝  
երբ կը վախնամք նոր տեսած առարկայնելուս  
ներքև ծածկեալ վտանգ մը երևակայելով , որոյ  
պատճառը չ'զիտնալով անշարժ և անդործ կ'մնամք .  
այս վերջննն է հիանալ ըստածը : Ուրեմն մարդուս  
սրտին մէջ գիտաւոր կիրքեր կան , յորոց միւսներն ալ  
կախումն կ'ունենան իրեւ երկրորդական . երբ վեր-  
լուծութիւնը վերջին ծայրն հասնի , վերջին և միակ  
անբաժանելի և իսկապէս պարզ կիրքերն կը լինին ,  
հեշտութեան և ցառ . «էր և առեւս-թէւն : Միւս բոլոր  
կիրքերն յօդուածոյ են , և զդայականութեան և  
իմացականութեան վտփոխակի գործերը , օրինակի  
համար . ինչ է յոյսը . — հաւատած՝ թէ փափաքուած  
բանը ձեռք պիտի դայ : Ի՞նչ է երկիւղն . — հաւա-  
տալ՝ թէ կասկածուած չարիքը մօտեցաւ : Ինչպէս

յայտնի է , յայսմ զդացումն և իմացումն միանգա-  
մայն կայ . զդացման հետ ըմբոնումն և դատումն  
կայ , դատումն ըմբոնումը խթեր է :

Ամեն մարդ դիտէ՝ թէ ինչ անձուկ կապակ-  
ցութիւն կայ սիրոյ և հեշտութեան մէջ : Չսիրած-  
առարկայնիս մեղ բնաւ հեշտութիւն չ'պատճառեր ,  
և այն որ հեշտութիւն չ'պատճառեր՝ բնաւ չեմք  
սիրեր : Աերը նոյն իսկ հիմն է զդայականութեան ,  
հոգւոյն բնական փափաքն և իրբ ձկուումն է դէպ  
՚ի բարիս՝ զոր Աստուած ստեղծեր է , և ցորքան կեն-  
դանին է պիտի հետեւի անոնց : Հեշտութիւնը ուրիշ  
բան չէ՝ այլ միայն պատահական կամ երկրորդա-  
կան երեսոյն , որոյ արդէքը ձեռք դալու բարեաց  
յարաբերութենէն կախեալ է : Արարին իմաստուն  
և բարերար կարգադրութեամք որոշեր է՝ որ առա-  
քինութիւն գործողը նոյն իսկ գործած ժամանակը  
գոհութիւն մը զդայ պրտին մէջ : Աստուած այս-  
քան մօտ մօտ գրեր է առաքինութիւնն ու անոր  
վարձքը . Բայց մարդուն վախճանը նոյն իսկ առա-  
քինութիւնն է՝ և ոչ թէ այն հաճցըն կամ գոհա-  
ցումը՝ որ գործոյն հետ կուգայ և կ'անցնի շուտով :  
Ասկէց յայտնի է՝ թէ ո՛քան սխալեր են այն ամեն  
փիփոփայք՝ որ հեշտութիւնը մարդուն վերջին  
վախճանը կը համարէին . մակերեսոյթին , արտաքին  
նշաննն սպատահականին կարեւորութիւն կուտա-  
յին . եռութիւնը կամ հիմք չէին վիտուեր : Այլ և  
ասկէց յայտնի է՝ թէ ո՛քան կ'ապահանեն իրենց  
հոգին այն մարդիկ՝ որ զդայարանաց գերի ըլլալով  
անձնատուր կը լինին գարշելի հեշտախսութեան , և  
վաղանցիկ թեթև ուրախութեան մը համար  
իրենց վախճանին յատուկ երջանկութիւնը կը  
վտանգեն :

Գ. Դաստիարակութիւն հակամիտութեանց ճարդիալին հոգուոյ ։  
Զգայականութիւնն առարկայց հետ , իբրև ընդ աղ-  
բերա իւր հեշտութեանց և ցաւոց , յարաբերութեան  
մէջ մոնելուն պէս՝ կարգ մը յօժարութիւններ  
երեան կ'ուգան՝ որ հինգ գիւմաւոր դասաւորու-  
թիւն ունին ։

Առաջիններն են մարմական հակամիտու-  
թիւնք կամ ախուժակի , որիմարմնէ յառաջ կուգան , և  
յայսմ հաւասար եմք անասնոյ , ինչպէս են քաղց ,  
ծարաւ ։ Երկրորդ՝ իմացական հակամիտութիւնք  
կամ գագագի , ինչպէս են փափագ ուսման կամ հետա-  
քրքրութիւն , փափագ իշխանութեան կամ հպար-  
տութիւն , սէր արուեստից և այլն ։

Երրորդ , անյիւննեա . ինչպէս են հայրական կամ  
որդիական գորով , բարեկամութիւն , սէր , հայրե-  
նասիրութիւն , երախտագիտութիւն , կարեկցու-  
թիւն .

Չորրորդ , բարոյական գիւղնունք . ինչպէս են սէր  
բարեկործութեան , հաճոյք խղճմտութեան , ցաւ  
խղճմտանքի և այլն :

Հինդերորդ , կը անկան գիւղնունք . ինչպէս է սէր  
առ Ասուած , բարեպաշտութիւն և այլն :

Այս հակամիտութեանց ոմանք ընդուից են ,  
հոդին ծնած ատեն հետ կը կըէ , ոմանք ալ սուցական :

Ծնդ ակից կամ բնական հակամիտութիւնները  
մարդուն կազմուածքէն կախեալ են , և կ'ունենան  
ամեն մարդիկ ինչ ազգէ և աշխարհէ ալ լինին :  
Ծնած ժամանակնէն կ'սկսին , յաճեցեալ հասակի  
կը զարդանան , մինչև ՚ի խոր ծերութիւն կը մնան :

Այս հակամիտութեանց պատճառ և բացա-  
րութիւնն չը կրնար արուել . եթէ մէկը հարցնէ թէ

ինչու ունինք այս հակամիտութիւնները . պատաս-  
խաննիս այս է թէ՝ վասնղի այնպէս ստեղծուեր եմք ,  
կամքն այս հակամիտութիւնները ոչ այնքան կրնայ  
խափանել՝ որքան բռնել , չափաւ որել և խոտորմանց  
առջևն առնել :

Այս նախնական կամ բնածին հակամիտու-  
թեանց կարգէն կրնան համարուիլ հետաքրքրու-  
թիւն , հպարտութիւն , համակրութիւն կամ սէր առ  
նմանիս ։ Եւ յիրաւի ամեն մարդ ինք իր մէջ ունի  
ճշմարտութեան սէրը , և բան սորվելու փափաքը  
բիւր անդամ ըսել կուտայ մեզ ամենուու ՚ի կանուին  
հասակէ լուլէն , լուս . Ոմէն մարդ՝ ի կայսերէ սկսեալ՝  
յորոյ ՚իձեռու են հպատակաց կեանքն ու բաղդն՝ մինչեւ  
յետին հողամշակն՝ որ մատներով հողը կը փշրէ և  
տղայք անդամ՝ որ գեռ յօրորոցի են , առ հասա-  
րակ իշխելու փափագն ունին ։ Զ'կայ մարդ՝ որ հա-  
ճոյք չ'զգայ իւր նմանեաց հետ ապրելէ , և ով է  
այն՝ որ չը տիրիր և չը նեղուիր եթէ առանձին մնայ ։  
Բնածին այս հակամիտութիւններէն յառաջ եկան  
գիտութիւնք , յառաջադիմեցին մարդիկ , բար-  
դաւաճեցան արուեստք , նուաճեցան բնութիւն ,  
և հնադանդեցաւ մարդկային պիտոյից . այս հակա-  
միտութիւնները վերջապէս յօրինեցին մարդկային  
քաղաքավարութիւնը և զմարդիկ իրար միացնող  
օրէնտրութիւնը ։ Ստացական ըսուած հակամի-  
տութիւններուն առարկային են ընդհանրապէս այն  
բաները՝ որ բնական կամ ընդակից հակամիտու-  
թիւնները կը գոհայնեն և ձեռք բերելու դիւրու-  
թիւն կ'ուտան : Օրինակի համար , ՚ի ծնէ յօժարու-  
թիւն չ'ունիմք հարստութեան , մեր բարոյական  
բնութիւնն ալ ոսկի արծաթ ըսպւած մետաղներէն

մեծ ծանրութեամբ ունենալու կարևորութիւն  
չըտար : Բայց որովհետեւ հարստութիւնն այնքան  
բազմադիմի վայելքներ կ'ապահովցնէ , յորոց աղքա-  
տը կը զրկուի , ուստի առաջ մեր պէտքերը գոհա-  
ցնելու համար հարկաւոր են ըսելով կ'ափախնք ձեռք  
բերել , վերջը ճշմարիտ բարիքի տեղ կը դնենք,  
մեր պէտքէն աւելի շահել կ'ուղենք . այս կերպով  
տակաւ առ տակաւ ագահութեան կիրքը կ'անի :  
Ուրեմն երկրորդական հակամիտութիւնները նախ  
կիններէն շատ տարբեր են , նախ՝ որ մարդկային  
կազմուածքին մէջ չ'կայ ստացականներուն արմատը ,  
այլ արտաքին կիրք են և դաղափարաց լծորդու-  
թենէ յառաջ կուգան : Երկրորդ՝ որ ընդհանրա-  
կան չեն , այլ մասնաւոր մէկ ազգի , ընտանիքի ,  
անհատի և ժամանակի յատուկ են , կրնամ ըսել  
տեղւոյ և վիճակի հետ ալյարաբերութիւն ունին :  
Ասոր համար է՝ որ ըստ ծագման նոյն և մի վախ-  
ճան և յօժարութիւն ունեցող մարդիկ ճաշակի և  
յօժարութեան կողմանէ այսքան կը տարբերին :

Դիտողութեան արժանի կէտ մը սա է՝ որ  
հոգւոյն կենաց հետ վերաբերութիւն ունեցող յօ-  
ժարութիւնները՝ ի բնէ անսպառ և անյագ են :  
Մենք կը կարծենք թէ ամեն մարդ ուղածը ձեռք  
բերեր է և գոհ է , բայց ոչ . որ փառասէրը լի-  
ոյնքան փառօք և պատով իւր իշխանութենէն  
կը կշտանայ . ո՞ր գիտուն լի ամէն իմաստութեամբ  
և պարդեօք հանճարոյ իւր գիտցածէն գոհ է :  
Խնչէս միտքը կամ իմացականութիւնը կը կրէ  
յինքեան անհունի դաղափարը , նոյնպէս ալ կար-  
ծես թէ զգայականութեան առաջին պիտոյքն ալ  
անհունն է , զի ոչ մի սահմանաւոր առարկայ կը

բաւէ լնուլ մեր հոգւոյն անքաւ դատարկութիւնը ,  
Այս բաներուն վրայ ո՛րքան լաւ ուշադրութիւն  
ընեմք , այնքան շուտ կը համոզակամբ՝ թէ մարդ-  
կութիւնն ի՞նչ բարձր վիճակ կ'ակնկալէ , և այս  
այժմու կեանքերնիս ո՛րքան ողբալի է :

Դ . — Յառաւ հակամիտութեան՝ : Սակայն , քանի  
որ դէպ ՚ի ճշմարտութիւնն և ՚ի բարին բնականա-  
պէս միտեալ եմք , ի՞նչ է պատճառը՝ որ հոգինս ս  
ողբալի դիւրութեամբ մոլութեան ամենէն ծայրերը  
կ'երթայ . ի՞նչն է՝ որ ճանչցած և սիրած բարիէն  
կը հեռանայ , և կը գործէ չարը՝ զրը չը սիրեր :  
Արդեօք համեստ յօժարութեանց քով յոսուի և մո-  
ւեկան հակամիտութիւններ ալ կան մեր հոգւոյն  
մէջ՝ որ կը թելագրեն միշտ կարգ և պարտք մոռ-  
նալ : Վերջապէս , ի՞նչ է այս խառնումն մեծութեան  
և ցածութեան , դիւցազնութեան և վատութեան ,  
որ զիտովին հիմն է մեր բնութեան , և կարծես կը  
նմանիմք չէնքի մը՝ որ կամ դեռ լինցած չէ , և կամ  
կործանած է : Մարդկային սրտի այս հիմնալի հա-  
կասութիւննը , որ հիմ իմաստասիրաց ալ մոտան-  
ջութիւն պատճառեց , Քրիստոնէական կրօնի ջա-  
տագովները կը համարեն՝ թէ սկզբնական անկման  
նշանն է :

Իմացականութիւն . — Ներքին զգայութիւն  
կամ գիտակցութիւն . — Արտաքին ըմբռու-  
նումն . — Բան :

Մարդկային հոգւոյ գործոց մէջ ամենէն կարե-  
ւորը խորհուրդն է . մի ընդհանուր բառ՝ որոյ ներքել  
կ'իմացուին դասումն, յիշողութիւն, մակարերու-  
թիւն, ըմբռնումն, ևս և գիտնոց գիտեր, արուես-  
տաւորի ճարտարութիւն, և մարդկային բոլոր հա-  
ւատքներ։ Որովհետև մարդս կը խորհի, ուրեմն խոր-  
հելու կարողութիւն ունի : Այս մի ևնոյն կարողու-  
թիւնն է՝ որ զանազան անուն առերէ . ինչպէս են,  
իմացականութիւնն, հասողութիւնն, բան :

Իմացականութեան պաշտօնը շատ է, և իրական  
պաշտօնն է՝ նախ ինքզինքը, իւր հոգին, և անոր  
ամեն վիճակներն ու գործերը ճանշնալ . ապա նիւ-  
թական աշխարհը, անհամար մարմնոց բազմութիւնն  
և անոնց զանազան հանդամանքներն և օրէնքները,  
հուսկ յետոյ մասնական և անցաւոր իրերէն վեր  
տիեզերական և անշարժելի ճշմարտութիւններն  
իմանալ, և գուշակել անսահման միջոց և ժամա-  
նակ, բացարձակ պատճառ և բացարձակ էութիւն,  
յաւիտենական կանոն համեմատութեանց, գեղեց-  
կութեան, արդարութեան, և ՚ի վերսց քան զամե-  
նայն ճշմարտութիւնն զիակն անհուն, կեդրոնն կա-  
տարելութեան և աղբիւրն էութեան, որ է Աստուած :

Այն կարողութիւնները, որոց ձեռօք հոգին ծանօ-  
թութեանց աէր կ'ըլլայ, ասնք են . գիտակցութիւնն,  
արդարութիւնն, բան, ուշադրութիւնն, բաղդադրութիւնն,  
վերացութիւնն, ընդհանուր ցուցութիւնն, իմաստուիրութիւնն, յիշութիւնն,  
երևակութիւնն :

Իմացականութիւնը, ՚ի ձեռն գիտակցութեան, ուր-  
ուածին ըմբռնումն և բանի՝ ճշմարտութեան գաղափար կ'ըն-  
դունի, և կը կաղմէ անոնց առաջին ճանաշմունք-  
ները :

՚ի ձեռն ուշադրութեան, բաղդադրութեան, վերացութեան,  
ընդհանուր ցուցութիւնն և իմաստուիրութեան կերպ կերպ կը գար-  
ցունէ և կը սփոռէ :

՚ի ձեռն յշխութեան կը պահէ ներսը, և ՚ի հարկին  
առջեւը կը բերէ . ՚ի ձեռն երևակցութեան կը մշակէ և  
կը յշխանայ այնպիսի գաղափարներ՝ որոց առարկայ-  
ները բնութեան մէջ չ'կան :

Ա . Գիտակցութիւնն էամ ներին ըմբռնութեան : Խօսեցանք  
արդէն՝ թէ գիտակցութիւնն այն կարողութիւնն է,  
որով մենք զմեղ կը գիտնամք, այսինքն կ'իմանամք  
նախ՝ մեր հոգւոյն վիճակներն և գործերը . երկրորդ-  
կարողութիւններն և մանաւանդ կամելց մշտնջե-  
նաւոր կարողութիւնը . երրորդ՝ մարդկային անձ-  
նաւորութիւնն և հիմնական ստորոգելիքները, որք  
են պարզութիւնն և նոյնութիւնն . Ասոնցմէ զատուրիչ  
շատ մը կարևոր գաղափարներ ալ՝ որ զգայականու-  
թենէ յառաջ չեն կրնար գալ, գիտակցութիւնն է որ  
կուտայ . ինչպէս՝ սորվեցնելով թէ մեր հոգին գոր-  
ծող է, պարհանակ գաղափար կուտայ . սորվեցունելով՝  
թէ սկիզբէն մինչեւ հիմա նոյնն ենք և չենք փոխուիր,  
նոյնութեան գաղափար կ'ուտայ . սորվեցունելով՝ թէ

վրայ ունեցած ծանօթութիւննիս ; և թէ նոյն ծանօթութիւնները ձեռք բերելու կարողութիւններնիս : Աբտաքին իրաց ծանօթութիւնը , որ այնքան սովորական եղելութիւնն է և ինչպէս կ'երևի այնքան ալպարզ , այն կէտերէն մէկն է սակայն՝ որոյ վրայ փիլիսոփայք շատ յոգնած են : Ոյս մասին հնարուած շատ մը գրութիւնները պիտի համառօտեմ հետեւալ կերպով :

Ուաջին . Դիմոկրետոս և անիէ առնելով Եպիկուրոս և Լուկրետիոս կը կարծէին՝ թէ մարմիններն ուրիշ միջոցով մեղ ծանօթ չ'են լինիր՝ բայց եթէ իրենց ներկայացուցած պատկերներով . այս կարծիքը մինչև վերջին ժամանակներս կուսակից ունեցաւ :

Երկրորդ . Մալպրանշ կը կարծէր թէ ասսուածային խմացականութիւնը կեցրոն կամ հոյելի է , որոյ մէջ ամէն բան կը տես սնեմք :

Երրորդ . Քօնտիկլաք կը կարծէր՝ թէ արտաքին առարկայնները մեղի համար ուրիշ բան չեն՝ այլ միայն մերյասուկ զգայութիւնը , որ հետզհետէ կը հանենք , կը հազուինք :

Չորրորդ . Սկովտական գպրոյը , որոյ զվասաւորն էր՝ Թովմաս Ռէյս , լաւ ձեռնարկութիւններով վերոյիշեալ ենթադրութիւնները հերքելով , կ'ըսէր՝ թէ ըմբռնումն կամ գաղափարք մասնաւոր մի կարողութեան կը վերաբերին :

Ոյս ամէն ենթադրութիւնները , բաց ՚ի թով մաս Ռէյտի ենթադրութենէն գիտակցութեան վկայութեան չ'են յարմարիր , և վտանգաւոր սկեպտականութեան ճանապարհ կը բանան . Որովհետեւ , եթէ մենք մեղէն մարմնոց վրայ ծանօթութիւն չենք

մենք մի եմք հույսեան գաղափար կուտայ : Գիտակացութեան վկայութիւնն առջի բերան մթին և չփոխ կ'ըլլայ՝ բայց հոգին քանի մը անգամ ինք իւր վրայ կամաւրապէս գառնալով՝ վկայութիւնը կը պարզուի և կը յատակի , այս անդրադարձը խորհրդածութիւն կամ ուշադրութեան գործն է գիտակցութեան ծանօթութիւնները որոշել և յատակել . հարկաւոր գործիքմէ՝ որ մարդուն վրայ գիտութիւն կ'ուտայ , զի ներքին կենաց ամենափքը մթութիւնքն անգամ կը բանոյ . Եւ որովհետեւ երբեմն կը պատահի որ ուշադրութիւնը մեր կենսական հանդամանաց ամբողջն առնելով՝ գիտելու տեղ՝ մէկ մասը միայն կառնէ , ասկէց յառաջ կուղան փիլիսոփայական մոլըրութիւնները :

Գիտակցութեան յատկութիւնն է՝ անփոփոխ կերպիւ ընկերանալ մոքին ուրիշ ամէն կարողութեանց՝ որ աւանձին առանձին պաշտօններ ունին : Կրնամզգական առանց ըմբռնելու , ըմբռնել առանց յիշելու , յիշել առանց երեակայելու , բայց չեմկըրնար զգալ , ըմբռնել , յիշել առանց գիտակցութիւն ունենալու՝ թէ զգացի , ըմբռնեցի , յիշեցի . և ոչ խակ գիտակցութիւն ունենալ առանց գիտնալու՝ թէ գիտակցութիւն ունեցայ այս ինչ գործը կատարելու ատեն : Փիլիսոփայներէն ումանք ասկէց իրաւամք հետևեցուցին՝ թէ գիտակցութիւնը մոքին մասնաւոր մէկ կարողութիւնը չէ՝ այլ նոյն ինքն բովանդակին է իմացական կենաց և ընդհանրական թէութիւնը ուրիշ ամէն կարողութեանց :

Բ . Արդրութիւն ըմբռնուածն : Արտաքին ըմբռնումն ըսելով փիլիսոփայք կը հասկնան՝ թէ արտաքին աշխարհի

կրնար ունենալ ով պիտի ըսէ մեղ՝ թէ մարմիններն ոչ  
միայն մեր գաղափարաց նմանն են , այլև կը թելա-  
դրեն իսկ մեր զգայութիւնը . նաև եթէ քօնակյալքի  
ըսածին պէս մարմիններն և մեր զգայարանքները  
միւնոյն բան են , ինչ տարբերութիւն կայ ուրեմն  
մեր և բնութեան մէջ , խորհրդոյ և առարկային մէջ ,  
հոգւոյ և նիւթոյ մէջ :

Ակովական դպրոցի վարդապետութիւնը թէ-  
պէտև ուղիղ , բայց պարզել և ամբողջայնել պէտք է :  
Ասոր համար քննեմք թէ իւրաքանչիւր զգայարանք  
իրենց համար ինչ ապացոյց ունին :

Չօշափելիքը , որ զգայարանաց մէջ ամենէն կա-  
րեռն է՝ կը ճանցնէ առանձինն մարմնոց դիմահա-  
րութիւնը , ծաւալք , ձևը , բարեխառնութիւնը . իսկ  
յիշողութեան ձեռօք կ'իմացունէ ձևոյ , ծաւալի ,  
դիմահարութեան , բարեխառնութեան աստիճան-  
ները , և մարմնոց հեռաւորութեան զանազան դիր-  
քը . վերջապէս իմաստասիրութեան կամ մակարե-  
րութեան ձեռօք տեղի կը բանայ աշաց՝ տեսանելի  
ձևերը գաղափարելու :

Տեսանելիքն , ըստ ինքեան , միայն գունա-  
ւորեալ ծաւալը կը ցուցնէ . սակայն օժանդակեալ ՚ի  
շօշափելեաց , ՚ի յիշողութենէ և ՚ի խելամտութենէ ,  
ասոր գործերն ալ կ'ընդարձակին :

Լսելիքն , ըստ ինքեան , ձայն միայն կ'իմացունէ .  
բայց ՚ի ձեռն շօշափելեաց և այլոց կարողութեանց  
ասոր ալ սահմանը մինչեւ յանորոշ մի եղանակ կ'ըն-  
դարձակի : Սա մոքին համար՝ անդին մէկ կարողու-  
թիւն է , և խօսքերն այս կարողութեան ձեռօք կը ը-  
նամք համինալ : Շաշակելիք և հոտոտելիք մամնոց  
վրայ գաղափար կուտան մեղ՝ հոտ և համ զգացու-  
նելով :

Մեր զգայարանաց կատարած պաշտօններէն  
կրնանք իմանալ՝ թէ նիւթական մարմնոց վրայ ո՞ր  
զգայարանքն է՝ որ առաջին գաղափարը կուտայ մեղը :  
Մարմին մը շատ յատկութիւններ կրնայ ունենալ ,  
զորա վիխանիայք կը բաժաննեն և կ'ըսեն առաջնակար-  
յատկութիւնք և երբորդական յատկութիւնք : Առաջ-  
նակարգ յատկութիւնք՝ առանց որոց մարմին մը  
չը կրնար գոյութիւնն ունենալ՝ մաքին համար ե-  
րեք են , գիմահարութիւն կամ անթափանցկութիւն ,  
ծաւալ կամ տարածութիւն , կերպարան կամ ձև :  
Երկրորդականյատկութիւնները կրնան զատ առնու-  
իլ մարմիններէն գոնէ մտքով , ինչպէս է գոյնը , որ  
թէև ընդհանուր որակութիւն մ' է , բայց սակայն  
կոյրերը չեն կրնար ունենալ , և այսու զգալի աշխար-  
հի վրայ գաղափար ունենալէ զրկուած չեն լինիք .  
ուրեմն զգայարանաց մէջ շօշափելիքն արտաքին  
մարմնոց գաղափարը տալու կողմանէ առաջինն է :

Սակայն , մարմին մը շօշափելեաց գաղած տաեն՝  
գործարանի վրայ եղած տպաւորութիւնը մինչեւ որ  
հոգւոյս չ'համնի , և դպրութեան երեսոյթն ալ կատարեալ  
թեանս մէջ , զգայութեան երեսոյթն ալ կատարեալ  
չ'ինքը : Ասկէց զատ՝ եթէ զգայութեան գործած  
տաենը ես ալ չ'գործեմ , կամ եթէ չ'իմանամ՝ թէ  
այն մարմինը որ զգացի ինձմէ գուրս օտար պատ-  
ճառ մ' է , մութ և շփոթ գաղափար միայն կ'ունե-  
նամ վրան : Ուրեմն , արտաքին մարմնոց վրայ ծանօ-  
թութիւնն ունենալու համար շօշափելեաց տպաւորիք  
միայն բաւական չէ , դիտակցութիւնն ալ պէտք է  
ընկերանայ , ինչպէս նաև կամքը կամ աղատու-  
թիւնը եւ պատճառի գաղափարը :

Գ. Բանը այն գերազանց կարողութիւնն  
է՝ որ անշարժելի ճշմարտութիւններ կ'բերէ մեզ, և  
առընչութիւն ընել կուտայ Աստուծոյ հետ: Բայց  
երբ կարդք գայ առաջին ժանօթութեանց կամ գա-  
զափարաց վրայ խօսելու՝ այն ատեն աւելի վայելուց  
յարմարութիւն կ'ունենամք այս մեծ կարողութեան  
վրայ մասնաւորապէս խօսելու:

ԳԼՈՒԽ Ե.

Գաղափարաց վրայ առ հասարակ: — Գա-  
սաւորութիւն գաղափարաց: — Նազումն  
գաղափարաց: — Այլ եւ այլ տեսութիւնք  
այս մասին:

Մեր հոգւոյն կարողութեանց վրայ տեղեկու-  
թիւն առնելնէս յետոյ՝ պէտք է սորվիմք նաև անոնց  
գործոց հետեւանքը, և մեր անոնցմով շահած ար-  
դիւնքները:

Իմացականութեան արդեանց մէջ՝ ամենէն ա-  
ռաջինն և ամենէն ընդհանուր և նախնագոյն եղե-  
լութիւնն է ժաղանքը, կամ որնոյն է՝ ծանօթութիւնն  
իւր ամենապարզ ձևին մէջ:

Ա. Զանառն պէսակ ժաղանքը: Այնքան տեսակ  
գաղափարներ կան՝ որքան էակ որ ստեղծերէ արա-  
րիչը: Ունիմք շնորհ գաղափարներ, կամ զգայարա-  
նաց ձեռուք ճանշցուած առարկայից գաղափարներ,  
ինչպէս են՝ մարմնները: Ունիմք ինուորի գաղափար-  
ներ կամ անմարմին առարկայից գաղափարներ,  
ինչպէս են՝ հոդի, Աստուած, և այն: Ունիմք բա-  
րյական գաղափարներ կամ բարոյ և չարի, մոլու-  
թեան և առաքինութեան և այն ծանօթութիւնն  
ներ: Առարկայից հանդամանաց տեսակէտով կ'ըլլան  
գաղափարք չէմբէր կամ սուսոր, սրու կամ անսոր, պայ-  
ծառ կամ մնին, չըբացեան կամ նահբացեան, ընդհանուր կամ

Համառար, հուստակն կամ անհարակն :

Բ . — Դաստիարակութեան քաղաքաբարաց : Առարկայներն նկատելով իրենց պատահականութենէն և հարկուութութենէն, անոնց գաղափարներն ալ կը բաժնուին ՚ի բացարձակ և յառաջական : Բացարձակ կը բառի այն գաղափարը՝ որոյ առարկայն հարկաւոր է կամ ըլ կրնար ինչ որ է այն չըլլալ : Առ ընչական գաղափարն է այն՝ որոյ առարկայն պատահական բան մ'է կամ կրնայ ըլլալ այնպէս ալ՝ ինչպէս որ չէ : Ահաւասիկ, նիւթական առարկայ մ'է ձեռքիս դիրքը . շօշափելլ կ'իմացունէ ինձ ասոր ծանրութիւնը և ծաւալը, աչքու կըտեսնէ դոյնը և երեսներուն վրայ սփռուած գրերը . տարակցոյ չունիմ՝ թէ սա գոյութիւն ունի : Սակայն, նոյն ժամանակ կրնամ մոտածել՝ թէ կրնար չկենալ այս դիրքը, և յորմէ հետեւ ասոր առանձին առանձին թերթերը մէկն իրար բերաւ միացոց, անտի և այսր հարիւր անդամ պատռուած կամ այրուած կրնար ըլլալ, եթէ այնպէս ըլլար չպիտի զարմանայի : Արդ, այս գրքին գաղափարն առարկայ ունի այնպիսի բան՝ որ կրնար ալ չըլլալ, բան մը որ պատահական է, ուրեմն գաղափարն ալ պատահական է : Բայց այս դիրքը տեսած և շօշափած առենս կը մոտածեմ՝ թէ սա տեղ մը բռնած է, և գրուելն մինչև հիմա ժամանակ մ'անցեր է : Որդ, ժամանակն ու տեղը կամ միջոցը այնպէս է միթէ՝ ինչպէս որ է դիրքը, կրնամ ըսել թէ միջոց և ժամանակ ոչնչացան, խելքի գէմէ : Գիրքը կ'ոչնչանայ բայց տեղը՝ որ այս գիրքը բռներ էր, կայ միշտ, և ժամանակը յորում երեցցաւ, իւր ընթացքը կը շարունակէ : Մաքով որքան ոչնչացնենք գրքեր, մար-

միններ և գիպուածներ, բայց ժամանակն ու միջոցը չենք կրնար ոչնչացնել, խելքերնուու գէմ կուգայ : Վերջապէս, ժամանակի և միջոցի գաղափարներն Աստուծոյ գաղափարի պէս այնպիսի բան իրենց առարկայ ունին՝ որ չկրնար չըլլալ, հարկաւոր բան է, ասոր համար ալ անոնց առարկայից գաղափարները հարկաւոր են : Մեր գաղափարաց երկու երկրորդ տական կերպերը հանականութիւն և ընդհանրականութիւնն եւ հարկաւորութիւնն յառաջ կուգան իրենց պարահականութիւնն և հարկաւորութիւնն :

Ամէն ո՞ր և է պատահական առարկայ սահմանաւոր է, որոյ ինչպէս սկիզբն յամենայն կողմանց շրջափակեալ է ուրիշ առարկայներով, հետեւապէս զինքը ներկայացնող գաղափարն ալ սահմանաւոր է :

Այսպիսի գաղափար մը չկրնար ճշմարիտ ըլլալ յամենայն ժամանակի, յամենայն տեղիս, և յամենայն միսս, այլ հունաւոր, անհատական և մասնաւոր : Բայց այն՝ որոյ գոյութիւնը բացարձակապէս հարկաւոր է, ամեն ժամանակ և ամէն տեղ կըկենայ : Պատճառականութիւնը հարկաւոր գաղափար է, և կը տարածեմք ամեն երեսոյթի վրայ, առանց վարանման պնդելով՝ թէ ամէն երեսոյթք՝ ինչ որ ալլինին հարկաւ պատճառ ունին : Արդարութիւնը հարկաւոր գաղափար է, պարտաւորիչ բոլոր մարդկանց համար, որք որքան տարբեր հասակ, բարեխառնութիւնն և ընկերային դիրք ալ ունենան՝ առ հասարակ կատարելու պարտաւոր են :

Համառօտելով ըսենք . ամէն գաղափար որ բացարձակ է՝ հարկաւոր և տիեզերական է . ամէն գաղափար որ առնչացական է՝ պատահական և մասնաւոր է :

Դ. — Մարդուն է առաջարարաց . Մարդկային իմաշումը երեք աղքիւր ունի . գիտակցութիւն, զգայրանք, բան :

Որովհետև մեր բոլոր գաղափարները երկումեծ ցանկ ունին՝ առընչական և բացարձակ, ասոնց ծագման ինդիրն ալ կը բովանդակի դիտնալու մէջ՝ թէ այս երկու սեռի ծանօթութիւնները մենք ի՞նչ կերպով կրնանք ձեռք բերել :

Արդ, առընչական գաղափարաց մէջէն ոմանք նիւթական են և ոմանք հոգեկան կամ մտաւոր :

Նիւթական գաղափարներուն ակը զգայութիւնն է՝ որ դործարանաց վրայ արտաքին մարմնոց տպաւորութիւնները կը ժողվէ : Գունոյ գաղափար ունենալու համար մարմին տեսներու ենք, ձայնի համար լսելու ենք, ծաւալի համար չօշափելու ենք : Եթէ զգայարանք մը պակաս ունենանք նիւթոյ վրայ ալ պակաս ծանօթութիւն կ'ունենամք : Բայց զգայարանք հոգւոյն և անոր դործոց վրայ ծանօթութիւնն չեն կրնար տալ : Հոգին չ'անկանիր զգայարանաց տակ, չը չօշափուիր, չտեսնուիր բոլորովին զուտ ոգեեկան կարողութիւն մը ունինք՝ ի՞նչու չ'անեն ըստած, որ կ'ուստուցանէ մեղինչ որ մեր հոգւոյն մէջ կ'անցնի, ինչպէս զգայարանք կ'ուստուցանեն ինչ որ մեզմէ դուրս կը պատահէ : Գիտակցութիւնն է որ մեղկ'իմացնէ մեր հոգւոյն հեշտութիւնները, ցաւերը, երկիւղը, յոյսը, վափաքը, խորհուրդները, նպատակները, կարողութիւնները և մարդկային հոգւոյ էական ստորոգելիքներն, որք են՝ պարզութիւն և նոյնութիւն : Եւ որովհետև զգայարանք և գիտակցութիւն սովորութիւն եղած է, չորհանչելով և կամ հետաքատութիւն անուններով

յիշուիլ, կրնանք ընդունել թէ մեր առընչական գաղափարը թէ՛ նիւթական լինին և թէ՛ աննիւթական ընդհանուր ակերնին փորձառութիւնը կամ հետազոտութիւնն է :

Դ. — Բայց յանկ էարակաները վ'ն յաւագ էար ու վ'ն չ'արանաց և ու ի՛ է չ'արանաց նեննէ : Հերուսակ հոյնական և հարկաւոր գաղափարները ՚ի զգայիւղերական և հարկաւոր գաղափարները ՚ի զգայանաց և ՚ի գիտակցութենէ և կամ որ նոյն է ասել՝ ՚ի փորձառութենէ յառաջ կուգան՝ թէ ուրիշ աղբիւր ունին . հին, միջին և նոր ժամանակաց բոլոր փիլիսոփայութեանց վեճին հանդոցն այս հարցումն էր :

Հոչակաւոր գպրոց մը հին ատեն՝ որ փորձական մեթոսի չափազանց կը հետեւէր և ասոր համար Ամփիրիդ կ'ըսուէր, բացարձակ գաղափարներն ալ առընչականաց պէս ՚ի փորձառութենէ կը բարիխն կ'ըսէր, բայց սատարբերութամբ՝ որ ուղարկի չեն դարայլ մոքին մասնաւոր մի չանիւքը . Օրինակի համար, զգայարանաց ձեռօքունիւնը և չերեն գաղափարն ունինք, երկուքը միացնելով՝ սկզբան գաղափարը կը չենքն, որ զգայարանաց անմիջապէս ներկայ չէ . այսպէս ալ մասնական պատճառներ կը տեսնեմք, ասոնց անկատարութիւնն և սահմանանաւորութիւնները վերցունելով՝ անհուն և անսահման պատճառի գաղափարը կ'ունենամք, որ է Աստուած :

Ծայրայեղ փորձական կամ Ամփիրիդ գպրոցի ծագումը Յունաց փիլիսոփայութեան հետ կ'սկսի թաղեսի օրով, վեց հարիւր տարի յառաջքան զմեր թուական : Այս ժամանակ կ'ըսուէր թէ զգայութեան ձեռօք կամ ՚ի փորձոց իմացուած նիւթեղին

տարերքները միայն դոյութիւն ունին . դար մը յեւ տոյ լևկիպասի և գիմնկրիտեսի ենթագրութիւնները բոլորովին նոր գրութիւն մ'ըրին այս վարդապետութիւնը :

Լևկիպասս տիեզերքի երևոյթները կը նկատէք՝ բաժանեալ և միացեալ հիւէից արդիւնքներ : Դիմոկրիտէս այս վարդապետութեան բացատրութիւն մը տուած ըլլալու համար կ'ըսէր՝ թէ մարմնոց մակերեւոյթէն փրթած թեթև շամանդաղներ՝ որ սպատիկեր են անոնց որակութեան՝ կուդան մեր գործարանաց կը շփուին և զգացումն և խորհուրդյառաջ կը բերեն : Հիւլչականաց այս այլանդակի խորհրդածութիւնը Եպիկուրոսի անցաւ, սա ալ ընդունեց աւանց փոփոխութեան . Եպիկուրոսէն ալ լուկրետիոս առներով՝ բանաստեղծեց անդամ վրան : Ձենոն՝ գլուխ Առոյիկեանց՝ որյայլում ամենայնի հակառակ էր Եպիկուրոսի, գաղափարաց ծագման ինդրոյն մէջ կը կարծեմթէ համաձայն էր :

Սրահական դպրոցի այս հիմնադրին է կ'ըսուի հոչակառոր այս առածը —, չմարթի իմիք ի'միտան լինել մինչեւ եղեալ նախ, 'ի զդայարանս —, մոքերնուս մէջ բան չկայ որ զդայարանք անցած չ'ըլլայ :

Նոր ժամանակի փիլիսոփայութեան մէջ տը նշանաւոր մարդիկ կան փորձականութեան կուսակից :

Տեքարդի ժամանակակից և հակառակորդ գասունոսու, կ'ըսէ իւր տրամաքանութեան մէջ՝ թէ մեր գաղափարաց աղբեւրը զդայութիւնն է . կը խոսովանէր թէ զդայարանաց մէջ ինչպէս որ են այնպէս չեն մնար մտքի մէջ . բայց կը պնդէր՝ թէ զդալի տարերքներու կը փոխուին՝ խորհրդածութիւնն ալ կը գործէ զդանին և կը փոխուի :

Թովմաս Հօպակէս ալ այս կարծիքէն էր . Հոգին, կըսէր, բնաւ չունի ծանօթութիւն մը՝ որոյ ծագումը՝ 'ի զգայարանաց չ'ըլլայ : Զգայութիւնը շարժման հետևանք է, երբ շարժումը դադարէ կը տկարանայ և կը փոխի երևակայութեան : Բառերը օգնելով մարդուս՝ կ'ամրացունեն և կը կազմեն դաղափարները, ուստի և կինայ դատել, մակարեւրել, այսինքն մէկ նշանին ուրիշ անոր արժէքին ունեցող նշան յատկացնել, մէկ խօսքով հաշուել :

Հաշիւը ըստ Հօպ գի՝ իմաստասիրութեան կամ մակաբերութեան հարկաւոր ձևն է :

Փորձականութեան արդի շատագոյմսերուն մէջ լոք, ճիշտը խօսելով, ամենէն խորագէտն է : Մարդկային ծանօթութիւնը, կըսէր, կը բաժանին 'ի զաղափարս և 'ի դատումն : Դատումն ի՞նչ է . Երկու դաղափարաց մէջ կեցած առընչութիւնը ըմբռնել : Ըսել է՝ թէ դատումն ընել կարելի չէ առանց դաղափարի : Գաղափարներն ալ ոմանք պարզ են և ոմանք բաղադրեալ : Բաղադրեալ գաղափարները պարզերէն յառաջ կուգան, որոց անմիջական ակն ալ զդայութիւնն և խորհրդածութիւնն է, այսինքն է փորձառութիւնը . Հետևապէս ամէն ծանօթութիւն, ինչ որ ալ լինի առարկայն, վերջապէս կը յանգի փորձառութեան, և ասովմիայն հաւասարի կը լինի : Լոքի բոլոր վարդապետութիւնն այս է և այսպէս կը խօսի իւր ընդարձակ գործոյն մէջ, որ կ'ըսուի Հայոցպատրիւն ճարտէացն ճառաց :

Քօնտիլյաք աշակերտ Լոքի, մնեալ իւր անգղիացի վարպետին սկզբունքներով՝ աւելի յառաջ գնաց այս բանին մէջ, զի խորհրդածութիւնն անդամ ուրացաւ և միտք կամ մտածութիւն ըսելով

բնազնական զգայականութիւնը կ'իմանար : Քօն-  
տիլաքի նայելով՝ նիւթեղին առարկայից մերդոր-  
ծարանաց վրայ տալաւորիլը՝ մտաւոր եղելութեանց  
առ հասարակ աղբիւր է : Վերացական և տիեզե-  
րական դաշտափաները ինքնին ուրիշ բաներ չեն  
այլ միայն զգայականութեան այլւայլութիւնը :

Փորձականութեան հնութիւնն և երկար ժա-  
մանակ ըրած աղդեցութիւնը կը ցուցնեն՝ թէ սա  
իրապէս խոր արմատ ունի մարդկային մտաց մէջ .  
բայց սխալն յայսմ է՝ որ չ'բացատրէր բացարձակ  
ծանօթութեանց ո՛չ տիեզերականութիւնն և ոչ  
հարկաւորութիւնը : Զգայարանաց և գիտակցու-  
թեան ձեռօք՝ ո՞չ ուր տեղ որ ենք՝ անտի կրնանք  
դուրս ելլել, և ո՞չ որ ժամանակ որ ենք՝ անկէյառաջ  
կամ յետո երթալ . կը տեսնենք ինչ որ աստ , անդ և  
յայս ժամկամյայն կը պատահէ, ասկէց անդին չեմք  
տեսներ : Յիշողութիւն և վկայութիւն , ինչ դադա-  
փար որ առեր եմք՝ զայն վերստին ներկայացներու  
համար միայն կրնան օդնել : Փորձառութեան ապա-  
ցոյցներն որքան ալ մշակենք՝ իրենց չ'ունեցածը ,  
այսինքն է տիեզերական դասումները չեն կրնար  
տալ : Միթէ փորձառութիւնը սորվեցուցեր է մեղ՝  
թէ որքան երևոյթք որ կան տիեզերաց մէջ , առանց  
բացառութեան , ամէնքն ալ պատճառ ունին  
և ժամանակի մէջ կ'ըլլան . անտարակնյո ո՞չ , զի մեր  
փորձան երեսոյթները շատ քիչ բաներ են :

Այլև փորձառական ծանօթութիւններն որ-  
քան տիեզերական չեն՝ այնքան ալ հարկաւոր չեն :  
Փորձառութիւնն ինչ կը ցուցնէ մեղ . — ինչ որ կայ՝  
այն կը ցուցնէ՝ և ոչ թէ ինչ որ հարկաւոր է ըլլալ :

Կ'ուղեմոր զգայարանքս յիշողութեան և խելամոռու-  
թեան ձեռօք՝ կարող ըլլայ ցուցնել ինձ՝ ինչ որ ե-  
ղեր է և ինչ որ պիտի ըլլայ , բայց որքան ալ աշխատ-  
ցունեմ չ'պիտի կրնամդիտնալ թէ եղելութեւննը .  
ինչպէս որ տեղի ունեցան , այնպէս կ'ըլլան և ուրիշ  
կերպ չեն կրնար ըլլալ : Փորձառութիւնն երբէք  
չ'կրնար ցոյց տալինձ՝ թէ միջոցէ դորս գոյութիւն  
ունեցող մարմին չ'կայ , և թէ , հարկաւորապէս , մի-  
ջոցը կը բովանդակէ զամենայն մարմին : Հարկաւո-  
րութիւնը չը տեսնուիր , չի շօշափուիր և չ'զդա-  
ցուիր :

Փորձական վարդապետութիւնը բացարձակ  
դաշտափարաց աղբիւրը փորձառութիւնն համարե-  
լով՝ այս գաղափարաց գոյութիւնը ուրացած կ'ըլլայ :  
Որինակի աղադաւ . լոքի և իւր աշակետաց համար  
ինչ է պատճառականութիւնը . — Յաջորդութիւն  
ինչ է գոյացութիւն . — Լուսակումն որակութեանց  
ինչ է բարին . — Օգտակարը : Ի՞նչ է անհունը .  
— Ճխտումն հունաւորի : Կրօնի , բարոյականի , ա-  
րուեստից և նոյն իսկ գիտութեանց հակառակ այն-  
քան անհաճոյ հետևանքներն՝ այս վարդապետու-  
թեան պտուղ են : Դասիթ Հիւմ ամենայանդուղն  
Սկեպտիկեանն , Հելվետիոս՝ որ շահասիրութիւնն  
առաքինութիւն կը համարէր , լամեթրի և Տօլպաք  
հոչակաւոր վարդապետք նիւթակրօնութեան և  
անսատուածութեան , և այնքան գրչէ տէր մարդիկ  
որոց բոլոր աշխատութիւնը մարդկային ազգի ամե-  
նէն սուրբ հաւատքը քանդել էր՝ ուղղակի ժառան-  
գորդք են լոքի և Քօնությալքայ : Այս փիլիսոփայ-  
ներն իրենք ալ չ'են ուզեր , բայց հնարած մեթոս-  
նին այնպիսի սերմեր ցանեցին՝ որոցմէ գէ

պոտողյառաջ եկան և քաղեցին իրենց յաջորդները, ինչպէս հին ժամանակի զգայական հոգեբանութիւնը պատճառ եղաւ՝ որ Եպիկուրոս, գարշ և յոռի բարոյականութիւն ջատագովեց, ևս և հոգւոյ և վստուծոյ վրայ այլանդակ վարդապետութիւն ունեցաւ :

Ե. — Ծագութիւնի հայութուրաց : Փորձական վարդապետութեան մոլորութիւնն և վտանգները պատճառ եղան՝ որ շատ փիլիսոփայք ալ ստիպուեցան վնտուել՝ թէ արդեօք զգայարանքէ և գիտակցութենէ ուրիշ աղքիւր կայ հարկաւոր գաղափարաց :

Ոյս մասին եղած զանազան տեսութիւնները պատմելու տեղը չէ, դիմաւորները ստորագրեմք քիչ մը խօսքով բաւական է :

Պղատօն մարմնաւոր, շարժուն եւ մաննաւոր իրերէն վեր՝ անստեղծ, անշարժելի եւ յաւիտենական գաղափարներ կան կ'ըսէր. Գաղափարք անդ են՝ ուր կան համեմատութիւն և կեանք, բայց կը կայանան յԱստուած : Մարդկային հոգին՝ որ է 'ի ծոց անհուն իմաստութեան՝ գեղեցիկը, բարին և գերազագոյն ճշմարիտը իմացած է, յառաջ քան զժամանակն՝ յորմէ յետոյ՝ ի պատուհաս յանցանաց մերժեցաւ յԱստուծոյ և մահկանացու մարմնոյ մէջ խառնուեցաւ . աստէն՝ ի թշուառութեան իւրումկը պահէ կան խառ. տեսած սքանչելեաց յիշատակը, որոց կիսովչափ եղծեալ պատկերը կը տեսնէ նաև զգալի բնութեան մէջ : Շփոթ այս յիշատակը հիմն է բացարձակի վրայ ունեցած գաղափարներնուս, գիտելը յիշել է, և ամէն գիտութիւն արդէն գիտցածներնուս վեր-

յիշումն է : Առասպելաբան այս վարդապետութիւնը Արիստոտելի դրական և խոհեմիմաստութեան չէր կրնար յարմարիլ . երկայն ատեն վիճաբանեցաւ Պղատօնի կարծեաց դէմ, սակայն փորձականաց կողմն ալչ անկաւ : Ըստ Արիստոտելի, զգայարանք միայն մասնաւորները մեղ կ'զգացունեն . տիեզերականն՝ որ կը ծաւալի առ հասարակ բոլոր առարկայից վրայ, կարելի չէ զգալ : Սակայն, կ'ընդունէր՝ թէ կան նախնական ճշմարիտութիւններ՝ որք իրենք իրենց մէջ ստուգութիւն ունին և մենք անմիջապէս կ'ընդունիմք :

Նորապղատօնական դպրոցը, որ քրիստոնէութեան երկրորդ դարուն Աղեքսանդրիոց մէջ հիմնեցաւ, փորձական դրութեան բոլորովին հակառակ ծայրը՝ չափազանց խորհրդականութեան մէջ խնկաւ : Ըստ Պղատինոսի և անոր յաջարդաց՝ անհաւատարիմ հետեւողաց Պղատօնի՝ մարդկ յայնժամ կատարելապէս կը տեսնէ ճշմարիտութիւնը՝ երբ գանդաշանաց մէջ լինի . այս միջոցին հոգին ընկղմեալ լինելով յԱստուած՝ նովաւ. կը կենսաւորի, Աստուծոյ լուսոյն կը մասնակցի և անմիջապէս կը տեսնէ բացարձակիւ : Պորփիր աշակերտ Պղատինոսի կը պատմէ՝ թէ իւր վարժապետը շատ աստուածահանց լինելով՝ չորս անդամ այս գերբնական վիճակն ունեցաւ : Տեքարիթ կ'ըսէ՝ թէ գաղափարներ կան՝ որ գրսէն մեղ կուգան, ինչպէս արեգական, չերմութեան, լուսոյ, ձայնի և այլն գաղափարները, և կ'ըսուին էկանոութ կամ էկանոութ, գաղափարներ ալ կան՝ զօրս մենք կը կազմենք կամ կը հնարենք, ինչպէս արալեղի, յուշկապարկի և այլն գաղափարներ և կ'ըսուին ստեղծական կամ էնուս :

իսկ Աստուծոյ գաղափարին համար՝ զոր միտքը չ'կր-  
նար շինել՝ որովհետև մեր մոքէն անցած կերպով  
Աստուծած չ'ըլլար, և զդայարանք չ'են իմանար, որով  
հետև անուահման է և անչափ, կ'ըսէր. աշխարհք եկած  
ատեննիս այդ գաղափարի սերմը հետերնիս կունե-  
նանք, և կըսուի բառնին :

Սյուկարծիքը Տեքարթի աշակերտաց մեծ մասը  
ընդունեց, բայց Մալլգրանց գոհ չ'եղաւ բոլորովին,  
պարզած ըլլալու համար Տեսունին ՚ի յեռն Աստուծոյ  
ենթադրութիւնը հնարեց : Ըստ Մալլգրանչի մեր  
գաղափար ունենալը կարելի բան չէ, առանց լու-  
սոյ աստուծային մտաց և գաղափարաց :

Լէիրնիսիոս կամ Լայպնից՝ որ թէ Լոքի և թէ  
Տեքարթայ հակառակորդ էր, փորձականութեան  
հիմնական առածէն զդուշանալով կ'ըսէր . Մտաց մէջ  
բան չ'կայ՝ որ զդայարանաց մէջ չ'կենայ՝ բաց'ի նոյն  
ինքն իմացականութենէն :

Արդ մտաց մէջ կայ էակ, գոյացութիւն, միու-  
թիւն, նոյնութիւն և ուրիշ շատ մը ծանօթութիւն-  
ներ՝ զորս զդայարանք չ'են կրնար տալ : Ըստ Լէիր-  
նիսիոսի այս ծանօթութիւնները սերմեր են՝ որ ծնած  
ատեննիս կը կրենք, մեր ներսը ծած կեալ լուսոյ  
նշոյներ են՝ որ արտաքին առարկայից պատահելով  
կ'երևնան : Այս ծանօթութիւնները շինելու զօրու-  
թիւննիս առանձին և բացէն կարողութիւն մը չէ,  
այլ մեր հոգւոյն տրամադրութիւնը կամ կանիս-  
կազմն է :

Յետին դարու վերջերը Թողմաս թէյտ և Քանժ-  
ծանօթութեանց ծագման ինդիբը վերստին յուղեցին,  
որը թէև տարբեր տարբեր շաւիդ գործածեցին,  
սակայն նման եղանակացութեանց հասան :

Թէյտ արտաքին գաղափարաց վերլուծութենէն  
ճանրաց ելելով՝ կ'ըսէր՝ թէ փորձառութենէ յառաջ  
չ'եկող ծանօթութիւնները կամ գաղափարները կը-  
խառնուին անկէ յառաջ եկածներուն հետ : Ապա  
հետազոտելով՝ թէ ինչ են այն ծանօթութեանց բնու-  
թիւնը, նկատեց՝ թէ մարդկային միտքը կացուցանող  
օրէնքներ են : Արդ, գերմանացի այս փիլիսոփային  
նայելով՝ տիեզերական և հարկաւոր ծանօթութիւն-  
ներն ՚ի յառաջադպւնէ դատումներ և մտաց օրէնք-  
ներ են :

Թէյտի՝ մանաւանդ Քանթի գարդապետու-  
թեան մէջ սկեպտականութեան սերմն կայ, վասն զի,  
եթէ տիեզերական և հարկաւոր դատումները միայն  
մեր կազմէն կախեալ մոտառորական օրէնք և հաւատք  
լինին, առընչական կրնային ըլլալ և ոչ ուրիշ բան,  
փոփոխական պիտի լինէին՝ ինչպէս է մտքերնիս, և  
ստուգդութիւն չ'պիտի կենապ :

la Religion en Dieci

Մալլգրանչի տեսունին ՚ի յեռն Աստուծոյ, Աղեք-  
սանդրեանց խորհրդականացնեն և Պղատօնի ժաղափարու-  
հանանեն զօրաւոր առարկութիւններ կը վերցունեն,  
օսկայն, կարծեայ տարբերութեան մէջ գլխաւոր կէտ  
մը կայ՝ յորում իրար կը մերձենան բոլոր այս գրու-  
թիւնները, այսինքն թէ մարդկային միտքը սեռ մը  
ծանօթութիւններ ունի՝ որ բնաւ փորձառութեան  
ներքն չ'են իյնար : Ուրեմն, զդայարանքէ և գիտակ-  
ցութենէ՝ կամ մէկ բառով, փորձառութենէ լիապէս  
որոշ կարողութիւն մը կայ բառ անունով՝ որ նոյն  
ծանօթութիւնները կ'ստանայ : Ուստի, ինչպէս  
՚ի սկզբան ըսինք, գաղափարաց ծագման ակը-  
դլիսաւորապէս երկուք է հորժառանեն և բանականուննեն :

Փոքառանեն ձեռօք առընչական գաղափարնե-

ըլ կը կալենք, մարմնաւորները զգայարանաց ձեռօք, անմարմնները հոգեբանական փորձառութեան կամ գիտակցութեան ձեռօք։

Բանի ձեռօք բացարձակ գաղափարները կ'ունենամք, և գիտաւորապէս Աստուծոյ գաղափարը՝ որ կեդրոն գաղափարն է բոլոր միւս բացարձակ գաղափարաց։

Փորձառութիւնը կը խթէ զբանակութիւնն, զգայարանաց և գիտակցութեան կրած տպաւորութիւնք առաջի կը լինին՝ որ միտքը ուսնայ գէպ՝ ՚ի տիեզերականն և հարկաւորը վերցունելուդ պէս այս տպաւորութիւնն բանականութիւնն ալ անդործ կը մնայ. Բայց եթէ բանականութիւնը վերցունես՝ փորձառութեան ապացոյցները անյարիը տպաւութեանց կոյտ մը կը լինին, որ ներկայ ժամանակէ անդին չեն անցնիր, և ծանօթութիւն լառուիլ չ'են արժեր։ Բանը կամ բանականութիւնն է՝ որ այս տպաւորութիւնները պիտի կապակցէ, յատակէ և կատարելազ ործէ իւր յատուկ ապացոյցներն յաւելով՝ ՚ի վերայ, այսինքն այն առաջին ծանօթութիւնները՝ որոց ազրիւը լինքն է, և զորս ոչ լսելիք, ոչ շօշափելիք, ոչ տեսանելիք չեին կրնար մեզ տալ։

Միտքը, լոկով զօրութեամբ օրինաց բանականութեան, անաշխատ ըմբռնելով ճշմարտութիւնը՝ արդէն առած միթին ծանօթութեանց վրայ կ'անդրադառնայ, և ՚ի ձեռն կամաց ինչպէս ուղէ՝ այնպէս կը կերպարանափոխէ. ուշադրութեան ձեռօք՝ որ կը լուծէ առարկայները, բազդատութեան որ կը մօտեցունէ իրարու, խմաստափորութեան՝ որ ամենածածուկ յատկութիւններ երևան կը հանէ, և մէկ ճշմարտութեան մէջէն ուրիշ անոր հետեւանքն եղող ճշմարտութիւնը կը ցուցնէ, և վերջապէս

՚ի ձեռն բարբառոյ՝ որ ոչ միայն մեր նմանեաց խորհրդածութիւնները կը բերէ մեզ, այլ մերերն իսկ կը պնդէ և կը վերլուծէ, գաղափարներնիս կը կերպարանափոխուին, կը ճշդուին, կը յստակուին և կը տարածուին։ Ըստ ծագման մասնաւոր և թանձրացեալ գաղափարք կ'ըլլան վերացական, հաւաքական, ընդհանրական, նոր նոր գաղափարներ յառաջ կուգան, և այս նորերէն ալ ուրիշ աւելի ևս նորեր հետղհետէ։ Այս կերպով, այսինքն բանականութիւն և ապատութիւն միալուծ ընկերանալով՝ մարդկային ծանօթութիւններն կ'ընդարձակին, և գիտութիւններ կը ծնանին և կը դարդ անան։

Աւաշին ծանօթութիւնք , կամ առաջ եւ  
սկզբունք բանականութեան :

Ա . Աւաշին ժանօթութիւն + և հշտորութեան + կոն : Երբ  
առաջին անդամ շոգենաւ մը տեսնեմք , հետաքր-  
քիր կ'ըլլամք դիմալու՝ թէ ուր , երբ , ով , ինչո՞ւ  
հնարքը է այն սքանչելի մեքենայն , և կը հարցու-  
նեմք ասոր անոր՝ որ ըսեն . եթէ մէկն ըսէ մեղ՝ թէ  
ասիկայ շինողն մէկը եղած չէ , նպատակով մը շին-  
ուած չէ , աստ կամ անդ շինուած չէ , այսօր կամ  
հերու շինուած չէ , յիմարէ , ի՞նչ է այս մարդը , թէ  
հետերնիս կատակ կ'ընէ կ'ըսենք : Որովհետև մեր  
խմացականութիւնը ինքնին կը պարունակէ տեղույ ,  
ժամանակի , պատճառի և արդեան , միջոցի և վախ-  
ճանի դաղափարները , և ամէն բանի համար կը գոր-  
ծածէ , այնպէս որ չ'կրնար համոզութիւն մարմին  
ըլլայ և տեղ չ'ունենայ , դէպք մ'ըլլայ՝ ժամանակի  
չ'ունենայ , արդիւնք մը ըլլայ՝ պատճառ չ'ունենայ ,  
էութիւն մը ըլլայ՝ նպատակ կամ վախճան չ'ունենայ :

Մարդկային մտաց այս ընդակից դաղափար-  
ները շատ փիխոփայք անուանած են առաջին ժամ-  
ներն , յորոց առաջ եկած անընդմիջական և ան-  
քաժանելի դատումներն ալ ըսուած են առաջին հշտո-  
րութեան + Այս ճշմարտութեանց յատկութիւնն է՝ որ  
բնաւ քան զիրենք նախկին դաղափար չ'ունին , և  
էական խարիսներ են մեր ծանօթութեանց :

Բ . — Նկարագիր առաջին հշտորութեանց + Աւաշին  
ծանօթութիւնք երեք նկարագիր ունին :

1° Այնքան յստակ են , որ եթէ զիրենք ձեռք  
բերել կամ ընդդէմ փաստաբանել ուղենք՝ չենք  
կընար իրենցմէ յստակ և իրենցմէ աղէկ ծանօթու-  
թիւններ գտնել :

2° Այնքան տիեզերական են՝ որ ամէն տեղ ,  
ամէն ժամանակ , մինչև նախապաշտեալ մտաց մէջ  
կը գտնուին :

3° Վերջապէս այնքան խոր տպաւորեալ են  
մեր ներսը , որ մեղ ուղղութիւն կուտան դատման  
և վարուց մէջ , և անոնք անդամ՝ որ կ'ուրանան  
կը պարտաւորին առանց դիմանալու հետեւիլ և գոր-  
ծով հակառակն ընել իրենց կարծիքին :

Գ . — Աւաշին ժանօթութեանց դատումներն կայ  
լանալու պեսութիւն + Աւաշին ծանօթութիւնաց բնու-  
թիւնը կը պահանջէր՝ որ ՚ի վարուց անտի փիլիսո-  
փայութիւնը ասոնց համար միայն մէկ ճիշդ ցանկ  
մ'ունենար . բայց , որովհետեւ մեր խորհրդածու-  
թիւնը քննելն չափազանց փափուկ և ծայրայեղ գ-ժ-  
ուարին է՝ մանաւանդ արմատ ծանօթութեանց  
կողմանէ , վասն որոյ շատ տեսակ ցանկեր եղան :

Արիստոտել ցանկ մ'ունէր , յորում տասն էին  
էական ծանօթութիւններն . գոյացութիւն , որովհետիւն ,  
ժանակ , առընդունելու , ժամանակ , ուշ , ուժ , ուրծ , հիւր , յլ +

Արիստոտելէն յետոյ եկաղ փիլիսոփայք ուրիշ  
իրարու աննման ցանկեր ունեցան առաջին ծանօ-  
թութեանց , որոց մէջ նշանակութեան արժանի է  
Քանիթ փիլիսոփայինը , որ ժամանակութիւն բնականու-  
նեան ըսուած հուչակաւոր գրաց բուն առարկայն

եղած է : Քանիթ այս գործոյն մէջ զգայականութեան Յւերը , իմացականութեան շահնիք և բանի հայությունները նշանակելէ յետոյ՝ զգայականութեան երկու ձեւ կուտայ , միջոց և ժամանակ . իմացականութեան երկուտասան ցանկ , երեք առ երեք գումարելով՝ որոց գլխաւորներն են քանակ , որուն-թիւն , ուշնաւունիւն , և կը հասկցուին ասոնց մէջ պարագանեան , ընդունաբանունիւն , բանականութեան , պարագանեան-նիւն , հարկաւորունիւն : Բանականութեան գաղափարները մէկ հասարակ հիմն ունին զգերացոյն միութիւնն , առ որ այս կարողութիւնը շարունակ իւր իմացականութեան բոլոր ըմբռնութերն կ'ուղղէ : Ապաքէն Քանիթի վարդապետութիւնը զօրել մաքի գործ է , և ըրած քննադատութիւնը հասարակ բան չէ . սակայն աւելի արուեստական է՝ քան իսկական , և մանաւանդ ցանկին մէջ նշանակուածներուն շատը աւելի փորձառութեան բերած ծանօթութիւններ են՝ քան բանականութեան ուղղակի և արմատ գաղափարներ :

Դ . Օքնանիւեր առաջին ժահօնաւունեանց : Առանց ուրիշ փիլիսոփայից դրութեանց քննութեան մասնելու և նոր ցանկ մ'շնել ուղելու , բաւական կը համարիմ նշանաւոր և աչքի զարնող օրինակներ տալ առաջին ծանօթութեանց :

Ա . Ամէն մարդ ունի գաղափար կամ ծանօթութիւն ժամանակի . ամէն մարդ դիտէ՝ թէ ժամանակը հարկաւոր առընչութիւն ունի ՚ի նմանացեալ դիպուածոց հետ . դիտէ թէ անսահման ժամանակ կայ , յաւիտենականութիւն կայ :

Զ . Ամէն մարդ ունի գաղափար կամ ծանօթութիւն միջոցի՝ յորում բովանդակին մարմինք :

ամէն մարդ դիտէ՝ թէ չ'կայ մարմին մը՝ որ ՚ի միջոցի չլինի , դիտէ՝ թէ միջոցը տարածանի անդր քան զմարմինս , և թէ ամբաւ է :

3. Գոյութեան և հանգամանաց , պատճառի և արդեանց համար ալ այնպէս է : Կը հաւատամք՝ թէ ուր հանգամանք կամ որակութիւն կայ՝ անդ և դոյութիւն կայ . ամէն եղելութիւն պատճառ ունի : Տեսնելով որ տիեզերքի մէջ էակաց և երևութից հրաշալի այլեայլութիւնք կան , որք իրենք իրենց պատճառ չեն , կը գուշակեմք թէ կայ գերազոյն պատճառ մը՝ որ ասոնք ստեղծեր է , և կ'ըսուի Աստուած :

4. Ըմբռնութիւն կամ գաղափար ունիմք՝ թէ ամէն ինչ որ ստեղծուեր է վախճան մ'ունի և ամէն ինչ իւր վախճանին կը ծառայէ : Աչք տրուեր է տեսնելու համար , խօսել տրուեր է՝ մեր մաքէն անցածը մեր նմանեաց յայտնելու համար :

Երբ բանի մը վախճանը չենք դիտեր , այնու չենք կասկած իր անդամ վախճան ունենալուն վրայ , այլ մանաւանդ մեր մոտաց տկարութիւնը կը մեղադրեմք՝ որ չը կրնար Արարողին բոլոր նպատակները խնմալ : Այս հաւատըն է՝ որ փիլիսոփայութեան մէջ Անբանական վեշտական պատճառաց անունով կը հասկցուի :

5. Ունիմք ծանօթութիւն կամ գաղափար բարւոյ և շարի , պարտուց և իրաւանց , արժանեաց և վատութեան : Պայծառապէս դիտեմք՝ թէ ոչ ումեք վեաս հասցնելու եմք , ծնողնիս պատուելու եմք , տուած խոստումնիս յարգելու եմք , և թէ ով որ այս սուրբ պարտուց հակառակ կը վարուի պատճց արժանի է , և ո՛վ ոք այս պարտքերը կը կատարէ

մինչեւ իւր անձնական շահուց հակառակ՝ հատուց ման արժանաւոր է :

6. Ամէն մարդ գաղափար ունի գեղեցիկի, և այս գաղափարն է հիմն առ հասարակ բոլոր արուեստից :

7. Ամէն մարդ, վերջապէս, ինչպէս վերն ըստնք, կը հաւատայ՝ թէ աշխարհ կը կառավարուի միակերպ և հաստատուն կարդօք, որք կը տարածուին ընդ բոլոր կողմանու աշխարհի և ընդ համերէն դարս ժամանակաց :

Ե. Հիմնակ առաջին ճշմարդութեանց ։ Առաջին ճշմարտութեանց մէջէն ոմանք հարկաւոր են, ինչպէս այս հաւատքը՝ թէ ամէն եկլուսնիւն պատճառ չ'անձ . և ոմանք թէն տիեզերական՝ սակայն և այնպէս պատահական են, ինչպէս այս հաւատքը՝ թէ բնութեան օրէնուերը հայուն են :

Աստուած իւրով իմաստութեամբ և կամօք արարածոց մէջ մնայուն և ընդ հանուր օրէնքներ հաստատեր է : Հարկաւոր ճշմարտութեանց վերջին խարիսխը Աստուած է :

Երբ միաքը կ'իմնայ անծայր ժամանակ և անսահման միջոց, էութիւն և պատճառականութիւն բացարձակ, անխախտելի կարդ համեմատութեանց, գեղեցկութիւն անտգեղ, բարութիւն գերազանց, այս ամէն գաղափարները հաւասար են այն նոյն և մի գաղափարին՝ որց առարկայն անբաւ և յաւիտենական Աստուածն է իրիւ առաջին պատճառ, կատարեալ իմաստութիւն և գերագոյն արդարութիւն :

Այս ճշմարտութիւնը, կ'ըսէ Պատիւ, ոքան-

չելի պայծառութեամբ կան ընդ ամենայն ժամանակու և յամենայն մարդկային միտս ։ Եւ երբ այս ամենայն՝ որ եղենն կարդ օք համեմատութեան, այսինքն ամենայն ինչ որ ՚ի բնութեան են՝ եղծանին, և ես միայն կենամ, այս կարդ և կանոնները պիտի կենային մտացս մէջ . և պայծառապէս պիտի տեսնէի՝ որ ասոնք միշտ բարի և միշտ ճշմարտիս պիտի ըլլան, եթէ ես ալ չ'կենայի, և ասոնք հասկցող ուրիշ մէկը չը կենար :

”Եթէ հիմայ կը փնտուեմ՝ թէ ուր և ինչ են թակայի վրայ կը կայանան այս յաւիտենականները և անշարժելիները, կը պարտաւորիմ խոստովանիթ՝ թէ կայ էակ մը՝ յարում ճշմարտութիւնն յաւիտենականապէս կայացեալ է, և ՚ի նմա միայն իմացեալ, և անտի յաւաջադայի ճշմարտութիւն յամենայն հակու և յամենայն միտս որ արտաքոյ նորա է :

”Ուրեմն ՚ի նմա է՝ որ անհասանելի կերպիւ կը տեսնեմ այս յաւիտենական ճշմարտութիւնները, և տեսնելն ուրիշ բան չէ՝ եթէ ոչ դառնալ հայել ՚ի նա՝ որ առանց շարժութեան բովանդակ ճշմարտութիւն է, և լուսաւորութիւն ՚ի նմանէ :

”Յաւիտենական այս առարկայն Աստուած է, ՚ի յաւիտենից գոյ, ՚ի յաւիտենից ճշմարիտ և ՚ի յաւիտենից նոյն ինքն ճշմարտութիւնն . Պօսիւէի այս սքանչելի բացարութեան կը համձայնի ֆենելոնի ճառն ՚ի վերայ բանականութեան . — Ո՛հ, կըսէ ֆենելոն, որքան մեծ է մարդուս միտքը, անկակից կարողութիւն ունի անհասապէս անդր քան գինքն պանարու, և զարմանալ՝ որոյ վրայ որ զարմանալ պէտք է, մտաց գաղափարներն են ափեզերական, յաւիտենական, և անշարժելի . . . .

Ա. Կարեւորակնեան առաջին ծշմբառավեանց : Մարդկային միտքը իւր հեղինակին կապակցող բնական , կենդանի և լուսեղէն շղթայն առաջին ծանօթութիւններն են , որ բոլոր աշխարհի և բոլոր ժամանակաց մարդկիզ մէկ հասարակաց կեդրոնի շուրջը՝ այսինքն է՝ Աստուածային ճշմարտութեան բոլորը կը ժողովեն : Եւ որովհետև այս ծանօթութիւնները նոյն իսկ հիմն են մոտաց , ուստի ոչ մէկը կրնայ խախտել , և ոչ թողուլ հեռանալ , այլ բնդ մտեալ անցանեն թէ մարդկային կենաց ներքին և սովորական կենակցութեան մէջ . թէ ամենաընտանի դատամանց , թէ ամենասովորական գործոց , և թէ ամեն սեռի գիտութեանց մէջ : Երկրաչափութեան մէջ՝ միջոցի գաղափար կայ . բարոյականի և իրաւագիտութեան մէջ՝ իրաւանց և պարտուց գաղափարները . գեղագիտութեան մէջ՝ գեղեցկի և անոր հետ վերաբերութիւն ունեցող բոլոր որպիսութեանց ծանօթութիւնը կայ : Գործարանագիտութիւնը կամ կենսաւոր էակի գիտութիւնը հիմնեալ է վերջնական պատճառի գաղափարի վրայ , որ մեզ կը ներկայացնէ կենսաւորեալ մարմնոյն դանազան մասերը իրրեւ այնքան միջոցներ՝ որ կը հային մէկ վախճանի՝ այսինքն է կենաց :

Վերցուր այս գաղափարներն՝ գիտութիւններն ալ չեն մնար . Ապաքէն , գիտնականները միշտ նկատողութեան չեն առնուր այս առաջին ճշմարտութիւնները , որ իրենց գիտութեան խարիսխն է , մեր գատմանց մէջ ալ այս ճշմարտութիւնները մեծ գեր կը խաղան առանց մեր գիտնալուն , կը գործեն մեր վրայ և լուելեայն մեզ կ'առաջնորդեն . ինչպէս որ քալելու ատեն ջիղերնիս կը գործեն առանց մեր

իրենց վրայ մտածելուն : Սակայն , վիկիսովային պարտքն է խորհրդածութեամբ և վերաւծութեամբ վերնալ մինչև այս հիմնական ծանօթութիւնները , զատել մասնաւորներէն , և ճշգել նոցա բուն յատկութիւնը , ծագումն և կարեւորութիւնը : Փիլիսոփայութիւնն ալ գիտութիւն սկզբանց , զիտութիւն պատճառաց , այս բաները ընելով միայն կրնայ ըլլալ :

Խմացական գործողութիւնք . — Յիշողութիւնք . 1. Ծորդութիւն գաղափարաց . — Երեւակայութիւն :

Ա . Յէշալս-Ռէն : Անցեալը մտքերնիս բերելու կարողութիւնը չէ անհաջող կ'ըսուի : Ֆէնըլօն սքանչելի նկարագիր մ'ըրած է այս կարողութեան : — Կը ճանչեմ, կ'ըսէ, տիեզերքի մէջ գտնուած այն ամէն մարմինները՝ որք շատ տարիներ յառաջ զգայարանաց դպիր են, ամեն մէկուն պատկերները միաքս կան, այնպէս որ առջևս կեցածի պէս կը տեսնեմ: Ուզեղս կարծես՝ թէ պատկերավարդ սենեակ մ'է, յորում պատկերներն տան տիրոջ ուզած կերպովը տեղէ տեղ կը փոխուին և կը շարուին: Նկարիչները անկատար նմանութիւն մը միայն կընան ցուցնել, իսկ իմ գլխուս մէջ կեցած պատկերները այնքան ճիշտ են, որ նկարչին գծածներուն սխալն անդամ կը դատեմ և կը շտկեմ . . . :

Որոշակի կը յիշեմ, կ'ըսէ ֆէնըլօն, թէ կը ճանչնամ չը ճանչածս ալ, մոռնալս ալ կը յիշեմ, մարդու արգեն քանի հասակի մէջ որ աեսեր եմ իւրաքանչիւր հասակի պատկերը կը յիշեմ . . . :

Յիշողութեան մէջ երկու տարրական եղերութիւններ կան . առաջին՝ պահպանութիւն գաղափարաց, երկրորդ՝ անոնց արտաքերութիւնը կամ յշացումը : Այս եղելութեանց առաջինը փորձառութեան ներքիւ չինար, չենք դիտեր՝ ուր և ինչպէս:

Կը պահպանութիւն գաղափարները : Իսկ երկրորդ եղելութիւնը շատ դիւրաւ կիյնայ փորձառութեան ներքեւ : Կը պատահի երբեմն որ առանց գիտնալու հին գաղափարներնիս դուրս կը հանեմք, մարդու երեակայելու ատեն երբեմն ունեցած գաղափարներն է որ միտքը կը բերէ, և կամ արտեստաւոր մը իւր պատկերին բոլոր գործերը կանխաւ իւր մտքին մէջ կ'ունենայ: Յիշողութեան արտաքերութիւնը՝ որ առանց գիտակցութեան կ'ըլլաց, յասուկ անուամբ ուշբեռնենա կամ յաջուածն կ'ըսուի: Եթէ ուշաբերութեան հետ առարկային վերաճանաչումը ընկերանայ կ'ըսուի ևշարուի: Ամէն անդամ երբոր ուղենք՝ հեռաւոր առարկայ կամ անցեալ մի եղելութիւն կրնանք մտքերնիս բերել:

Բ . — Վէրլուծութիւն յէլլայութեան : Յիշողութեան մէջ երեք տարերք կան: 1. Համոզումն՝ թէ յիշած առարկային յանցելու մն գոյութիւն ունէր: 2. աեղողութիւն ժամանակին՝ որ առարկայն առաջին անդամ ճանչնալնս մինչեւ հիմայ կըշարունակէ: 3. Այդունութիւն անհաստական կամ անձնաւորական, այսինքն հաւատաւ՝ թէ երբեմն առարկայն առաջին անդամ տեսնողն և այժմ՝ յիշովն միևնույն անձնն է: Անոր համար կրնանք յիշել անցեալ մի առարկայ կամ եղելութիւն, որովհետեւ մէկ աստիճան ուշագրութիւն ըրեր եմք վրան, և շատերն անոր համար մտքերնիս չեն մնար՝ որովհետև պինդ ուշադրութիւն չ'ենք ըրեր:

Գ . — Լէտէրութիւն հաղափարաց : Յիշողութեան ծնունդ տուղղ ուրիշ մի հարկաւոր պայման ալ կայ:

գաղափարաց հանդիտութիւնը՝ որ լէսրանինեւն ժամանակաւունք է ։

Անդզիացի Հօպակէս փիլիսոփայն ներկայ կը դանուի ժողովի մը՝ յորում խօսք կ'ըլլայ Անդզիոյ ներքին քաղաքային պատերազմի վրայ. ժողովականներէն մին յանկարծ կը հարցունէ՝ թէ Պիդատոսի ժամանակ Հռովմայեցւոյ դահեկանը ինչ արժէք ունէր բաղդամամբ այժմու գործածեալդրամոց։ Ըստ երեսութին անյարմար այս հարցումէն հասկցաւ Հօպակէս՝ որ հարցունողը կարողու առաջնոյն մատնութեան դէպքէն՝ Քրիստոսի մատնութիւնը յիշեց, կամ որ նոյն է հարցանողին մտաց մէջ գաղափարաց լծորդութիւնը տեղի ունեցաւ։

Երբոր փնտուենք՝ թէ ի՞նչ կերպով եկաւ անցեալ գաղափար մը մոքերնիս, թեթև ուշադրութիւնն ալ բաւական է հասկցնելու՝ որ բոլորովին դիպուածով չէր, այլ մէջէրնին կապակցութիւն մը կար արդէն։ Այս կապակցութիւնները այնքան շատ կրլամն՝ որքան շատ ըլլան այն զանազան պատկերներն՝ որոց ներքեւ գաղափարաց իրը մեղ կը ներկայանայ. Ումանք գիտուածուածոյ պարագագայնէր են, ինչպէս են ժամանակ, տեղ, նմանութիւն, հակադրութիւն. ոմանք ալ տրամարանական, էական, հարկաւոր, ինչպէս է առընչութիւն պատճառի և արդեան, միջացի և վախճանի։ Երկուքին ալ օրինակներ տանք։ 1° Նոյն ժամանակի վրայ հիմնեալ գաղափարաց լծորդութիւնը պատմական ժամանակադրութեան պատճառու եղած է։ Երկու եղելութիւն որ միւնոյն ժամանակ պատահած են՝ կապակցութիւն մը կ'ունենան մեր մտաց մէջ։ Միհրդատը մոքերնիս կը բերէ Հռովմայեցւոյ Պոմագէոոը, Տքր-

գատ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչը. Վ.ռամշապուհ՝ Ս. Սահակ և Ս. Մերտովակ հայրապետները և ասոնց ձեռոք հայերէն լեզուի և մատենագրութեան գարդացումը։ 2° Երկիր մը իւր սահմանակից երկիրները կը յիշեցնէ։ Տեսարան մը՝ որ մտքերնէս երածէր անոր քիչ մը մերձաւոր տեսարանը տեսնելնուս պէս մաքերնիս կուգայ։ Տեղական ըստած յիշողութեան գաղտնիքն այս է։ 3° Մեր ննջեցեալ ծնողաց և կամ բարեկամաց պատկերը տեսնելնուս պէս՝ ըրած բարիքնին կամ մեղ ցուցած սէրերնին մաքերնիս կիյնան և նոյսա մահուան վրայ երբեմն զգացած ցաւերնիս կը նորոգուին։ Ասոր մօս բան մ'է որ հանդիտութիւնը՝ առակ, այլբանութիւն և բառախաղ յառաջ կը բերէ, բառերու նմանութիւնն ալ այս կարգէն է։ 4° Հիները յաջողութեան ժամանակ ձախորդութեան չ'աստուածին մեծարանք կ'ընէն։ Ռամիկները իրենց երեակայութեան մէջ եղած երկիւղալի ողիները ուն չեւառէնները կ'անուաննեն։ Ակ ծովը Եւ+ինեւն պարունակը լսուի, որ ըսել է հիւրասէր ծով. Այս հեգնութիւնները, այս մէկ գաղափարէ ուրիշ անոր ներհակ գաղափար անցումները՝ հակադրութեան վրայ հիմնեալ գաղափարի արդիւնք են։ Հակառակ խորհրդածութիւններն ալ վոլովսակի վերար կ'արթնցունեն նման խորհրդածութեանց պէս։ Առողջութիւնը՝ հիւանդութիւն, գերութիւնը՝ աղատութիւն, պատերազմը՝ խաղաղութիւն կը ձգէ մտքերնիս։ 5° Ամէն օր կը տեսնենք՝ որ գործը գործաւորը կը յիշեցնէ, հայրը զաւակները. Արդեանց տեսարանը՝ անոնց պատճառին յիշատակը կ'արթնցունէ, ձեռոք բերուած վախճանը՝ այն վախճանին

համելու միջնցները որոնել կուտայ , և դ արձաբարչ  
դիր և մամուլ տեսնողը միմէ անմիջապէս միտքը  
չըբերեր՝ թէ ասոնք դիրք տպագրելու համար են :

Ե . Սկզբանց և հետև ականութեան , նշանին և  
նշանակեալ իրին մէջ կեցած գաղափարաց լծորդու-  
թիւնը մերյիշղութեան մէջ ամէն ժամանակ կըպա-  
տահի : Եթէ գաղափարաց լծորդութիւնը չ'ըլլայ՝  
ընդհանուրէն մասնաւոր , մասնաւորէն ընդհանուր  
հետեցունելու դրութեան հիմքը կամ իմաստասի-  
րութիւնը չի մնար : Եթէ զդացմունքէ կամ զաղա-  
փարէ ՚ի բառն՝ և ՚ի բառէ ՚ի զդացմունս կամ ՚ի գա-  
ղափարս կապակցութեան շատիլ , որ նոյն է ասել  
լծորդութիւն գաղափարաց չ'կենսայ , ինչ կ'ալֆէ ,  
խօսերու կարողութիւննիս , շարժմունքնիս և գրե-  
նիս .

Դ . Յէլլութեան և դուստորաց վարդութեան կըոյ ու-  
ղացունեն : Արդէն ըսած եղելութիւններնիս այնքան  
սոլյորական են՝ որ ամէն մարդ կընայ իւր վրայ վոր-  
ձել , ինդիրն այն է՝ որ գիտնանք՝ թէ ի՞նչպէս կ'ըւ-  
լոյ՝ որ գաղափարներնիս զիրար կըյիշեցունեն և  
զիրար կը բդիմեցունեն : Եղած են ոմանք , ինչպէս  
Տեքարթ , որ ըսած է՝ թէ գաղափարներն յիշելուու  
պատճառն այն է՝ որ անյեալ գաղափարը ներկայա-  
նալուն պէս կենսական ողիներու շարժումը նոյն և  
մի վատիկ կ'անցնի : Ոմանք ալ , ինչպէս են անդա-  
մալնիչք կ'ենդադեն՝ թէ , արդէն գողդողացող  
ջղացին թելը արադապէս թրմուալով է՝ որ կը յի-  
շուին հին գաղափարներ : Ոյս ենթադրութիւնները  
որ յիշողութեան երեսոյթը գործարանաց նիւթա-  
կան երեսոյթի ներքեւ կը գնեն , բնաւ չեն բացարեր

ոչյիշողութեան բնութիւնը և ոչ բմբումանց հան-  
գամանքը : Ըսողներ ալ կան՝ թէ գաղափարաց յի-  
շումը ընդհանուր օրէնքի մը արդիւնք է , որ կը թե-  
լադրէ մարդկային մասց կըկնել նոյն և մի գործե-  
րը , և սկսած բաղադրեալ մի գործը ամբողջացնել-  
չեղեր կը տեսնեմ՝ որ արդէն տեսեր եմ , այս տեղե-  
րուն գաղափարին կը կցեմ անդ բնակեալ մեծ մար-  
դոց գաղափարն ալ իրեւ բաղադրեալ հանաչումն ,  
այս գաղափարաց մէկը մտքիս ներկայանալուն պէս ,  
միւս անոր յարակիցն ալ միտքս կուգայ՝ որով ճա-  
նաչումն կ'ամբողջանայ , երկրորդ գաղափարն ալ ու-  
րիշ խումքը մը գաղափարաց արթննալուն պատճառ  
կ'ըլլայ , այս կերպով մօտ առ մօտ բոլոր մեր ծանօ-  
թութեանց շարքին վրայ կը շրմիմք : Ոյս մասին մէջ  
արթնութեան և քնոյ տարբերութիւնն ոյն է՝ որ  
արթնութեան ատեն ներկայ ըմբոնումնիս մէկ կոլ-  
մանէ իմաց կուտայ մեղ՝ թէ այս գաղափարներէն  
շատը՝ որ վիրար յառաջ քաշեցին՝ այժմ իրապէս  
գոյութիւն չ'ունին , իսկ քնոյ մէջ ոյս ազդարարու-  
թիւնը պակսելուն համար երազական ցնորդներու  
մէջ յառաջ կ'երթանք :

Ե . Կորեուրութեան բարդութեաց վարդութեան : Գաղա-  
փարաց լծորդութիւնը ինչ բանէ յառաջ գալը գիտ-  
նամք կամ ոչ , մեծապէս կարեւոր է յիշողութեան  
համար , և մեծ ազդեցութիւն կընէ մեր իմացական  
հանդամանքի վրայ , որ խորհրդածութիւնը կը  
գիւրացունէ , և սկսալմանց ալ պատճառ կուտայ :  
Միամբունքներ կ'ընեմք , բայց ոչ ապաքէն արմատը  
գաղափարաց սխալ կամ յօսի լոգորդութիւնն է :

Մանկան մը անմեղ երկիրդէն՝ որ վտանգի  
գաղափարը խաւարի հետ կապելով՝ մութը մինակ

շրջելու կը սոսկայ , մինչև մեծ մարդոց մեղապարտ մղորութիւնը՝ որ իւր երջանկութիւնը կախեալ կը համարի թշնամոյն մահուանէն . մեր բոլոր նախապաշարմունքները և սնապաշտութիւնները ուրիշ աղքիւր չ'ունին , այլ միայն գաղափարաց լծորդութիւնը :

Բայց ոչ այսչափ , մոտքերնիդ բերէք առընչութիւններ՝ որ 'ի նմանութենէ , 'ի հակադրութենէ , և ժամանակի ու տեղւոյ պատշաճութիւններէն յառաջ կուգան : Այս առընչութիւններն են՝ որ կերպով մը մեր խօսակցութիւնը զբայլելի կ'ընեն , այլև այսութիւն , չնորհք , և զուարձալիք լեցնելով խօսից մէջ : Սակայն , չափաղանց յառաջ տանելնուս պէս՝ մտքերնիս կերպ մը անկարիր երազոց մէջ կիցնայ՝ յորս քանի մը երևակայական փայլմունք կը ցայտին , բայց կարգն ու միութիւնը կը կրոսնցունենք : Խորհրդոց անկարգութիւնը մեր նկարագրին վրայ ազդեցութիւն կ'ընէ , զդացմունքնիս անկայուն կը լինի , վարքերնիս թեթև և անհետևական , բոլոր կարողութիւննիս կը տիկարանայ և կը մոլորի :

Կայ , ինչպէս տեսանք արդէն , կարգ մ'ուրիշ լծորդութիւն գաղափարաց , որ ուշադրութիւնը լնելու յատուկ ուժ կը պահանջէ , ինչպէս են լծորդութիւն գաղափարաց հիմնեալ յառընչութեան պատճառի ընդ արդեան , միջոցի ընդ վախճանի , սկզբունքի ընդ հետևականութեան : Ասոնք աշխատալից են՝ և միակերպութեան համար ձանձրանալի , բայց երբ անդամ մը մտքերնիս իշխանութիւն կ'ըստանայ ինք իւր վրայ տիրելու , և կարգ ու կանոն յարդելու , կ'ստանայ գաղափարաց այնպիսի շարունակութիւն և այնպիսի խորութիւն , որով միայն կը ստանայ գիտութիւն ձեռք բերել :

Մարդու մը դատումն ուղիղ ըլլալուն պէս՝ ինքն ալ ուղիղ կ'ըլլայ , վարքը կանոն կ'ունենայ , զգացմունքները հաստատուն կը լինին : Մարդու մը ինելքն ալ ինչ որ շահէ՝ սիրտն ալ անկէ օդուտ կը տեսնէ , բաւական է որ սիրտը երաշտութենէ չ'վսասուի :

Այս դատուն գործնական հետեւութիւնն այն է՝ որ գաղափարաց լծորդութիւնը ամենէն աւելի խնամք և ուշադրութիւն պահանջող վիճակնիս է , մանաւանդ մանկութեան և պատանեկութեան ժամանակ : Դաստիարակութեան յաղթանակն յայնմէ՝ որ սխալ և յուսի լծորդութիւններէ կը պահպանուի աշակերտը , և ընդ հակառակն ՝ կ'ամրանան և կը զօրանան այն լծորդութիւններն՝ որք մտաց և սրտի ուղղութիւն կը պատճառաւեն :

Զ . Կամոց ողբեյութեանը յէջողութեան՝ յրայ և գաղափարաց լծորդութիւններն կրնան մեր յիշատակներն արթնցունել առանց գործակցութեան կամաց , բայց երբ մէկ անդամ այն լծորդութիւնները կը ծնանին , կամքն շատ բաներ կը լինայ ընել անոնց վրայ : Առաջ կամքը վրայ հասնելով կը յատակէ և կը ծցդէ , յետոյ մէկ կողմանէ յատակածին քով ուրիշ աւելի մեծ ու նոր լծորդութիւններ յատաջդալով միանալուն կ'օգնէ : Վերջապէս , կարեւորութիւնն յայսմէ՝ որ կամքը , մինչև մէկ աստիճան , կրնայ իրեն յարմար տեսած մէկ պատշաճութեան հետ մեր խորհուրդները կապակցել : Ոչյոտ կ'ըսէ՝ թէ կամքերնիս իւր խորհրդոց հետ այնպէս կը վարուի ինչպէս պալատականն իւր ծառայից հետ : Սա ինչպէս որ առաւտուն սենեկն դուրս ենելուն

պէս՝ բոլոր պալատականք ողջունի կը կանգնին դիմացն, և կ'սպասեն դուրս ելելուն, այսպէս է կամքերնիս ալ. մէկուն ողջոյն կուտայ՝ միւտոյն երեսին կը ժպտի, երրորդին հարցում մը կ'ընէ, չըր. ըրորդը մօտը կը կանչէ և հետը խօսակցելու պատիւը կուտայ. մեծ մասն ալ ինչպէս երեցան՝ այնպէս պարապ տեղերնին կը դառնան։ Այսպէս ալ մեր մոտաց առջև ելլող խորհրդոց շատերը կը խուսեն, բայց ուղածնիս առջևնիս կը բերենք, սիրածնուս վրայ կը մոտածենք, և ուղած աստիճաննիս կուտանք։ կամքերնիս կրնայ այլանդակ՝ բայց հեշտավիթ լծորդութիւններուն երես տալ, քան թէ օրինաւոր՝ բայց դժուարին լծորդութեանց ։ Յիշողութեան վրայ կամքին այս իշխանութիւնը ծնունդ տուած է Յուշարար ըստած կերպ մը արուեստաւոր հնարքին. որ է յիշողութիւն դիւրացնելու համար յիշելը դիւրացնող գաղափարներուն մեր յիշատակները լծորդել։

Ե. Երեւակայութիւնն. Երեւակայութիւնն է կարողութիւն շինելու այնպիսի գաղափարներ՝ որոց բընաւ իրական առարկայն չ'կայ։ Ինչպէս, ոսկի, լեռուըն, թեւաւոր ձի, և այլն։ Իլիականնին մէջ երրորդ կը կարդամք Աքիլլեսի վահաննին ստորագրութիւնը և Հոմերոսի դիւցազանց պատերազմը առ որմնիք Տրոյից, Տանդէսի և Վիրդիլիոյ դժոխոց մէջ պըտաբերազմը, Միլտոնի դրախտ կօրուսեալը, Աղեքսանդրը Տիրմայի Մօնթէ. Քրիստոն և այլն գիտեմք՝ թէ ասոնք այնպիսի գաղափարներ են՝ որ իրականութիւն չ'ունին, այլ երեւակայութեան դործեր են։

Երեւակայութիւն Նինար սուելչեւ թեթեւ ուշադրու

թիւնն ալ բաւական է իմանալու՝ թէ երևակայութեան բերքերը որքան ալ կարդէ դուրս լինին, սակայն և այնպէս իրական տարերքներէ կը կազմուին։ Ասէ ։ Եւսան երեւակայելով՝ որ յիրաւի բնութեան մէջ չ'կայ, ստեղծած չեմ ըլլար, այլ երկու իրական գաղափարներ մեկտեղ բերելով՝ բաղադրութիւն ըրած կ'ըլլամ։

Վերլուծեցէք բանաստեղծութեան, նկարչութեան և արձանագործութեան բոլոր գործերը, քըննեցէք վիպասանական ամենէն անկարելի ձեւերը, ինչպէս նաև ամենէն բնական պատկերացումները, պիտի տեսնէք՝ որ հաւաքածոյք են այնպիսի գաղափարաց՝ որ իսկապէս բնութեան մէջ ասդիս անդին կան, զորս երեւակայութիւնը ժողովներ, լծորդեր և ամբողջ մը շիներէ իւր յատուկ օրինաց համեմատ։

Վերլուծեցէն Երեւակայութիւնը տարբական կարողութիւն մը չէ, այլ միանական կարողութիւն մը՝ որ իւր պաշտօնը վարելու ատեն ուրիշ կարողութեանց պէտք կ'ունենայ. Ինչպէս, ձերական իրեն նիւթ կըներկայացնէ, Քրոնուք ներկայացուցած նիւթը կը բահնէ, և մէկ որակութիւնը, գիծը, կամ այն մասերէն մէկը կուտայ երեւակայութեան՝ որոց միասնութիւնը հաւասարի նիւթը կըներկայացունեին. Քաղաքութեան գործութիւնն ալ քակտեալ մասերն իրար կը բերէ. և մոքին կը յանձնէ՝ որ կազմաւորէ։

Բայց երեւակայութիւնը երկու տարբեր վիճակ կ'ունենայ, երբեմն միայն այս երեք տարբական գործողութիւններով գոհ կ'ըլլայ, երբեմն աւելի բանաւոր գաղափարներով՝ ճշմարտի, բարւոյ եւ գեցիլի եւ ասոնց հետ յարակցութիւն ունեցող ըլլ-

զացմանց կ'զբաղի : Առաջին դէպքի մէջ, երեւակայութիւնն յառարկայի յառարկայ կը վաղէ մերթարադութեամբ եւ մերթանադանելով, միշտ շարժուն եւ քմահաճ պատյաներով, յորում մտքերնիս աւելի կը թափառի քան կը քալէ . եւ երանի էր՝ եթէ իւր յատուկ գաղափարաց վրայ բոլորպին թմբելով իրականութիւնները անոնց չք զոհեր . երեւակայութեան այս վիճակը քնոյ մէջ երան կ'ըլլայ, արթնութեան մէջ դանդա՞նու՞ն, իւլցնո՞ւ եւ յէ՞րդո՞ւնիս : իսկ երկրորդ դէպքի մէջ, այսինքն երբ երեւակայութիւն ջերմանայ գաղափարաւ եւ զգացմամբ գեղեցիկի, կամ երբ բանականութեամբ լուսաւորեալ եւ առաջնորդեալ լինի, արուեստք եւ գիտութիւնք կը ծնանին : Այս վիճակի մէջ երբ իմաստունը ծայրը համանի փորձառութեան, կ'երեւակայէ ենթադրութիւններ՝ որպէս զի բացարի այնպիսի եղելութիւններ, որոց պատճառը աչքի տակ չ'կնար : Արուեստից մէջ ո՛րքան հզօր աղդեցութիւն ունի երեւակայութիւնը . յայսմ, յիրաւի արարող է, եւ բնութեան հետ զարմանալի կերպիւ կը մրցի : Եթէ գործածած նիւթերը փոխառութիւն են, դոնէ բաղադրութիւնը անանկ ծածուկ կանոնովէ, որ մարդկային հոդւոյն ամենէն խորը կը գտնուի, այս կերպով երեւցան աշխարհի վրայ զարմանալի գործեր, որոց վրայ կ'զմայլիմք : Ամէն մարդոց մէջ մէկ կերպ չէ այս կարողութեան գործնէութիւնը, բնական կազմը, նկարադիրը, սովորութիւնը, կիմայն, քաղաքական եւ կրօնական զգացումները, մարդկային հոդւոյն աղդեցունէն կը գորացունէ : Ներկայ բարիքէն աւելի նախամեծ արելի բարիք բերելով առջեւնիս, կը սրտապնդէ՝ որ աշխատիմք ու ձեռք բերեմք : Ասոր համար է՝ որ երբեմն մար-

նին իրենց երեւակայութեան բերքերը : Երկրին և յամանակին նախապաշարմունքները, ճաշակները, կանոնները, եւ այլն մեծ տարրերութիւններ կը բերեն երեւակայութեան վրայ :

Երեւակայութեան պարեցունեանը : Եթէ երեւակայութեան յատուկ հանդամանքը միայն կեղծիքները ըստեղծել է, դիւրին է գուշակել, թէ ի՞նչ աղդեցութիւն կրնայ ունենալ մորքի եւ սրտի վրայ :

Ամենէն յառաջ կը բանայ մարդուն առջեւ վայելմանց նոր աղբիւր մը՝ որ առաքինութեան ըղմայլանքէն ետքը՝ ամենէն անոյշ զմայլումն է : Ասկէց զատ, ոչ ապաքէն ասոր կը պարտիմք արուեստից հեշտաւթիւնները : Հասակը չը ցամքեցունէր երեւակայութեան ակը, 'ի փոքր տիոց մինչեւ 'ի խոր ծերութիւն կը զուարթացունէ եւ կը միխթարէ մարդկային սիրտը . սակայն, ոչ միայն ուրախութիւն եւ հեշտութիւն, այլ նաեւ նեղութիւն եւ չարչարանք ալ կը բերէ, ինչպէս են, ունայն անհանդատութիւններ, սուտ երկիւզներ, մտացածին արհաւտիրքներ, կը տրամեցունէ զմեղ եւ կը նեղէ ոչ միայն կրած ներկայ ցաւերով՝ այլ եւ կարելի նեղութեանց համար, եւ ոչ միայն մեր յատուկ եւ անձնական վտանգնին՝ այլ եւ ծնողաց, բարեկամաց եւ մեղնէ հեռի եղող անձանց վտասուն համար ալ :

Երեւակայութիւնը մեզի ներգործած գաղափարներով եւ մեր ներսը թելադրած զգացումներով՝ մեր գործնէութիւնը կը զօրացունէ : Ներկայ բարիքէն աւելի նախամեծ արելի բարիք բերելով առջեւնիս, կը սրտապնդէ՝ որ աշխատիմք ու ձեռք բերեմք : Ասոր համար է՝ որ երբեմն մար-

դիկ աւելի շահագէտ կ'ըլլան եւ բաղդովի ձեռ  
նարկոթիւններ կ'ընեն . Ասոր համար է՝ որ հայ-  
քենեաց կամ մարդկային ազգի փրկութեան հա-  
մար վեհ սրտեր անհնարին ձեռնարկութեանց կը  
յօժարին ։ Ավակայն , երբոր հոդին իրականութիւն  
չ'ունեցող ցնորդներու շուտ շուտ եւ դիւրապէս  
յարել սովորի՝ տակաւ առ տակաւ դրական կեանքը  
կամ գործնական կենաց ճիշդ արժէքը կամ ողջմը-  
տութիւն ըսուած բանը կը մոռանայ ։ Երեւակայա-  
կան մարդը իւր ընթացքը ներկայ կեանքին յար-  
մարցնելու տեղ՝ երեւ ակայած կեանքին կը ջանայ  
յարմարցունել , եւ վտանգաւոր ձեռնարկութիւն-  
ներ ընել . Անդէտ կը մնայ իրաց՝ զոր սորվելու հա-  
մար չէ աշխատեր , անծանօթ կը մնայ մարդոց եւ  
կը վիրաւորէ ու կ'անպատռէ :

Երեւակայութեան աւելի վտանգաւոր մէկ պա-  
րագայն ալկայ , երեւակայութեան չափազանց և որ-  
խալ կապուող մարդը կը զղուի մարդ կային արդի  
կեանքէն , այլ , յանդիման ընութեան , մրայնակ և  
բաժաննեալ ապրելով ընկերական կապակցութենէ ,  
կ'սպասէ արբենալ երեւ ակայութեամբ . Այս ազետապի  
ցնորդը զարդացունելու կողմանէ մեծ գեր կը խաղան  
վիպասանութիւնները , ասոր համար վիպասանու-  
թեանց ընթերցումը վտանգաւոր է մանաւանդ երի-  
տասարդաց համար . երբ վիպական երազներով  
երեւակայութիւննիս խանդարի , դարմանելու միջոցն  
ուրիշքան չէ , եթէ ոչ գործ գործել , որ միայն հնար-  
քըն է սուստ ակնկալութիւններէ հեռանալու և իրա-  
կան կեանքն սկսելու :

— Օ՞ն , կ'աղաղակէր իմաստուն մը , օ՞ն , ողոր-  
մելի՛ յափշտակեալ , գնամ , մոտի՛ր մարդիկներուն յա-

ճախած տեղերը , հասարակաց կարգը մտի՛ր , իշ-  
խանութիւն ձեռք բերելու , փառք շահելու հա-  
մար ինչ որ կ'ընեն բարձր ողիներ՝ այն բաներն ընե-  
լու հոգ տար , կարաւանին մէջ մտի՛ր , որ նոր նոր  
տեսարաններ ելլեն գիմացդ , աշխարհէ աշխարհ ,  
լեռնէ լեռ գնա՛ , ուր մրցման վողը կը գոչէ և աս-  
պարէկ կը կարդայ , մոռցի՛ր ինքնագործ և թոյլ  
խորհուրդներդ՝ որ մարդու պատիւ չեն բերեր .

Երբ բան մը ուժով բռնէ մեր միտքը, այնու-  
հետեւ ուրիշները չ'ենք աեսներ, մինչև իսկ խօսա-  
մօտերնիս եղողներն ալ ։ Երբ թատերական տեսա-  
րանի մը ներկայ գտնուինք, ո՞չափ ու շադրութեամբ  
նայիմք բեմի վրայ՝ այնքան աւելի մտիկ կ'ընեմք գե-  
րասաններուն ըսածները, և այնքան աւելի խաղին  
ամէն մէկ տեսարաններէն կը յափշտակուիմք և փո-  
խարէն մեր շորջը և մօար եղած որիշ բաներ չ'ենք  
տեսներ և չ'ենք իմանար ։ Պատերազմի սաստկու-  
թեան ժամանակ՝ զօրական մը կը վիրաւորուի, բայց  
չ'իմանար անդամ թէ վիրաւորուած է ։ Կըսեն ։ Թէ  
Արքեմիտէս խնդիր մը լուծելու զրազած միջոցին,  
Սիրակուսան Հոռվմայեցիք առին, չ'իմացաւ, և զոհ  
գնաց իւր չափազանց խոր ու շադրութեանը ։ Ույտ  
կ'ըսէ ։ Թէ մարդ մը կը ճանչնայի որ յօդացաւի հի-  
ւանդութիւնն ունէր, ցաւը սաստկանալուն պէս  
թապլինը բերել կուտար ։ կը խաղայր, այնքան կը կր-  
քուէր այս խաղին վրայ, որ որքան շահէր և ուշադ-  
րութիւն ընէր վրան՝ այնքան ցաւը կը մոռնար ։

2° Ուշադրութիւնը կը չինէ որոշ, յստակ և ճիշդ-  
գաղափարներ, և առիթ կուտայ ասոնց մէջ խառ-  
նելու խումբ մը այնպիսի յատկութիւններ՝ զորս վեր  
՚ի վերոյ տեսութիւնը չ'կրնար ըմբռնել ։ Ինչպէս  
իմաստուն մը ըսած է, տեսակ մը խոչորացոց է, որ  
առարկայները կը մեծցունէ, և ամենէն փոքր գծերն  
ալ երեան կը բերէ ։ Եթէ ու շադրութիւնը չ'ըլլայ,  
խառն ՚ի խուռն շատ մը ըմբռնումներ կ'ունենայ,  
որ իրար կը խառնուին և զիրար կը ջնջեն, և ծանօ-  
թութիւն կամ դաղափար ըսուիլ չ'են արժեր ։

3° Վերջապէս, ուշադրութիւնը յիշողութեան  
պայմաններէն մէին է ։ բան մը միտք բերելու համար

ԳԼՈՒԽ Բ,

*Suite des facultés intellectuelles*  
Դարձեալ խմացական կարողութեանց վրայ .  
Ուշադրութիւնը առաջատութիւն ։ —  
Ընդհանրացում :

*attention et reflexion*

Ո. Ուշադրութիւն և խորհրդառնութիւն : Երբոր բրի  
մը դադարէն նայիմք առաջակայ դաշտին վրայ, մէկ նայուած քով տեսարանին բոլոր կտորները կ'ըմ-  
բռնեմք . մարդ, մացառ, ծառեր, ոչխարաց հօտեր,  
ձորեր, հեղեղատներ, և այլն . Սակայն, այս ամէնը  
մէկէն դիտելու անորոշ և մժին տեսարանին կրյա-  
ջորդէ քիչ քիչ մանրամասնութեանց քննութիւնը :  
Շատ մը բան մէկէն հասկնալու ջանքէն յոդնելով՝  
մոքերնիս կանգ կ'առնու մէկին վրայ, ասկէց ետքը  
միւսին, յետոյ երրորդին, այսպէս հետզհետէ ամե-  
նուն վրայ կը պատրինք, իւրաքանչիւր առարկային  
վրայ այնչափ ատեն նայելով՝ որչափ որ հարկ կ'ըլլայ՝  
լաւ ճանչնալու համար . Առարկայի մը վրայ այս միտք  
ուղղելը և հասկնալու ջանքը կ'ըսուի ուշադրութիւն . որ  
եթէ հոգւոյն ներքին գործողութեանց վրայ ըլլայ,  
այսինքն դիտակցութեան երեսութից վրայ, կ'ըսուի  
խորհրդառնութիւն :

Ուշադրութիւնը երեք դիմաւոր արդիւնք յա-  
ռաջ կը բերէ .

4° Նկատած առարկայներնուս մեր վրայ ըրած  
տպաւորութիւնը կը մեծցունէ, և միայնակ տիրա-  
պետել կուտայ :

պէտք է որ վրան ուշադրութիւն ըրած ըլլամք ։  
Եթէ մէկը ընդարձակ ճառ մը լսէ , բայց ուշադրու-  
թիւն չ'ընէ , իրեն ի՞նչ կը մնայ — ոչինչ . Երբ երկու  
հոգի չերաջերմ կը խօսին շահաւոր նիւթոյ մը վրայ  
իրարու հետ , և նոյն միջոցին ժամացոյցը զարկեր է ,  
ականջնին կրնայ լսել , եթէ ուշադրութիւն չ'ընեն ,  
կամ կրնան գիտալ թէ քանի է ժամը և քանի զար-  
կաւ : Ուշադրութեան այս սովորական արդիւնքնե-  
րէն կը հասկցուի թէ՝ ի՞նչ կարեղոր հետևանքներ  
կ'ունենայ այն մարդոց վրայ՝ որ սովորութիւն կ'ընեն  
իրենց այս կարողութիւննին լաւ գործածելու . Այս  
պիսի մարդիկ ամէն բան մանրամասնորէն կը քննեն ,  
ամէն պատճառներ կը կշռադատեն , ամէն գժուա-  
րութիւն , ամէն անպատշաճութիւններ կ'խմանան .  
այս է պատճառն որ , ինչպէս Փօսիւէ բած է , մարդ-  
կայ՝ որ ծանրաբարոյ ներկուու , խոհեմ , մեծամեծ  
գործեր և բարձր տեսութիւններ ընելու յարմար  
կ'ըլլայ , մարդ ալ կոյ՝ որ ծանծաղամիտ , անհմուտ ,  
անխոհեմ , և մոտաւորական տեսութիւնը վեր ՚ի վերոյ  
կ'ըլլայ :

Նորութիւն , հակադրութիւն , և փոփոխու-  
թիւն ուշադրութիւն կ'արթնցունեն , իսկ եթէ  
ասոնք չ'կենան մեր գործարանաց վրայ յոդնութիւն  
կիյնայ չեն զ իմանար երկար ատեն նցն և մի առար-  
կայի վրայ հաստատուելու : Սակայն , կամաց աղ-  
դեցութենէն ալ աղաս չը կրնար մնալ ուշադրու-  
թիւնը , երբ ուզենք և ո՛ր բանի վրայ որ ուզենք  
ուշադրութիւն կրնանք գնել , ասոր համար մեր  
մոլորութեան մէջ մնալու պատասխանատուն և յան  
ցապարալ մենք ենք , զի այն մոլորութեանց շատը  
մեր կամօքք կրնանք փարատել՝ ուշադրութիւննիս  
լաւ գործածելով :

## Comparaison

Բ . Բաղդադութիւն : Մաքերնիս մէն մի առարկայ  
ուշադրութեամբ նկատելէ յետոյ իրարու կը մօտե-  
ցունէ , անոնց մէջ կեցած նմանութիւնն և տարբե-  
րութիւնը կը բռնէ . Այս նոր գործողութիւնն ալ  
բաշտագութիւն կ'ըսու ի :

Մ'աքքը բաղդատութիւն կատարած պահուն  
երկու առարկայ միանգամայն առջե կը բերէ , եր-  
կու առարկայի միանգամայն ուշադիր կ'ըլլայ : Աւ-  
րեմն բաղդատութիւնն ուրիշ բան չէ , այլ զյու կամ  
կրնակ ուշադրութիւն՝ որոյ մէջ փափագ խառնու-  
ած է երկու գաղափարաց յարաբերութիւնը տես-  
նելու :

Վասն որոյ . ինչ որ է ուշադրութիւնը էապէս ,  
նոյն է բաղդատութիւնն ալ , այսինքն կամաւոր գոր-  
ծողութիւն , զոր զանազան պատճառներ կրնան  
աւելի դիւրին , երագ և ապահով ընել . բայց միշտ  
կամաց ազգեցութեան ներքն է :

Այլ և պէտք չէ բաղդատութիւնը շփոթել առ-  
ընչութեան գաղափարի հետ , որովհետեւ այս վեր-  
ջինը մարդուս աղատ գործօնէութենէն կախեալ չէ :  
Երբեմն մոտաց կամաւոր գործողութեան ներքեւ կ'ի-  
նայ , երբեմն կամքի ետևէ չ'երթար , և մինչև իսկ  
կը հակառակի ալ :

Բաղդատութիւնը աղբիւր է մեր գաղափարաց  
մէծութեան , բարձրութեան , հաւասարութեան ,  
համեմատութեան , փոփոխութեան , յառաջադի-  
մութեան և այլն . Բաղդատութիւնը գատմանց մէջ  
կը մօնէ , ենթակայ և ստորոգելի իրարու կը մօտե-  
ցունէ , մէջէրնին կեցած պատշաճութիւնն ու ան-  
պատշաճութիւն կ'արտասանէ . Վերջապէս առար-  
կայից մէջ կեցած նմանութիւնն ու անմանութիւնը

բանալով՝ մեր անոնց վրայ ունեցած գաղափարաց  
ճշդութիւն և յստակութիւն կուտայ :

### ԱՅՍՏՐԱԾԻԾ

Դ. ՎԵՐԱԳՈՒՅՆ : Մաքերնիս առաջին անգամ իրն  
ու անոր հանդամանքները միասնաբար կը բռնէ :  
Եթէ, օրինակի համար, պտուղ մը անցնի ձեռքս,  
միանդամայն կը տեսնեմ անոր ձեւը, դոյնը, կշխուը,  
հուռը : Բանի մը հանդամանաց միասնութիւնը նայա-  
ցացաւ գաղափարն է, մէկ հանդամանքի միայն բա-  
ցառիկ ներկայութիւնը վերացկան գաղափարն է :  
Վերացական գաղափարներ չինելու գործողութիւնը  
կ'ըսուի վերացուն :

Ախալ է կարծել՝ թէ վերացումը բաղադրեալ  
և հազորագէպ գործողութիւն է, ասոր չափ տարդ  
և յաճախ աեղի ունեցող բան չըկրնար ըլլալ . Առա-  
ջին անգամ՝ զգայարանքնիս մասնական հանդա-  
մանքներ գիտելու կարողութիւնն ունին, օրինակի  
համար, աչքը միտյն դոյն կը բռնէ, ականջը՝ ձայն :  
Ճաշակելիքը համ : Ասկէց զատ խելքերնուս ալ ոչ  
նուալ բնական է վերացումն ընել . պատճառ, գոյա-  
ցութիւն, ժամանակ, միջոց, բարին, գեղեցիկը որո-  
նելու ժամանակ : Վերջապէս բարբառն խիլ վերա-  
ցումն ընելու միջոց է, որովհետեւ շատ բառեր՝  
առարկայից միայն մէկ կողմը կրնան նշանակել :

Եթէ վերացումն ընելու կարողութիւննիս չըլ-  
լար՝ գիտնական այնչափ հետազտութիւններ ալ  
իրենց գիտաերը չէին ունենար . Ամէն գիտութեանց  
արմատը մէկ կամ մէկ աւելի վերացական գաղա-  
փարներ կան : Ճարածութեան վերացական գաղա-  
փարը երկրաշտիւթեան հիմն է . շարժման վերա-  
ցական գաղափարը յաւագ բերած է մեքենագիտու-

թիւնը կային . վերջապէս բարւոյ և չարի գաղափարը  
սկիզբն է բարոյականի և անոր հետ յարաբերու-  
թիւն ունեցող բոլոր դիառութեանց :

Բայց վերացումը օդատակարութեան հետ՝ ան-  
պատշաճութիւններ և վտանգներ ալ ունի : Մեր  
գաղափարաց մին ՚ի միւսմէն բացառութեամբ դա-  
տերու ժամանակնին՝ մէջերնին կեցած յարաբերու-  
թիւնը կը մուռնամք, և, որ աւելի աղետապին է՝ պար-  
զապէս հանդամանք եղաղ բաներուն էական գոյա-  
ցութիւն, մինչև խիլ մերոյն պէս անձնաւորութիւն,  
խմացականութիւն և աղասութիւն կ'ընծայեմք : Վե-  
րացումներ իրականացնելու այս սխալը հիմն է հե-  
թանուական կրօնից, որ անձնաւորութիւն կ'ըն-  
ծայելը բնութեան զօրութեանց, և մարդկային մոլո-  
թեանց և առաջինութեանց :

### ՀԵՇՎԱՐԱԿԱՆ ՀԵՇՎԱՐԱԿԱՆ ՀԵՇՎԱՐԱԿԱՆ ՀԵՇՎԱՐԱԿԱՆ

Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐԱԳՈՒՅՆ : Մէկ առարկայի միայն յա-  
տուկ եղած հանդամանքը շատ մը առարկայներու  
վրայ ալ տարածել՝ ընդհանուրացն ընել է . Պետրոսի,  
Պողոսի, Յովհաննէսի գաղափարէն՝ սկսել՝ երթալ,  
բարձրանալ բոլոր հորդէնետն գաղափարին՝ ընդ-  
հանրացունել է :

Ընդհանուր գաղափարներ կաղմելու երկու  
միջոց կան . 1. Վերացումն, 2. բաղդատութիւն :  
Վերացմամբ կը կաղմեմք մասնաւոր հանդամանաց  
գաղափարը . կը տեսնեմք, օրինակի համար, որ  
Պետրոս իմացականութիւն և գործարանաւորեալ  
մարմին ունի, բարդատութեամբ ապահով կըլլամք  
թէ այս հանդամանքները շատ մը էակաց վրայ ալ կը  
գտնուին : Որովհետեւ բոլոր ընդհանուր գաղափար-

ները մէկ աստիճան ծառալ չ'ունին . ասկէց յառաջ եկած է տեսակի , սեռի , ցեղի , կարդի և այլն գաղափարները . Մ-ըրդում գաղափարը կը բովանդակէ բոլոր մարդիկ , ուստի աւելի ընդորձակ է քան Աւելցոյն գաղափարը . բայց աւելի հասկանալի է այս վերջինը , զի , անկախ՚ի հանդամանաց՝ որ սեպհական է բոլոր մարդոց , կ'որոշէ թէ ընդհանուր մարդոց մէջ այս մարդը Ասիա ըսուած Աշխարհիս մէկ կողմը ընակողներէն է : Ընդհանրացումը կը համառօտէ հետազօտութիւնները և կ'օգնէ յիշողութեան . բայց ընդհանուր գաղափարները սա թերութիւնն ալ ունին՝ որ կրնան անորոշ և անբաւական ըլլալ զիառարկացից միայն նմանութիւնը կը ցուցնեն , տարբերութիւնը չեն ցուցներ . մարդիկ , աւելի կենցաղադիտութեանց մէջ , այնշափ փոյթ չեն տանիր դիտալու՝ թէ յորո՞ւմ կրկայանաց անձանց կամ իրաց նմանութիւնը , և թէ ինչ էական հանդամանքներով այս կամ այն իրարմէ կը տարբերին : Այս է պատճառը՝ որ շատ մարդիկ մէկէն՚ի մէկ կը վաղեն գէպ՚ի հանրացումն , ամէն բան կը շլոթեն , և հետևապէս ամէն բանի մէջ կը խսարուին :

Միջին գարու մէջ վիճաբանութեան գլխաւոր նիւթեղած էր գիտնալ՝ թէ ընդհանուր գաղափարները յատուկ առարկայի՝ կը պատկանին՝ որոշ յանհատական առարկայից , թէ սոսկ անուանական են : Ուստին կարծիքն ունեցողները էրական կ'ըսուին , երկրորդը ունեցողներն ալ Անառանկան : իրականաց մէջ էին Անսերմնա , Տունա Ակովտ և այլք . Անուանականաց մէջ Առասկեղինոս Անդղիացի , Գուլիելմոս Ովկամոս . Ուրիշ փիլիխոփայներ ալ , յորս գլխաւոր էր Ապելարտոս , կը պնդէին՝ թէ ընդհանուր գաղա-

փարները ոչ բառեր են և ոչ իրեր , այլ մուքի ըմբռոնումներ , ասոր համար ասոնք ալ ըսուեցան հաւատութեան : Այս երեք կարծիքներն ալ սիսալ են : Թող ընդհանուր առարկայները մտօք ըմբռնելի գաղափարներ ինչին , և բարբառը մտքին ըմբռնումը գիւր բացընելու համար անոնց անուն տուածինի , սակայն միթէ կինանք ուրանալ գոյութիւննին : Եթէ լոկ գաղափարներ են , կամ եթէ անոնց ներկայութիւնը միայն մտքի մէջ կայ , իրապէս կեցողները միայն անհասներն են , կամ եթէ անհատներն իրար կապող նմանութիւնը բոլորովին դիպուածական է , սակայն ինչու նոյն նմանութիւնը դաշրաւոր ժամանակներէ ՚ի վեր է՝ որ կը կենաց , ինչ է այս կայուն և միակերպ օրէնքները , սեռի և տեսակի այս մշանջենաւորութիւնը՝ որ տիեզերաց ամէն կարգերու մէջ կը թագաւորէ :

Ապաքէն , տիեզերական գաղափարները մտքի ըմբռնումն են , ինչպէս կ'ըսէր Ապելարտոս , բառերը կը գործածուին զանոնք կազմելու համար , ինչպէս կ'ըսէր Ո. Պոսկեղինոս . սակայն տիեզերականներուն պատասխանը կայ , մտքերնէս գուրս , մնայուն հանդիտութեանց մէջ , իրաց միակերպութեան մէջ : Եւ ինչ է այս հանդիտութեանց և միակերպութեանց վերջին հիմք , Աստուծոյ իմաստութիւնը՝ որ տիեզերքը օրէնքի տակ գրեր է , և իրաքանչիւր արարածի իւր կարգը նշանակեր է :

վերացական գաղափարն ալ շինուած չ'պիտի ըլլար  
մոտաց մէջ :

Իսկապէս բուն դատելը՝ հաստատեն է, և այս  
է դատման սահմանը . հաստատել թէ այս ինչ բանը  
կայ կամ չ'կայ: Մտքերն ոչ միայն գաղափար կ'ունե-  
նայ զգայարանաց, գիտակցութեան և բանականու-  
թեան ձեռօք, այլ որ առաւելն է՝ կը հաւատայ՝ կը  
հաստատէ թէ այս գաղափարները ճշմարիտ են, այ-  
սինքն հաւատայի իրականութիւն ունին : Ուրեմն  
դատման եղելութիւնն է հաւատայի իրականութեան  
ուժդին և կենդանի համոզումն : Ապաքէն, երբեմն  
ժխտական ձևի ներքեւ ալ դատումն տեղի կ'ու-  
նենայ, սակայն աւելի լեզուաբանական խաղէ եղա-  
ծը՝ քան իսկապէս դատման տարբերութիւն, ամէն  
ժխտումն ալ լւելեայն հաստատութիւն է, և կրնայ  
շատ դիւրաւ դառնալ, երբ որ ըստմ՝ հոգին նիւթե-  
զէն չէ, ոչ ապաքէն նոյն է ասել՝ թէ հոգին է աննիւ-  
թեզէն կամ ոչ նիւթեզէն :

Դատումը իրկե հաստատելու կարողութիւն՝  
մոքի ամէն գործողութեան մէջ կը մոնէ : Երեակա-  
յութենէ զատ՝ արդէն մուաւորական գործողու-  
թեանց ամենուն վախճանն ալ այս հաւատքն է՝ թէ  
առարկայք այնպէս են՝ ինչպէս որ կը ներկայանան  
մեղ : Վասն զի մեր մոտաց զանազան տեսակ դործո-  
ղութիւնները ուրիշ բան չեն, այլ միայն իմացումն  
զարգացեալ և վարեալ ի ծանօթութիւն ճշմարտու-  
թեանց : Արդ մեր իմացողութիւնն այս է՝ որ հա-  
ւատք ունի իւր ճշմարիտ ըլլալուն, և ոչ ոք այս հա-  
ւատքը կրնայ իրմէն վերցնել . ինչ որ ընենք, և  
ինչպէս ալ խորհուրդ տանք՝ չենք կրնար համոզել  
որ չ'տեսնէ ինչ որ կը տեսնէ, չ'հաստատէ ինչ որ

Ա . — Դատումն = Երբոր մոքերնիս գաղափարներ  
առնէ և իրերաց հետ բաղդատէ, անմիջապէս կ'ի-  
մանայ՝ թէ ումանք իրարու հետ առընչութիւն ունին  
ումանք ալ չ'ունին . կ'իմանայ, օրինակի համար, թէ  
Աստուծու գաղափարը բարեւութիւն գաղափարին հետ կը  
միաբանի . իսկ աստուծութիւն գաղափարին հետ չը  
միաբանիր : Երկու գաղափարաց վերաբերութիւնը  
իմանալ՝ դատել է : Աստուծութիւնն է, Աստուծու անորդար  
է . դատումներ են :

Դատման կարևորութեան և մոտաց զարգացման  
մէջ կատարած պաշտօնին ըսելիք չ'ունինք . բայց  
հասկնալու պարագայ մը՝ որ կայ՝ սա է թէ դատման  
բուն յատկութիւնը, շատ մը արամաբանից ըսածին  
պէս, նմանութեան կամ առընչութեան գաղափարին  
մէջ չէ . ասիկա դատման սովորական պաշտօնը և  
երեցած հանգամանքն է : Որովհետեւ ենթագրել է՝  
թէ միտքը դատումն ընելու համար միշտ երկու  
գաղափար պիտի ունենայ, իրերաց հետ պիտի  
բաղդատէ, և բաղդատելով առընչութիւննին պիտի  
իմանայ, որ այսպէս չէ, օրինակի համար, սա դա-  
տումը . և գոյն կամ է է, որ ամենէն պարզ դատումն  
է, կը կատարեմ առանց ունեցած ըլլալու և ի և գոյն-  
նեռն գաղափարը . աւելին կայ, եթէ իմ անձնական  
էութիւնս կանխաւ ճանշած չ'լինէի, գոյութեան

կը հաստատէ, մէկ խօսքով՝ դատումն չ'ընէ . Ասկէց  
յայտնի է՝ թէ դատումը մարդկային մտքի մասնա-  
ւոր մի կարողութիւնը չէ, ինչպէս են զգայարանք,  
և յիշատակութիւն, այլ մանաւանդ թէ մեր կարո-  
ղութեանց բոլորին ընդհանրական օրէնքը և մեր  
հոգեւոր գործարանաւորութեան հարկաւոր հե-  
տեանքն է : իմացական էակ մը՝ որ չը դատէր, այս-  
ինքն է՝ որ չի հաւատար, հակասութեանց ամենէն  
անբացատրելին և ամենէն կարգէ դուրս տեսակը  
ներկայացուցած կ'ըլլայ :

Երբ իսորհրդածութիւնը դատումն կը կատա-  
րէ, անմիջապէս երկու տարերք երևան կուգան,  
տարերք մը հաստատեալ գաղափարը, տարերք մ՝  
ալ հաստատութիւնը : Վերացմամբ, բաղդատո-  
թեամբ և ճշմարտութիւն շահելու այլ և այլ միջոց-  
ներով նորանոր գաղափար կ'ունենամք և անոցմով  
դատումներ կը կատարեմք : Երբ դատումը կանոնա-  
ւոր բառերով երևան կը հանեմք՝ կ'ըսուի առաջըն-  
դէն : Առաջարկութիւնը բացատրութիւնն է դատ-  
ման, ինչպէս բառը բացատրութիւնն է դաղափարի :

Բ . — Ի՞սո՞րութեունէն : Այն կարողութիւնը՝ որ  
մէկ ճշմարտութենէ ուրիշ ճշմարտութիւն կը հանէ,  
կամ մէկ դատմանէ ուրիշ դատումն՝ կ'ըսուի ի՞նո՞րու-  
թեունէն : Կամ մակարերութիւն : Երկրաչափական  
ինդիքները բոլորն ալ սահմաններով և առածնե-  
րով կ'սկսին, այսինքն այնպիսի ճշմարտութիւննե-  
րով՝ որ ամէն հասարակ մարդոց անդամ ընդունե-  
լիք են : Սակայն տես որ մարդկային միտքը՝ այն ան-  
պտղարեր համարուած սերմերէն ինչ կանոնաւոր  
դիտութիւն հաներ է՝ որ կենաց ամենէն սովորա-

կան պէտքերէն մինչև բնաղանցական ամենէն բար-  
ձըր տեսառութեան մէջ կը դորժածուի :

Գ . Խելսոնութեան, աղացուցութեան : Իմաստասի-  
րութիւնը երբեմն մասնական ճշմարտութենէ ընդ-  
հանուր ճշմարտութեան կը վերանայ, և այս ատեն  
կ'ըսուի իելսոնութեան : Երբեմն ընդհանուր ճշմար-  
տութենէ մասնաւորին կ'իջնէ՝ այս ատեն ալ կ'ըսուի  
Աղացուցութեան :

Դ . Մինչուն + աղացուցութեան = Աղացուցութեան  
սկզբունքն է, — ինչ որ ունին կարգ մը էակներ՝ նոյ-  
նը ունի նոյն դասու մէջ պարունակեալն ալ : —  
Եթէ Պետրոսը մարդ է՝ մարդկութեան բոլոր ստո-  
րով ելիքն ունի . բանականութիւն ունի՝ բայց սիս-  
լական, անմահական հոգի ունի՝ բայց այս հոգին ալ  
միացեալ է ընդ մարմնոյ՝ որ հիւանդութեան և մահ-  
ուան ենթակայ է : Ի՞նչպէս կարելի է որ էակ մը  
դասու մը մէջ գտնուի, և նոյն դասուն բոլոր հան-  
գամանքները չ'ունենայ . սամիկայ հակասութիւն է :  
Տրամաբանները վինտուելով աղացուցութեան ամե-  
նէն ներքեսի հիմք, կ'ըսեն՝ թէ աղացուցական իմաս-  
տասիրութեան յենարանը «ի՞նո՞ւն + հոկտոսութեան» ըն-  
ուածն է, այսինքն սա առածը՝ թէ միւնցն բան ՚ի՞նո՞ր  
ճիշուծ ճային ըլլու և ՚ըլլու :

Ե . Մինչուն + իելսոնութեան = Առաջին նայուածքով  
կերեկի՝ թէ խելամսութեան ճանբայն ուղիղ չէ . մեր  
միտքն ինչպէս կրնայ մասնաւորէն յընդհանուր վե-  
րանալ, այսինքն երթալ՝ ի՞նուազէ առ առաւելն, և  
յանձուկ ծոցոյ ճշմարտութեան՝ աւելի մեծ ու լայն

Ճշմարտութիւնը հանել . նման մարդու մը՝ որ քանի  
մը արտավար հողունի , անտի կը կարծէ ընդարձակ  
թագաւորութիւն ունենալ :

Փիլիսոփայից ոմանց ըսածին նայելով՝ խելա  
մատկան եղբակացութիւնները կրկնեալ փորձառու  
թեանց պտուղ պիտի լինին , սակայն , այս ստոյդ է՝  
որ օրինաւոր խելամտութիւն ունենողու համար մէկ  
փորձառութիւն բաւական է՝ միայն թէ լաւ կատար  
ուած ըլլայ . ասկէց զատ՝ եթէ իրաց խորը երթանք,  
որքան շատ ըլլայ փորձառ ու թիւննիս , քանի որ ժա  
մանակի և միջոցի մէջ սահմանափակ են՝ չեն կրնար  
բացատրել այնպիսի եղբակացութիւն՝ որ բոլոր ժա  
մանակի և բոլոր տեղեւոյ համար ընդունելիք լինին ,

Ըստ մեղ խելամտութեան ճշմարիտ հիմք բը  
նութեան կարդին վրայ մարդոց վստահելն է , իը  
հաւատամք՝ թէ բնութեան օրէնքները հաստա  
տուն են , և ասոր համար ներկայէն զանցեալն և զա  
պագայն կը դատեմք՝ կը հաւատամք՝ թէ բնու  
թեան օրէնքները ընդհանրական և միակերպ են ,  
և ասոր համար կը դատեմք՝ թէ , իրաց ընթացքո  
նոյն է՝ ինչպէս մեր այս նեղ բնակարանին կամ քա  
ղաքին՝ նոյնպէս բոլոր քաղաքաց և աշխարհի մէջ :

Այս հաւատամքները փորձառութենէն չեն կրնար  
յառաջ գալ , մանաւանդ թէ ասոնք փորձառու  
թենէ վեր են , և փորձառութիւնը կ'ուզեն : Այս  
հաւատքի սերմը Աստուծոյ ձեռքը դրած է մեր  
ամենուս մոտց մէջ . մեր մոտց նախանամական  
բնազդումն է՝ զոր ամէն մարդիկ ծնած ժամանակ  
կ'ունենան :

Ասկայն , այս հաւատոց տիրապետութիւնը  
որքան ալ բնական լինի մեր վրայ , այնքան չեն՝ որ

չտփ են երկուաշափական ապացոյցները : Յանհուն  
յաւիտեանս ճշմարիտ պիտի լինի՝ թէ բոլորակի շա  
ռաւիդներ հաւասար են , բայց՝ թերեւս չ'պիտի յա  
ւիտեան ճշմարիտ լինի՝ թէ յագնիսական բևեռը  
դէպ ՚ի հիւսիս կը նայի : Ոչ մի գոյութիւն աստէն  
հարկաւոր չէ : Կարգ մը երկութից ընդհանրակա  
նութիւնը՝ անոր պատահականութիւնը չ'եղանէր :

Յայսմ է անհաստուածից հիմնական մոլու  
թիւնը : Անսաստուածները ուածկաց վրայ կը ծիծա  
զին՝ թէ անորոշ և թերի բացատրաւած գաղտփար  
ներ կ'ընդ ունին . սակայն , իրենք ալ ծիծաղելի են՝  
որ , իրենց դրութեան մէջ , միակերպութիւնը կը  
շփոթեն հարկաւորութեան հետ : Անսաստուածը  
գիտելով ինչպէս ամէն մարդիկ , որ բնախօսական  
պատճառներ նոյնակերպ կը գործեն , իրենք հա  
մոզուեր՝ և բոլոր մարդիկ ալ համոզել կուղեն՝ թէ  
այս պատճառաց էութիւնը հարկաւոր է , ըստ ին  
քեան բաւական է , կախումն չ'ունի , աւելի բարձր  
պատճառէ՝ յաղթերէ կենդանութեան . և թէ Աստ  
ուած ըստւածը ենթագրութիւն է , և գիտութեան  
առարկայ համարուելու արժանի բան մը չէ :

Ո՛վ որ արարչութեան օրինաց կրկին նկարագիւ  
րը խորապէս գիտէ՝ անկարելի է որ անոր մոտց մէջ  
լուարովին կատարելութիւնները չը գաղափարուին :  
Այս օրէնքները որովհետեւ կրնան վոխուիլ , ուրեմն  
գործ են ուրիշ մի և ազատ պատճառի . և օրովհետեւ  
կը աւեսնեմք որ չեն փոխուիր , հաստատուն կեցած  
են , ուրեմն զիրենք հաստատող պատճառը իմացա  
կան և իմաստուն է : Իմաստութեան նշանն այն է  
որ ինք իւր հետ միացեր և գործեր է այնպիսի հա  
նապարհներով որ այսքան պարզ են , և աղատու

թիւնն այն է , որ յառաջ բերեր է այնպիսի գործեր՝  
յորս հարկաւորութիւն չ'կայ . խելամուռութեան հա-  
ւատքը երբ իւր սկզբանց բարձրութեանը վերանայ՝  
նախախնամութեան դաղափարը կը պարզուի և հո-  
գերանական վերլուծութեան ամենասովորական  
հնարքը կ'առաջնորդէ դէսլ ՚ի ծանօթութիւն Աս-  
տուծոյ էութեան և անոր ստորոգելեաց :

Զ . ինաստանէրունեան կարևորութեանը . իմաստասի-  
րութիւնը , իւր կրկին ձերովը , ինչպէս կրցանք  
տեսնել , մարդկային ծանօթութեանց առատահոս  
աղբիւրներէն մէկն է :

Նկատեցէ՞ք մարդն ամիոփեալ առ վայր մի  
գիտակցութեան , զգայարանաց և յիշողութեան  
մէջ , ուրիշ բան շըսիտի գիտնայ՝ այլ միայն իւր աշ-  
քին առջեն եղածները . Այս վիճակի մէջ՝ տեղեկու-  
թիւն պիտի չունենայ ապագայէն և ներկային շատ  
մը մասներէն . զուրկ պիտի մնայ թէ առջեկն գացող  
դիպաց կանխատեսութենէն , և թէ իրաց մթին և  
խորհրդաւոր կամ գաղոնի մասները թափանձող գի-  
տութենէն : Բայց իմաստասիրութեան օդնութեամբ  
իւրաքանչիւր գաղափարներ՝ որ արդէն ստացաւ ,  
արդասաւոր սերմն կըլլան , որոնցմէ շարունակ նոր  
գաղափարներ յառաջ կուգան մեր ընկունմանց և յի-  
շատակաց նեղ շրջանակը կ'ընդլայնի , մոքերնիս մին-  
չև յանհունութիւն կ'երթայ :

Մեր բոլոր գատումները՝ որ կունենամք ամեն  
օր ծանր ու թեթև բոլոր առարկայից վրայ , մար-  
դոց վարուց և հանգամանց վրայ , անձրևի և պայ-  
ծառ օդոց վրայ , առողջութեան և հիւանդութեան  
վրայ , հունձք ունենալու կամ չ'ունենալու վրայ , և

այն . բոլոր հաշիւ , ձեռնարկութիւն , զգացմունք  
որ գատմանէ յառաջ կուգան , ուրիշ ակն չ'ունին ,  
խելամուական իմաստասիրութիւնն է՝ բոլորին աղ-  
բիւրը : Այս խելամուռութիւնն է նաև բնախօսական  
և այլ բոլոր բնական գիտութեանց հիմը , որոց գըլ-  
խաւոր առարկայն է գիտութիւն օրինաց և ծրա-  
գրի տիեզերաց :

Ապացուցութիւնն ալ քիչ կարեւոր չէ . Եթէ  
մասնական դէպքերու մէջ ապացուցութիւնը գոր-  
ծածելու կարողութիւնը չ'ունենայինք՝ այնքան տի-  
եղերական ճշմարտութիւնները բնչպէս պիտի կր-  
նայինք հասկնալ : Եթէ ապացուցութիւնը չ'ըլլար՝  
որքան պիտի զրկուէինք անհրաժեշտ ծանօթու-  
թիւններէ , գիտութիւններէ և արուեստներէ և  
բարոյականի կանոններէ : Ասկէց յառաջ եկած են  
շափարերական գիտութիւնները , բարոյագիտու-  
թիւնը , իրաւաբանութիւնը : Եթէ սա չ'ըլլար՝ Աս-  
տուածաբաննը չի պիտի կրնար թափանցել դերբնա-  
կան ճշմարտութեանց յարաբերութիւնները և հե-  
տեանքները հասկնալու աստիճանը : Վասն որոյ շատ  
մեծ մխալ կը գործեն այն փիլիսոփայիք՝ որ մեր մը-  
տաց կամ բանակութեան նախկին օրէնքները և  
անսպառ ակերը կ'ուղեն սեղմել փորձառութեան  
մէջ . վախն ՚ի վախն քիչ մը թոյլ կուտան խելամու-  
թեան , բայց ապացուցական իմաստասիրութեան  
ընաւ համարձակութիւն չեն տար իբրև շինծու ,  
անօգուտ և լուսագաւոր միջոց :

ԳԼՈՒԽ Փ.

Յաղագս նշանաց եւ խորհուրդնիս բացատրող բարբառոյ:

Մեր խորհուրդները կազմող տարերքները քըննելսէս յետոյ՝ բնական կարգը կը պահանջէ՝ որ նշանաց և բարբառոյ վրայ ալ խօսիմք:

Ա. Նշան: Բացակայ կամ զգայարանաց ներքև չինկող առարկայ մը պատկերացուներու համար գործածուած բանը նշան կ'ըսուի: Բազկերակ՝ նշան է կենաց. ջերմաչափի մէջ ժիպաքին բարձրանալը՝ օդոյ ջերմութեան աւելնալուն նշան է. ծուխը կրակի. գործոյ մէջ՝ մեծութիւնն ու շքեղութիւնը հանճարոյ նշան է:

Բնութեան բոլոր առարկայից համար փոխարէն նշաններ կան: Հողմոց մոնիշւնը մրրիկ կ'իմացունէ. լեռնակորից վրայ գտնուած լավաները մարած հրաբղիսի նշանակ են. առիւծին միայն կերպարանքը կը ցուցնէ՝ թէ ինչ ուժեղ նեարդ ու մը կանունք կ'ունենայ այս կենդանին. արդիւնքները պատճառաները կը ցուցնեն. հանդամանքները գ'ցացութիւններ: Նշանները զիրենք հասկցող իմացականութիւն կամ միտք կ'ենթադրեն. այսինքն այն՝ որ պիտի խմանայ՝ թէ ինչ վերաբերութիւն կայ իրեն և անոր նշանին մէջ: Ի՞նչ կարևորութիւն կ'ունենայ նշանը՝ չ'տեսնող աչքին կամ չ'լսող ականջին համար:

Պնասունները բանականութիւն չ'ունենալուն համար չ'մն յուզուիր տեսնելով երիշիւք՝ որք պատմուածու Աստուծոյ:

Մարդուս զգացմունքները և խորհուրդները ոչ նուազ անըմբառնելի են արտաքին զգայարանաց՝ որքան են տիեզերաց գ'ցացութիւնները և պատճառները: Ոչ աչք, ոչ ականջ, ոչ շօշափելիք չեն կրնար գիտակցութեան ներքինս սրբատունը թափանցել. Եթէ նշաններ գործածելու կարողութիւնը չ'ունենայինք՝ չ'պիտի կրնայինք մեր նմաննեաց հասկցունել մեր հոգւոյն զանազան վիճակը, պէտքերը, փափաքները, և ծանօթութիւնները: Մարդոց մէջ անկարելի պիտի ըլլար յարաբերութիւն հաստատել, մէկ խօսքով, ընկերականութիւն չի պիտի ունենայինք:

Բ. Բարբառ և զանազանութիւն նորա: Բարբառն է հաւաքումն այն մասնական նշանաց՝ որոց միջացաւ մեր խորհուրդն ու զգացմունքը ուրիշին կը հազորդեմք:

Բարբառը՝ նշանաց ծագման նայելով՝ կը բաժնուի ՚ի բնական և յարուելուական, գործածութեան նայելով՝ կը բաժնուի ՚ի ժողովական և ՚ի բնականոց:

Վ. Բնական բարբառն այն է՝ զոր բնութիւնն ինք կ'ուսուցանէ մեզ, ինչպէս նորածին մանկան անյօդաւոր աղաղակը, ուրախութեան կամ տրտմութեան ատեն մեր բերնէն ելած ձայնարկութիւնները. կրից անկարգօրէն շարժմունքները: Ամէն մարդ կըխօսի այս բարբառը, առանց վարժապետի ամէնքն ալ կըհամինան, այնքան ընտանիէ փոքր մանկան՝ որչափ կատարեալ մարդոց, վայրեննեաց՝ որչափ քաղաքակիրթ ամբոխի: Սլսարհիս ո՞ր անկիւնը կա-

րելի է պատահել՝ որ զաւակը մեռած մայրը ուրախութեան ժամա արձակէ, ծաղը կամ ժպիտը նշանակ տրտմութեան համարուելով.

2. Արուեստական լեզուն մարդկային մոտաց կամ հանճարոյ գործ է, որ դարձ դար կը կատարելագործէ զբնական բարբառը, նոր նոր բառեր կը յաւելու արդէն խօսած լեզուի վրայ, նորանոր լեզուներ կը հնարէ դիտութեան և արուեստից մէջ գործածելու համար. Որպէս մարդկային ամէն հնարուածք՝ նոյնպէս և արուեստական բարբառն ալ շարժուն, փոփոխական և բնւրակերպ խանդարմանց ենթակայ է:

Ամէն ազգ իւր յատուկ բարբառն ունի, և իւրանքանչիւր դարու բարբառն սյլ և այլ է: Արուեստական լեզուն ոչ կրնայ խօսիլ և ոչ կրնայ հասկնալ մէկը՝ մինչև որ իւր ծնողքներէն կամ սնուցիչն չ'ուսանի:

3. Գործնական լեզուն աչքի ներկայացուած պատկերն է, ինչպէս են դիմագծական խաղեր, մարմոց սյլ և այլ դիրքեր, որ կը ցուցընեն աղաչել, սպանալ, սիրել, բարկանալ. վերջապէս այն շարժունքներ՝ որ խուլերուն ներելի եղած ճարտասանութիւնն է:

4. Բերանացի լեզուն ականջի ուղղուած նշաններն են, ինչպէս գոյիւն, և խօսք:

Խօսքը բարբառոյ բոլոր կերպերուն մէջ՝ ամենէն դերազանցն է, զի թէ արագ և ուղիթ՝ և թէ շատ ճիշդ և յատակ կերպով կը հաղորդէ մեր ծանօթութեանց և զդացմանց ամենանուրբ հանդամանքները:

Սակայն, որովհետեւ խօսքը ցնդական կամ փաստական է, և մեր մտաց մէջ քաշած գծերը չու-

առվ կը ջնջուին, պնդել հարկաւոր էր, որպէս զի մէկ անդամ երկան բերուած գաղափարները մշտընջենաւոր մնան, ասկէց յառաջ եկաւ գործածութիւնը մնայուն կամ կայուն նշանաց՝ որ կըսուի էլ և երկու տեսակ գիր կայ նշանականն և հաշուեան կամ գերականն ։ Առաջինը եղիպատացի քրմաց գործածածն է՝ որ ուղղակի նկարն է գաղափարաց, վերջինը ձայն միայն կը բացայացնէ:

Մէկ կողմանէ այնպէս կերեի՝ թէ քանի որ նշանները ճիշտ պիտի ներկայացնեն մեր խորհուրդները՝ նշանակական գիրերը աւելի յարդի համարուելու են, բայց այնպէս չէ, նշանաց թիւն ու բնութիւնը նկատողութեան առնելով կարդալու և գրելու այնպիսի գժուարութիւններ կան՝ որ մեր իմացական կարողութեանց աղատ խալացման շատ արգելք կ'ըլլան: Բայց հնչական կամ քերականական գրերն այնպէս չեն, զի 30—35 տառերով՝ որ նախնական ձայնները կըներկայացնեն, գիւրանք կը բացատրեն ամէն տեսակ խոհրդածութիւն և խօսից դանաղանութիւն:

Դ. Ծառածն իշուուի՝ լեզուի ծագման խնդիրը ոչ նուազ ծանրապէս յուղուած է: Ոմանք, ինչպէս քօնալիլաք, սա կարծիքն ունեին. լեզուն մարդս հնարած է իւր հանճարովն ու աղատութեամբը. այլք ինչպէս Պօնալտ, կըսէին թէ՝ մարդ իւր կարողութիւններովն անբաւական է հնարել, պարդե Աստուծոյ կամ գերբնական յայտնութիւն է լեզուն:

Ծննդոց գրքին մէջ կը կարդամք՝ թէ Աստուծ մարդուն հետ խօսեցաւ. բոլոր էակները անոր առջեր բերաւ, Աղամ ալ իւրաքանչիւրին անուններ

դրաւ։ Պօնալախի կարծեաց կուսակիցները՝ մարդկութեան սկզբնաւորութիւնը պատմեղ այս քան զամէնը հին գրոց վկայութեան կութնած թիւ գլխաւորապէս։ Հեղինակութեան չափազանց կապուած չը համարուելու համար Ս։ Գրոց պատմութիւնը մէկդի թողլով լեզուի ծագումը պիտի քննեմք միայն իմաստասիրութեան ձեռօք։

Այս խնդրոյն մէջ երկու դլխաւոր կէտեր կան՝ որ հերքելը կարելի չէ։ Առաջին՝ թէ լեզուի տարերաց մէջ մեծագոյն մաս մը կայ՝ որոց ծագումը լոկ մարդկային է, օրինակի համար՝ նոր բառեր, նոր դարձուած քններ, որք դարէ դար կը հարստանան, ու քան որ դաշտավարները շատնան և ոյլակերպին։ Երկրորդ՝ թէ այս շինծու տարերաց ներքեւ ծածկեալ են նախնական նշաններ, զօրս մարդիկ կամակար կը դործածեն և կը հասկնան, և եթէ շըլլոյին ասոնք՝ մարդիկ զուրկ պիտի մնային իրերաց ըսածն հասկնալէ, և հետեւապէս արուեստական նշաններն ալ չըպիտի կրնային ստեղծել։

Վասն որոյ, խնդիրը գիտնալու վրայ չէ թէ արդեօք լեզուն պարզե Աստուծոյ է՝ թէ մարդոց հնարք, այլ թէ ինչպէս բաժնել պէտք է լեզուի կաղմութեան խնդրոյն մէջ Աստուծոյ դործն ու մարդոց շահքը, զի երկուքն ալ բաժին ունին այս բանի մէջ։

Գժուարութիւնն այս երկու կէտին մէջ ամփոփելէ յետոյ՝ պէտք է նկատել՝ թէ մենաւ որութիւնը մեղի բնական չէ, ընկերակցութիւնը տնկակից յատկութիւնին է, և այս նախախնամական վախճանը ձեռք բերելու համար ինչ կարողութիւններ որ հարկաւոր էին՝ սկզբնարար ունեինք։ Ընկերութիւնը իւր ամենադպրոցն յարաբերութեանց համար՝ պէտք է՝ որ

զանազան։ որոշ և յստակ նշաններ ունենայ։ անորոշ շարժումներ, անյօդաւոր ալզաղակներ՝ որ կրկցյուզմանէ յառաջ կրւգան՝ ճիշդ նշաններուն ընելիքը չեն կրնար ընել։ Աստուծոյ որ ոչինչ չ'ըներ վայրապար, հաճեցաւ մարդկային սեռը ստեղծելու ժամանակ պարգևելն ամսա խօսելու տարբեր միջոց մը ըստ բաւականին կատարեալ։ Մարդ՝ ի սկզբանէ աշխարհի առաւելութիւն ունի միւս բոլոր արարածոց վրայ, ինչպէս խելքովը նոյնպէս և լեզուով։ Բայց լեզու մը՝ որ չափ ալ կատարելաւըլլայ՝ մինչեւ մեր գիտակցութեամբ և ազատութեամբը գործածել չը սորվիմք՝ բան մը չ'արժէր։ Բանականութիւննիս ոչ միայն կը զարգացունէ և կը կատարելագործէ լեզուին շէնքը, այլև մեղի սեպհականութիւն կ'ընէ, և այսու՝ կերպով մը լեզուին գոյութեան և աճեցման պայմաններէն մէկը կ'ըլլայ։ Ըստներ կան՝ թէ խորհել չը պիտի ըլլար՝ եթէ բառերը չ'ըլլային, բայց աւելի ճիշտ է ըսել՝ թէ աւանց խորհելու ներգործական գորութեան խօսքը ընդունայն ձայն պիտի ըլլար և պարապ տեղը ականջ պիտի յոդնեցունէր։ Բան և խորհուրդ փոխադարձ կրկին եղելութիւններ են՝ որ իրարու վրայ կը ներգործեն, Նախքան զամենայն, գոհութիւնն Աստուծոյ պարգևին՝ որ մարդ կը խորհի և կը խօսի, խորհելով՝ խօսքը կը դիրացնէ, և բնական նշանաց նման նոր նշաններ կը հնարէ, խօսելով՝ խորհածը կը բացատրէ, կը լուսաբանէ և կը զարդացունէ։ Այսպէս կը միաբանին իրենց մէջ հակառակ տեսութիւններ Պօնալուի և Քօնալիլաքայ։

Դ։ Գաղափարաց կաղըունեան իրայ նշանաց աղբեցունեան Բարբառը որ առաջին յօդակապն է մարդկային,

ընկերականութեան, հզօր գործիք է նաև մեր մտաց գաղափարներն սփռելու և կատարելադործելու ։ Տեսնենք՝ թէ բարբառը զվասւոր ինչ ծառայութիւններ կրնայ ընել այս մասին :

Բարբառն իբրև օժանդակի իմացականութեան կը գործածուի, նախ նշանագրելու համար գաղափարները ինչ չափով որ ընդուներ եմք, Խորհրդածութիւնը ըստ ինքեան զնդական է, եթէ նշաններով բունած չ'ըլլամք կը թուչի կ'երթայ խիստ շուտով : Բայց մէկ անդամ միտքը գաղափարն յզանալուն պէս, կարծես կը մարմնաւորի այն բառին մէջ՝ որ անդամ մը գործածուեցաւ : Ոյս բառն ալ՝ դրով պնդուելուն պէս, օրեր, ամիսներ, տարիներ կ'անցնին, բայց այն դրովք տպաւորեալ գաղափարը անջնջելի կը մնայ մտաց մէջ : Երբոր մոռնամք՝ նշանը տեսնելուս պէս կը յիշեքք : Մեր իմացական բոլոր կարողութիւններն այսպէս զօրհանապաղ, լեզուի չնորհիւ, առատ արօտ մը կըդտնեն զիրենք սնուցանելու, զի ոչ միայն մեր յատուկ խորհրդածութիւնները մեր աշաց առջե կը բերեն, այլև մեր նմանեաց : Լեզուն ամէն մարդոց իմացական գանձերը մեր առջե կըբանայ, ամէն մարդոց դիտցածները, յիշողութիւնները և դիւտերը մեզ կը հաղորդուին՝ երբ այս բաները բացայացաղ նշանադրերը տեսնեմք :

Երկրորդ, բարբառը կանոնաւոր մէկ միջոցն է Խորհրդածութիւննիս վերլուծելու : Որովհետեւ մէն մի բառ միայն մէկ գաղափար կը բացատրէ, կ'ստիպուիմք խօսելու ատեն մեր խորհուրդները վերլուծել՝ ուրիշին հասկըցնելու համար, և երբ ուրիշը կը խօսի՝ ոտն առ ոտն ետևէն կ'երթամք անոր ըրած վերլուծութեան : Ինչ որ շփոթէր կ'որոշուի, որ ինչ

համանդամայն՝ կը լինի յաջորդական : Եւ որովհետեւ իւրաքանչիւր բարբառ մեթուա մը կամ համաձայնութիւն մը ունի բառերը իրարու ետեւէ հաստատուն և կանոնաւոր շարքով մը յաջորդեցունելու, կը հետեւի թէ վերլուծութիւնը գիպուածով չ'ըլլար, այս ոճով :

Բայց լեզուին կարևորութիւնը ոչ միայն խորհրդածութիւն պահելու և վերլուծելու մէջ կը կայանայ, ուրիշ ծանրադին կարևորութիւնն մ'ալ ունի . կարդ մը այնպիսի գաղափարներ ալ կը չինէ, որ եթէ ինք շինած չ'ըլլար, պիտի չ'ունենայինք . ինչպէս են վերացական գաղափարներ, ընդհանուր գաղափարներ, և հաւաքական գաղափարներ : Յիրաւի, միտքն իւր մէջ այս գաղափարներն ըմբռնելու կարողութիւնը ունի, բայց ձեւանալն ու կորչիլը մէկ կ'ըլլայ՝ եթէ լեզուն և գիրը չ'ըլլան : Օրինակի համար, ինչ պէս պիտի կընայինք, առանց նշանայ օդնութեան, ըմբռնել քիչ մը ընդարձակ թուոյ գաղափարը, ինչ պէս պիտի կընայինք թուաբանական և երկրաչափական գործողութիւնները կատարել . Թող մէկն ըսէ՝ մեզ՝ թէ մոքոլդ երեքի կանոն մը շինէ, կամ բարձր թուոյ մը քառակուսի արմատը գտիր, առանց նշաններ գործածելու, ինչպէս պիտի կընայինք ընել : Ոյս հաշիւները ընելու ատեն բաւական գժուարութիւն կը կրեմք թուանշաններ գործածելով հանդերձ՝ եթէ այս նշաններն ալ չ'ըլլան՝ ինչ պիտի ընենք : Ո՛քան զօրաւոր գլուխ, ո՛քան բացառիկ մտացիութիւն ալ ունենամք՝ անկարելի է մեղքիչ մը ընդարձակ հաշիւ առանց նշաններու օդնութեան իւմանալ :

Լեզուի այսքան կարևորագէս խորհրդածու-

գաղափարներ կը բացատրէ , մէկ գաղափարն ալ  
շատ մը բառեր կունենայ , օրինակի համար . հոդի ,  
ձորդ , զբաղվողներ , գողութոր , երջանկանեն , աղաղակնեն  
և իշխառներնեն հին և նոր ժամանակ որքան տար-  
բեր նշանակութիւններ ունեցած են . Լեզու գոր-  
ծածելու ժամանակնիս ոչ այնքան խորհրդածու-  
թիւննիս կը նայինք՝ որքան բացատրութիւննիս .  
գաղափարներէ ՚ի բառս երթարու տեղ ՚ի բառէ  
՚ի գաղափարն կ'երթամք ։ Խորհրդոց և խօսից մէջ  
միշտ այս սխալը կը պատահի : Ասկէց կը հասկցուի  
թէ որքան կարեոր է՝ որ լեզու մը լաւ շինուած ըլ-  
լայ . այսինքն մեր խորհածը դիւրաւ . և արագ հա-  
ղորդելու համար ի՞նչ հարկաւոր հանգամանքներ  
կան , և ի՞նչ ճշգրտութեամբ պիտի պատասխաննեն  
մեր գաղափարաց՝ ամէնքը պիտի ունենայ : Բայ այ-  
սըմ , լեզու մը պէտք է . 1° հարգեւալ լինի , այսինքն  
ամէն խորհուրդ բացատրող բառ ունենայ . 2° Ուռչ՝  
այսինքն մէն մի բառ խր յատուկ նշանակութիւնն  
ունենայ . 3° Պորտ , այսինքն տարրական գաղափար  
բացատրող բառերը կարճ և ըմբռնելի ըլլան . 4°  
վերջապէս հանդէք , այսինքն բառից հանդէտ բաղա-  
դրութիւնը խորհրդոց հանդէտ բաղկացութեան  
պատասխանէ :

Զափական գիտութեանց լեզուն այս ամէն թէ-  
ութիւններն ալ գրեթէ մինչև մէկ աստիճան կա-  
տարեալ ունի : Թիւ մը ո՛չափ փոքր և որչափ ալ  
մեծ լինի նախնական նշաններոն բաղադրութեամբ  
կատարեալ կրնայ հասկցուիլ . մէն միթիւ կամ թուա-  
կան եղերք այնքան ո՞ւշ նշանակութիւն ունին ան-  
բաւ այլեայլութեանց մէջ , այսպէս որ երկու եղերք  
իբարու հետ չեն շփոթուիր . Առաջին տասն թիւ-

թեան գրայ աղդելը՝ պատճառ տուաւ մի քանի փի-  
լիսոփայից մէջ վէճ ծաղելու , թէ մարդ պիտի կը ը-  
նամը խորհիլ . եթէ բառերը չը լինէին : Հետաքը-  
քրական՝ բայց անօգուտ խոդիր , զի մարդը չեմք  
երեւակայեր , այլ ինչ որ է իւր բոլոր կարողութիւն-  
ներով և որպէս որ ելած է Արարչին ձեռքէն՝ այն  
պէս նկատելու եմք , այսինքն էակ խմացական և  
աղաս՝ և ընդունակ այն ամէն միջացաց որ կ'օգնեն  
անոր խմացական և բարոյական զարգացմանը .

Արդ լեզուն է որ այս միջոցներուն ձեւ կուտայ  
բայց անիրաւ է ըսել՝ թէ , եթէ միջոցը կամ լեզուն  
չըլլար՝ մարդս պիտի չ'կրնար խորհիլ : Լեզուն և  
նշանները պատուական գործիքներ են խորհրդա-  
ծութեան , որք՝ եթէ չըլլային՝ մտքին ամենավեմ  
այնքան կարողութիւնները անօգուտ պարդե մը  
պիտի լինէին . ինչպէս բազուկ ունենալիս մեծ  
օգուտ մը պիտի չ'ընէր՝ եթէ լծակը չըլլար՝ զոր կը  
գործածեմք քիչ մը ծանր բեռն վերցնելու համար :  
Որպէս լծակն , որքան օգտակար և որքան հարկա-  
ւոր , սակայն և այնպէս ինքիրեն կոշտ առարկայ մի  
է , բուն և իսկ զօրութիւնը մարդուն բազկաց մէջ  
է՝ որ զիմանը կը գործածէ , այսպէս ալ բարբառը  
խմացիր խորհրդածութեան առջև . բարբառը ո՛ր-  
քան հարկաւոր և օգտակարագոյն միջոց է խորհր-  
դածութեան , բայց խորհրդածութեամ՝ զինքը  
շարժելուն և կառավարելուն պէտք ունի :

Ե . Նկորածէ լու շնուռու լեզուի : Մարդկային լե-  
զուները՝ որքան որ պէտք ըլլալով կը գործածուին,  
սակայն անկատարութիւններէ և անպատշաճու-  
թիւններէ զերծ չեն : Մէկ բառը երբեմն շատ մը

ւերուն բառերը կա՞ և գրեթէ միավանկ են, և կը  
մտնեն կատարեալ դիւրութեամբ ամէն աստիճան  
հետզհետէ բարձրացող բոլոր թուական եզերքնե-  
րու մէջ : Վերջապէս, չափագէտները գրեթէ հոդ-  
տարած են՝որ իրենց լեզուին, այսպէս ըսենք, շարժ-  
մունքը ճշդապէս խորհրդոյ լեզուին շարժմանց յար-  
մարի . հանդէսութեան թելլ միտքը միտթենէն տաս-  
նեակներուն կը տանի, անկէ հարիւրեակներու ,  
հազարաւորներու և մինչև ամենաբարձր թիւերու  
առանց թելլ խզուելու : Բնական գիտութեանց մի  
քանի ճիւղերուն մէջ, ինչպէս բնագիտութեան և  
անկարանութեան մէջ, կարելի եղածին չափ չա-  
փականներուն ճշդութեան մօտենալ ուղուած է :

Վերջին դարերու մէջ, Քօնտիլյաք և իւր ա-  
շակերտները փափադ ունեցան՝ որ փիլիսոփայու-  
թիւնն ալ այս ընթացքը բռնէ, իրեւ կարևորագոյն  
միջոց յառաջդիմութեան: Մասնաւոր չափազանցու-  
թեամբ առաջ գացին մինչև ըսելու՝ թէ գիտութիւնն  
ուրիշ բան չէ, այլևս շինուած լեզու մը Քօնտիլյաքէ  
առաջ՝ Լէիրնիտիոս և Տեքաբիթ կը խորհէին՝ թէ  
արդեօք կարելի չէ տիեզերական բարբառ մը գոր-  
ծածել իմաստուսիրութեան, որ թէ մէն մի դաշ-  
փարի յատուկ բառեր կենան, և թէ բոլոր ազգեր  
գործածեն, բայց որքան դժուար է այս : Իմացա-  
կանութեան տարրական ծանօթութեանց պատկե-  
րը կամ ցուցակը ովկ պիտի շակէ, բաղկացութեան  
անհուն այլեւայլութեան էական յարաբերութիւն-  
ները ովկ պիտի քակէ, նոր լեզուին օրէնքը ովկ պի-  
տի հաստատէ, ընդհանրապէս ամենուն ովկ և ինչ-  
պէս ընդունել պիտի տայ : Լէիրնիտիոսի այս փա-  
փագը հիմայ ալ ունեցողներ կան, բայց դեռ մէկը

չ'կայ որ գլուխ հանելու հանճար ունենայ ։ Փիլի-  
սոփայն կամայ ակամայ գատապարտեալ է հասա-  
րակաց գործածած լեզուավը, կատարեալ թէ ան-  
կատար, իւր ամենանուրը մոտածութիւնները բա-  
ցատրել, պարտաւորութիւն մը որ ունի այս է, մութ-  
բառեր կամ անպատեհ ոճեր լաւ չի ճշդած ըս-  
դործածել .

Զափական գիտութեանց լեզուին պէս ճիշտ  
գործածութիւնը բանապիրական և բանաստեղծա-  
կան լեզուի մէջ բոլորպիին անկարելի է, զի մարդ-  
կային սրաի լեզու է, որ անկանոն չնորհներ և յա-  
փշտակող ձևեր ունի : Զափականը որ իւր ամենէն  
հարուստ և չքեղ ճառերուն մէջ ալ չ'ընդունիր նոյ-  
նանիշ և հօմանիշ բառեր, այլ կարճ և ճիշտ բառեր,  
որքան տարբեր է բանասիրականէն՝ որ լեզուն է  
այս զրիսպակով եթէ վրիսպակ համարել կարելի է :  
կը հետեւ՝ թէ հասարակաց լեզուն խստի գատե-  
լու և դիտնական բարբառը նախամեծար ընտրելու  
չափազանցութենէն զդուշանալու ենք: Եթէ երբեմն  
հասարակ լեզուները միտք կը չփոխն, գիտնա-  
լու ենք՝որ միշտ խելքի համար չեն խօսիր, այլ և սրբ-  
ատի, այլև երեւ ակայութեան, և պակասութիւններ  
ալ որ ունին՝ մասամբ մը ազբիւր են մեր հաճոյից :

Զ . Գէրէւէ+ ընդհանուր +երակնութեան չըտա : Լեզուի  
մտքի հետ ըրած յարաբերութեան հետազոտու-  
թիւնը հիմն գրաւ ընդհանուր +երակնութեան : Գէրա-  
կանութիւնն է արուեստ՝ լեզու մը ուղիղ խօսել և  
ուղիղ գրել: Բայց ամէն ազգաց մասնական քերա-  
կանութենէն վեր կայ գիտութիւն մ'ալ որ իւրա-  
քանչիւր ազգի լեզուաց հասարակ հիման զրայ կը  
խօսի և ընդհանուր քերականութիւն կ'ըսուի :

ի . վերը-ծունիկա բարբառոց , գեր , վանի , բառ : Ար-  
դէն ըստած եմք՝ թէ խորհրդածութիւնը , իւր ամե-  
նապարզ ձևին մէջ , ժաղանքոց ըստածն է , որ կը կա-  
յանայ բան մը ներկայացնելու մէջ : Ըստած եմք նոյն  
պէս՝ թէ գաղափարն յայնժամ բառ կունենայ՝ երր  
դարունք կ'ըլլայ . և գաղափարն է գաղափար հաստա-  
տեալ , կամ հաստատութիւն՝ թէ այս ինչ գաղ-  
փարն առարկային համեմատ է կամ չէ : Գաղափա-  
րաց նշանները բառուեն են :

Դատմանց նշանները առաջընկածնենեն են , որ  
բառերէ կը բաղկանան : Գրերը կը ներկայացնեն  
նախնական ձայները , որ քով քովի գալով խօսից  
այլեայլ տարբերութիւնները երեւան կը հանեն :

Եւրոպական կամ ծանօթ աղդաց լեզուները  
ընդհանրապէս 24 գիր ունին , իսկ մերը 33 ունի ,  
որոց մէջ անոնք որ ինք իրենցմէ կատարեալ ձայն կը  
հանեն , կամ ուրիշներու մէջ կը մտնեն՝ որ անոնց  
ալ ձայն հանել տան՝ որպէս զի վանկ շինուի , այսին-  
քըն՝ է յօթաւոր ձայնը , կ'ըսուին ջայնառոր գիր , և եօ-  
թն հատ են . միւսներն ալ բարձր գիր կըսուին : 0  
և Ֆ գրերը հայերէն չեն . 0 գրի տեղ առ երկրար-  
բառը կը գործածուէր , Ֆ գրին տեղ՝ գիրը , զի  
արդէն մեր լեզուին մէջ Ֆ գրին ձայնը չըկայ . օտար  
հնչումներու պէտք կ'ըլլայ՝ և Փ գրին հնչումը ամե-  
նէն աւելի մօտ ըլլարով Ֆ գրին հնչման՝ նախնիք  
զայն կը գործածէին ինչպէս , իւր , իւնդուն , իւնդուն :

Հ . Բառու : Բառը խորհրդածութիւնն է՝ որ կը  
չինէ իրեւնշան , և այնքան շատ կըլլան՝ որքան մո-  
քին բերքերը շատ ըլլան և անոր համեմատ կը բաժ-  
նուին : Մտքերնիս բերենք մեր գլխաւոր գաղա-

փարները . գաղափար ունիմք բոյացունեանց և գաղա-  
փար որակաւնեանց՝ դարպահներ կը կատարեմք , այսինքն  
կը հաստատեմք :

Գոյացութեանց մէջ առաջնաւնիւններ կ'իմանամք ,  
ինչպէս նաև որակութեանց մէջ՝ Որքան գաղա-  
փար՝ այնքան ալ զանոնք բացատրող բառեր կան :

Գոյացութեանց գաղափարներուն փոխարէն  
գոյակաց կամ հոյական նշաններ կան , որակութեանց  
գաղափարներուն փոխարէն ալ որակի կամ ածական  
նշաններ , առընչութեան գաղափարաց փոխարէն՝ ա-  
ռընչութեան նշաններ կամ համարդունեաններ և շարդար-  
ներ կան : Սյոնպէս ալ հաստատութիւնը բացա-  
տրելու համար մասնաւոր բառ մը կայ՝ որ այն անունն  
ունի՝ ինչ որ խօսքն ունի և կ'ըսուի Բայ , որ խօսքին  
ոյժ և լոյս կուտայ :

Այս հինգ տեսակ բառերն են գլխաւորները ,  
որոց մէկուն կամ միւսոյն տակ կ'երթան խօսքի մը  
բոլոր մասերը :

Մեր լեզուի մէջ Յօթ չ'ունինք , այլ առ , դա , նա  
դերանուններուն սկզբնատառերը յօթ անուամբ կը  
գործածուի , առանց ծանր կարեսրութեան , բա-  
ռերուն ծայրերը .

Դերանունը անուան տեղ կը դրուի , որպէս զի միե-  
նոյն անունն մօտ կըկնելով խօսքի մէջ տաղու-  
կութիւն չ'կյնայ : Մաքայլ գոյական կամ ածական  
անուններէ և նախուիր ունեցող հորովէ շինուած  
բառ է , ինչպէս զորի , ՚էլազէ , յառաւորուց , իմաստա-  
քոր որ նոյն է ասել իմաստութեամբ . Դերբայլ տե-  
սակ մը բայէ շինուած ածական է : Միջարկութիւնը ,  
որ խօսքին մէջ և առջեր դրուող բառ մի է , հո-  
գույն կիրքը երկան բերող աղաղակ մ'է , իբրև ար-

ձագանդ բնական բարբառոյ ; որ ամբողջ առաջարկութեան մը տեղ կը բռնէ . բառերը շատ տեսակ եղանակներու մէջ կիյնան , եղանակն ալ արդէն հետեանք է գաղափարաց : Ըստ այսմ գաղափարաց ժաւալին համեմատ բառերը կ'ըլլան եւովկէ և յոհուովկէ . Ուրիշ ազգաց լեզուին մէջ Սւեական տարբերութիւններ ալ կան , որք կամ բնութենէ առնուած են , կամ մարդիկ 'ի հանդիտութենէ յարմարցուցած են աշխարհիս բոլոր առարկայներուն վրայ : Նախագրութենէ աւելի կարծ եղանակ մը կայ գաղափարաց մասնաւոր մի առընչութիւնը բացատրող , այս է բառերուն կերպ կերպ վերջաւորութիւնը՝ որ հուրդ կը սուի , վերջաւորութեան քանի մը տեսակ փոխուիլն ալ հուրցունք կ'ըսուի , ամէն լեզու հոլով չ'ունի :

Բայից մէջ կայ ժամանակ՝ որ կը պատկերացունէ տեսողութեան յանցեալ , 'իներկայ և յապատնի բաժանումը . ունչ՝ որ կը ցուցնէ ենթակային յառաջին , յերկրորդ և յերրորդ դասաւորութիւնը . Եղուան՝ որ կը ցուցնէ՝ թէ մտքին կատարած դատումը պարզապէս և բացէն տեղի ունեցաւ , թէ պայմանի ներքեւ , առաջինը կ'ըսուի անհանական եղանակ , երկրորդը՝ Սրբութառական կամ պայմանական :

Հ . Վերլուծութիւն առաջարկութեան : Լեզուն նկատելով հաւատարիմ թարգմանութիւն իմացական եղելութեանց՝ առաջարկութեան վերլուծութիւնը կ'ըլլայ այնպէս՝ ինչպէս խօսքին մասանց վերլուծութիւնը կ'ըլլայ :

Ուրոքհետև դատումն ուրիշ բան չէ՝ այլ հաստատութիւն գաղափարի , ամէն առաջարկութիւն պէտք է անպատճառ երկու ծայր կամեզերք ունենայ ,

որոց մին գաղափարը ներկայացնէ , որ է նախակայն , և միւսը ցուցընէ՝ թէ հաստատութիւնը եղաւ , որ է բայց՝ Քերակամններէն շատերը կը պնդեն՝ թէ իբրև առաջարկութեան հարկաւոր մէկ տարերքը երրորդ եղը մի ալ կայ՝ որ սրբութեն կ'ըսուի : Ասոնց սխալին պատճառն այն է՝ որ դատումը կը նկատեն ծանօթութիւն երկու գաղափարաց առընչութեան : Այս տեսութեան ճիշդ չ'ըլլալուն վրայ արդէն խօսեր եմք՝ վասն զի եթէ շատ մը դատումներ կան՝ որ երկու գաղափարաց բաղդատութեան հեաւեանք են , օրինակի համար , Տրետուր ունչ պատէրազմուն էր . — Ասուսած սրբութ է . կայ ալ՝ որ բաղդատութիւն չ'ունի , յորում միտքն առանձին է յանդիման ենթակային , օրինակի համար սա դատումը , և ու եմ . և գում :

Առաջարկութիւն կայ անհապական կամ եղակի , որոյ ենթակայ միայն մի անհատ է . ինչպէս Պատառաւութեան է . Առաջարկութիւն կայ մասնաւոր , որոյ ենթակայ քանի մը անհատներ են . ինչպէս արքեցուները նշուաւուն : Առաջարկութիւն կայ ընդհանուր՝ որոյ ենթակայն մէկ կարգ մը կազմող բոլոր անհատներ են . ինչպէս մարդիկ մահանցուն են :

Առաջարկութիւն կայ՝ որ պայծառ և կատարեալ են իրենք իրենցմէտ , և կ'ըսուին բայցիչ :

Առաջարկութիւն կայ՝ որ ուրիշէ կախումն կ'ունենան , և կ'ըսուին առընչուան :

Առաջարկութիւններ կան պարզ , խառն , յօդուածոյ : Այս և ասոնց պէս շատ մը տարբեր առաջարկութիւններ կենալուն առաջին աղբակը միենոյն բանն է , այսինքն է մտածութիւնը և մասնաւորապէս դատումը :

Առաջարկութեան այս վերլուծութիւնը աւելի

ալ հեռուն կ'երթայ : Բառերն ու առաջարկութիւնները սորվելնէս վերջը՝ կրնանք քննել՝ թէ ինչ կանոնվ առաջարկութիւնները կը միանան՝ որ խօսք շինուի, և խօսքերով ընդարձակ ճառեր :

Քերականութեան այս մասը համայնսունիւն կամ շարադրութիւն կ'ըստի, որ ինչպէս անունէն ալյայտ է՝ բառից կանոնաւոր շարքը կ'ուսուցանէ : Համաձայնութեան կանոնները շինծու չեն, այլ մանաւանդ մարդկային մոքի կազմուածքէն յառաջեկած տարբերութիւններ, զոր եղանակաւորեր է իւրաքանչիւր ազգի յատուկ հանճարը :

Ոմէն լեզուք կը լուծեն խորհրդածութիւնը, զի ամէնքն ալ մէկ որոշ և շարունակական կերպիւ կը բդիխն մեր մտաց մէջ կեցած շփոթ և ցանուցիր գաղափարներէ : Բայց այս լուծմունքը ոմանց լեզուաց մէջ շատ և ոմանց մէջ քիչ է : Հոլով ունեցող լեզուաց մէջ՝ մէկ բառ՝ ոչ միայն իւր յատուկ նշանակութեամբը՝ այլ սոսկ ծայրին փոփոխմանմբ տարբեր նշանակութիւն կը ներկայացնէ : Օրինակի համար սա երկու խօսքերը Արքաւուներ յաղընեաց Դարենի . — Առէւ սոնոր յաղընեաց Դարեն, ուրիշ փոփոխուած չըկայ՝ այլ միայն Աղքաւուներ և Դարեն բառերուն ծայրերը, բայց այսքան թենթե ու պարզ փոփոխութիւնը բաւական է գաղափարաց մէջ հակադրութիւն յառաջ բերելու : Սյս ձեւ ունեցող լեզուները՝ քերականները բաշտրական լեզու անուանած են, զի բառերը բիւր կերպ կը կերպարանին և կը բաղադրուին նոր նոր բառեր շիներու համար . Հայերէն, լատիներէն, Յունարէն բաղադրական լեզուներ կ'ըստ ին :

Կան ուրիշ լեզուներ, որ հոլով չ'ունին, բայեւ բուն խոնարհմունքն ալ քիչ տարբերութիւններ ու

նին, այսպիսի լեզուներն ալ վերածական կ'ըստին, զի խօսելու ժամանակ, վերըուծութիւնը ընելու մասին մորքին ըրած աշխատութիւնը խիստ բացայայտ կ'երկուի :

Վերըուծական լեզուաց յատկութիւնն է՝ որ բառերը առաջարկութեան մէջ այնպէս կը շարեն՝ ինչպէս որ գաղափարը մտայ մէջ տրամաբանական կախմամբ շարուած են, առաջ ենթակայն՝ յետոյ բայը և ապա ստորոշ ելին կամ խնդիրը, Երբ յատկութիւն մը պիտի ստորագրեմք ենթակային, ենթակայն յառաջ է տրամաբանորէն քան զի անդամանքը, ուստի և կըսենք, այս է դէպէն : Երբ պատճառի և արդեան յարաբերութիւնը պիտի բացատրենք, պատճառը որովհետեւ յառաջադպոյն քան զարդ իւնքը՝ կ'ըսենք Ջրաւունիւն հալք չմուս՝ Բայց բաղադրականներուն մէջ՝ որովհետեւ բառերուն յարաբերութիւնները ծայրերով ալ կը հասկցուին, տրամաբանական շարակարգութեան միտ չը դրած առաջարկութեան խմասոր չ'այլացըներ, օրինակի համար .

Այսօր զննառուելի ծննդուեան +, Տէ՛ր, ապաստոր Խորհրդույ՝ ՚ի հողանեւն գոյացունեանց գոխուրեցներ ՚ի աերեն +.

Աչ մէկ բառ իւր տեղը չէ, բայց իմաստի շփոթութիւն յառաջ չեն բերեր, և շուտով տրամաբանական շարքի կրնայ փոփուիլ, ինչպէս, Տէ՛ր, այսօր Խոհուրեցներ ՚ի յերենն ՚ի հողանեւն գոյացունեանց զնդաստոր Խոհհը հըսդույ անհառուելի ծննդուեան + :

Ներդաշնակութիւնն ու լեզուի շքեզութիւնը յառաջ բերած են տաղաչափութիւնը : Բուռն կրից արտայայտութեան տաղաչափութիւնը կրնար պատասխանել այնպիսի հնչումներով որ հոգւոյն գիրը կը ցուցնեն : Բաղադրական լեզուներուն մէջ այս ոն

շատ կը գտնուի և կ'ըսուի Հռետորական և Բանաստեղծական ոճ : Բայց Գաղղիերէն լեզուն՝ թէպէտ նոյն հարստութիւնը չ'ունի և բանաստեղծական ու հռետորական ոճոյ ծանր բեռն չը կրնար տանիլ, բայց սովորական և գործնական կենաց մէջ նախընտրելի բարբառ մ' է : Ոտանաւոր կամ անդամատեալ ոճոյ կարեորութիւն չ'աալով՝ աւելի տրամաբանական շարքի կապուած է, և այս բանիս համար, ըստ ասից բոլոր քերականաց, ամենէն յարմարագոյն լեզունէ գործոյ, գիտութեան և փիլիսոփայութեան համար :

Ընդհանուր քերականութեան հետազօտութիւններուն նայելով՝ կը տեսնեմք՝ թէ մարդկային միտքը ինչ զարմանալի պտղաբերութեամբ, զդացմունք և գալափար բացատրելու համար, նոր նոր բառեր և հնարքներ կ'ստեղծէ, որք, սակայն, իմացականութեան էական օրինաց կապուած են : Ոչ միայն զանազան աղգեր այլևայլ լեզուներ ունին իրենց համար, այլև միևնոյն աղդի մէջ միևնոյն լեզուի աստիճանները կան, և ասոնք ալ շարունակ փոփոխուելու վրայ են : Լեզուներ կան որոց միայն անկորստական յիշտակարանները մնացած են, ոմանց ալ հազուագիւտ և անկատար նշխարները միայն : Մեր բուն մատենագրական լեզուն և աշխարհիկ բարբառը գոնէ համաձայնութեան օրինաց կողմանէ իրարմէ որչափ փոփոխուած են : Այս մասին գիտնալ պէտք է սակայն, որ մեր հին և նոր լեզուն էապէս տարբերութիւն չունին իրարմէ, նոր կամ աշխարհաբառը բնակակից ազգաց լեզուին շարագրութիւնը առած է, և կը գառնայ միշտ իբրև մուլրակ գրական լեզուի շուրջը՝ և չը կրնար հեռաւ

նալ անկէ : Ասոր համար նոր կամ աշխարհիկ լեզուն անոնք միայն լաւ կրնան դրել կամ խօսիլ՝ որ գրական լեզուի մէջ ալ քաջավարյ են :



Յաղագս գործոյ եւ զանազան յատկութեանց նորա . Կամք . Հնազդումն . Սովորութիւնք . . . :

Մեր կատարած այնքան բազմագիմի և խառն գործողութեանց մէջ՝ որոց և ծանօթ եմք մեր դիտացութեան ձեռօք՝ այնպիսիներ ալ կան՝ զորս զդայականութիւնը և իմացականութիւնը չեն բաւեր բացատրելու .

Մարդ ոչ միայն ընդունակ է հեշտութեան և ցաւոյ , սիրելոյ և փափագելոյ , ոչ միայն կարողութիւն ունի ճշմարիտը ճանչնալու , դատելու , յիշելու , մակարերելու , այլև կարողութիւն մ'ալ ունի գործելու կամ ժորժնեսութեան : Ի՞նչ է ժորժնես : Մարդկային հոգւոյ տարրական մէկ եղելութիւնն է՝ զորի լրագանչիւր մարդ իր ներսը կ'զգայ և այնքան որոշու պայծառ՝ որ սահմանելու անդամ հարկ չ'կայ : Գործօնէութեան ամենէն խոչոր նկարագիրը կամաւորութիւնն է : Երբոր կ'զգամ կամ կը խորհիմ՝ ոչ այնքան պատճառն եմ վրաս կատարուած այս երեսութին՝ որչափ ենթակային , բաղխումը դրուէն կուգայ՝ ես ալ կը հնազանդիմ : Բայց երբոր կը գործեմք՝ այնպէս չէ , մեր գործը մեղնէ կը բղիմ , գործը մեր

Սակայն , գործօնէութիւնը տիրապէս ինքիրեն չի գործեր առանց ուրիշն գրգուելու . ամէն որ և է

գործ՝ որ քիչ մը զօրեղէ , առիթ մ'ունի՝ յորմէ կը դրդուիմք նոյնը գործել : Այս առիթը երբեմն զդայական տպաւորութեանց մէջ է , երբեմն ալ մտաւորական գատմանց մէջ : Միտք և զդայումն եթէ գագրին՝ անմիջապէս հոգւոյն ճգնութիւնն ալ կը թուլանայ և կը վերջանայ : Ուրեմն գործօնէութիւնը մէկ աստիճան կախումն ունի այս կարողութիւններէն , թէպէտև տարրեր է ասոնցմէ և մանաւանդ թէ ասոնց վրայ իշխանութիւն խակ ունի :

Երեք վիճակներ կան՝ որոց մէջէն ճամբայ կ'ընէ գործօնէութիւնը և ասոնք են . բնապահութեան , կամ , առջւրութեան :

Ա . Բնապահութեան . Այն ամէն կարգ մը գործողութիւն՝ որ յանգէտու և առանց նպատակը գիտնալու կը գործեմք բնապահութեան կ'ըստուի : Այսպէս բնազդումն է նորածին մանկան իւր մօրը ստինքը բերան առնուլ՝ և ծծելու համար բերանն և այլ դնդերքը շարժելն . Տղայն այս միջոցին քաղցի և ծարաւոյ գաղափարն ալ չ'ունի , և ոչ գիտէ՝ թէ ինչ հաշիւ կայ պէտքը հոգալու համար ըրած շարժմունքներուն մէջ : Ուրեմն , բնազդումք բանականութեան ապաժաման զդայմանէն յառաջ է , ոչ միայն կ'օգնէ բանականութեան , այլ և անկէ կ'անցնի , և անոր տեղը կը բռնէ , ինչպէս , օրինակի համար , կը տեսնեմք բանականութիւն չունեցող կենդանեաց վրայ , որ , բնազդմամք , հրաշալի ծցութեամք այնպիսի բաներ կ'ընեն՝ որուն հաւասար արուեստի հնարքներով օժանդակեալ բանականութիւնը հաղիւ թէ կրնայ ընել : Ծածուկմի զօրութիւն կ'մղէ զմեզուն և ջրշունն առանց իրենց ջանալուն և առանց իրենց ձեռքն

եղած հնարքէն դուրս ելելու՝ երթալ դէպ ուղիղ  
այն նպատակ՝ զոր նախախնամութիւնը որոշած է :  
Մարդ՝ որովհետեւ բանականութեան շնորհքն ունի՝  
բնազդման կողմանէ այնչափ զարդացեալ չէ՝ որչափ  
որ են անասունները : Սակայն, կենաց ամէն հասաւ  
կի մէջ ալ ամէն անդամ կ'ընենք այնպիսի բաներ՝  
որոց ոչ պատճառը գիտեմք և ոչ կերպը : Օրինակի  
համար, երբոր գետին իյնալու վրայ կ'ըլլանք՝ ձեռ-  
քերնիս կ'երկնցունենք, որ չիյնանք :

Թէ ինչ են բնազդման բոն հանդամանքները  
պէտք է ցոյց տամք՝ որպէս զիշ'ինամք այն մնջորու-  
թեան մէջ՝ յոր ինկած են կենդանաբանք, և մար-  
դուն ու անասնոյն մէջ տարբերութիւն չ'կայ կ'ըսեն :

1. Բնազդումը կոյր կամ անազդական է, վասն-  
որոյ բնազդական գործեր՝ թէ մարդ թէ անասուն  
առանց այն գործոյն վախճանը դանելու կը կատա-  
րեն :

2. Բնազդ ումը անվրէպ է, անսխալ կերպիւ  
ջրառն իւր բայնը կը շինէ, եղն իւր խոռը կը փոցնէ,  
վագրն և առիւծն իւր որսոյն ետևէն կ'երթան :

3. Բնազդման միտումը միայն մի մասնաւոր  
վախճան է, այդ վախճանէն դուրս զօրութիւն չ'ու-  
նենար . այս ինչ գործոյն համար օդտակար է, այն  
ինչ գործոյն համար ալ անօդուտ . թռչունը այսպիսի  
բայն կը շինէ, նապաստակը այնպիսի մորի, ամէն  
աեսակ ասրդ . այսպէս կամ այնպէս ոստայն կը մանէ :

Իսկ այն էակը՝ որ խելքով կը գործէ և ոչ բնազդ-  
մամք, ընդհակառակն գիտէ՝ թէ ինչո՞ւ կը գործէ :  
Քրած գործը շատ անդամ վախճանը չը բռներ, և  
ամէն վախճան ձեռք բերելու համար պէտք է՝ որ  
ինք իրեն բռնութիւն ընէ և քանի մը անդամ փորձէ :

Վերջապէս մէկ կերպ չէ, այլ շատ տարրեր կերպե-  
րով կրնայ գործել, գործելու, աշխատելու և ճար-  
տարելու կողմանէ մէկ մասնաւոր կերպի մէջ փա-  
կուած չէ:

Մարդկային կենաց մէջ ինչ քան ալ ըլլայ ըլ-  
նազդման մասը՝ չափազանց կարեռութիւն տալու  
բան չէ :

Բ. Առջրունէն : Ուրիշ վիճակ մը՝ ընդ որ ճամ-  
բայ կընէ մարդկային գործողութիւնը ու կորունէն,  
այսինքն այն տրամադրութիւնը՝ որ միւննցն գործ-  
յաճախ կրկնելէն գոյացած է : Սովորութեամբ կա-  
տարուած գործերը բնազդականներուն հետ սա-  
հանդիտութիւնն ունին՝ որ երկուքին մէջ ալ հաշիւ  
և խորհրդածութիւն չըկայ, և մութն ՚ի մութն  
գդացմունք մը հազիւ կայ :

Երբոր տղայն կ'սկսի քալել, ոտքերը կը դող-  
դոջեն, ամէն քայլ առնելու մեծ ճիգ կընէ, բայց  
քանի որ հետզհետէ այս ճիգը կրկնուի, գծուարու-  
թիւնը կը վերնայ և ժամանակ կուգայ՝ որ առանց  
գիտնալու կը վազէ, ինչպէս որ հիմայ խօսելու,  
գրելու և մտաւոր և մարմնաւոր այնքան կրթու-  
թեանց մէջ ընդհանրապէս կ'ըլլայ մեղի : Այն որ  
՚ի սկզբան տաժանելի էր, երթալով յոդնութիւն  
չը մնար, և այնքան գիւրին կըլլայ՝ որպէս թէ բնա-  
կան էր մեզ այնպէս ընելը, ասոր համար ըսուած է,  
երկար ժամանակոյ ու լորունէն ժոիի ՚ի բնաւնին : Առոր  
համար է՝ որ դաստիարակութեան ազդեցութիւնը  
այսքան մեծ է, և տղայ մը պարկեցտ մարդ և բարի  
քաղաքացի ըլլալու համար կանուխէն աշխատու-  
թեան և առաքինութեան կը վարժեցունեն : Եթէ  
՚ի կանուխ համակէ կրթութիւն ընեմք՝ կընամք բա-

բեպաշտ, անկեղծ, բարեխառն, ժուժկալ, ողջա-  
խոհ, արդար ևայլն ըլլալ: Եթէ ընդհակառակն  
կանիաւ սովորեցանք ծուլութեան, գէշ ընկերնե-  
րու հետ մեծյանք, վերջէն երրոր ինքզինքնիւ ուղ-  
ղութեան ճանապարհը բերել ուղենք՝ շատ ծանր  
նեղութիւններ կրել պէտք կ'ըլլայ:

Գ. Կամ: Մարդուս գործօնէութեան երրորդ  
վիճակը կամ է, ասոր և առաջիններուն մէջ մեծ  
տարբերութիւն կայ: Կամքին բնական հանդամանքն  
է գործ մը ընելու ատեն գիտնալ՝ թէ ուղեցինք  
ընել, և այս ինչ նպատակաւ ըրինք: Ով որ կուզէ,  
դիտէ՝ թէ կուզէ, և թէ ինչ կուզէ. եթէ յուի շար-  
ժումմընէ՝ կամ գէշ խրտում մը, պատճառը լիս-  
պէս գիտնալով կ'ընէ, կամ՝ որ նոյն է ասել ուշա-  
դըութեամբ կ'ընէ. այս կարգի գործեր տուրել  
գործեր կ'ըստին: Կամքին գործերը գլխաւորապէս  
մարդուս բարոյական կենաց մէջ կ'երիին: Այս է՝  
որ, այօինքն կամքն է՝ որ տիեզերքի մէջ տեղը կը  
կացուցանէ զմեղ, և բոլոր միւս էակներէն կ'որոշէ  
միայն հանդամաններով կամաւոր և անձնաւորա-  
կան գործողութեան: այս է՝ որ զմելյարմար կընէ  
արքանեաց և պարսաւանաց, և եթէ ներելի է այս-  
պէս ըսել, պատասխանատուութիւնը կը ձուլէ:  
Ուղղակի պատասխանատու մնք մեր զգացմանց և  
խորհրդոց, վասնզի մեզնէ կախումն չ'ունին, որբե-  
րու համար կրնանք մաքուր զգացումներ և խորհրդ-  
դներ առջևնին հանել, բայց պատասխանատու ենք  
հետևանքին այն գործոց՝ որ գիտութեամբ և ուշա-  
դըութեամբ գործեցինք: Պարտականութիւն ու-  
ղիմք՝ եթէ գէշ են՝ չ'ընել, եթէ լաւ կամ պարկեշտ

գործեր են՝ ընկել:

Դ. Վերը առաջնական կուտառքական գործոց: Մեր շուրջն  
եղող ամէն առարկայներէ զգացմունքներ և դաշա-  
վարներ կ'առնեմք՝ որ իրարու ետեւ անհուն տար-  
բերութեամբ կուզան մեր առջև, և մեղ կը թելադ-  
րեն: Մանկութեան յատուկ է ենթակայ լինել վա-  
ղանցիկ և բուռեն տպաւորութեանց՝ որոց գէմուժ  
չ'ունի կուռելու: Բայց երբ հոգին ինքզինք գիտնա-  
լու կը ժամանէ, տեսարանը կը փոխուի: Կարողու-  
թեանց վրայ պարտք կը դնէ՝ որ գիտակցութեան  
խորհուրդ հարցունէ, իմացականութեան և զգայա-  
կանութեան սանձը ձեռք կ'առնէ, կը տանի հոն՝  
ուր որ ուղէ, վերջապէս հոգին ինքզինք կը կառա-  
վարէ, կամաւոր գործողութեան առաջին վայրկեանը  
այս է: Երբ հոգին այս վիճակն համնի՝ կը պատրաս-  
տուի գործել, բայց գործելոյ համար ընելիքը որո-  
շակի պէտք է տեսնէ: Երբեմն բացայսա պայծա-  
ռութեամբ յանկարծ կը տեսնէ: Օրինակի համար:  
մայր մը իւր զաւակին վասնզը կը տեսնէ, կը վազէ  
օգնելու: Երբեմն ալ՝ անորոշ կը կենայ շատ մը կը-  
տոքներու մէջ, հոգին կը քննէ: կը մտածէ, խոր-  
հուրդ կը հարցնէ կամ ինք իրեն կամ ուլիչին՝ որ  
իմանայ՝ թէ ընելիքներուն մէջ որն օգտակար և  
պարկեշտ է և որը այնպէս չէ: օրինակի համար,  
օդուստա խորհուրդ կը հարցյն Մաքսիմոսի և կին-  
նայի՝ թէ կայսրութիւնը պահէ՝ թէ թողու:

Կամաւոր գործոց այս նախկին շարժառիթ-  
ներուն մէջ բաղդատութիւն կատարելը խորհրդակ-  
ցութիւն կ'ըսուի: Ասու՞ծոյ հարկաւոր չէ խորհր-  
դակցիկ կամ հետաքըքիլ, զի նորա անբաւ բանա-

կանութիւնը մէկ հայեացքով, առանց անստուգութեան՝ ինչպէս և առանց ջանից յաւխտենական կերպով, կը բովանդակէ էակաց բոլոր առընչութիւնները : Խորհուրդ հարցնել կամ փիճարանել մարդկային անկատար իմացականութեան յատկութիւննէ . մարդկային միտքը շատ քիչ անդամ ճշմարտութիւնը ներկայ կը տեսնէ, գտնելու համար պէտք ունի ճգնութեամբ և համբերութեամբ ջանալու :

Խորհուրդ հարցունել կամ բանակցիլ պէտք ըլլայ՝ թէ չ'ըլլայ, մեր հոգին բան մը ընելու կամ չ'ընելու շուտ կը համոզուի . ներսէն պէտք է չներ ըսելուն պէս, ի՞ո՞վ կամ վէ ո՞ւ-էր ընէն ալ անմիջապէս կ'ըսէ : Ակնիկ մը որ իրիտասարդի մը կին ըլլալ կ'ուղէ և ծնողքները գոհ չեն, երիտասարդին վրայ ունեցաւ սիրոյն և որդիական հնազանդութեան պարտուց առջեւ ժամանակ մը կը վարանի, բայց վերջապէս հնազանդութեան պարտուց սէրը կը յաղթէ և կը համակերպի ծնողաց որոշման՝ հակառակ իւր ըղդայական յօժարութեան : Բանականութիւնը որ ինչ պարիեշտ է և կամ օգտակար՝ առջևնիս կը բնըրէ, հոդին ալ կ'որոշէ գործել.

Ինչպէս որ ծանր և խորհուած մտադրութիւններ և արագ ու դիպուածոյ մտադրութիւններ կան, նյոյնպէս ալ զազփաղփուն, շարժուն և անորոշ մտադրութիւններ կան, կամ ալ որ հաստատուն և անփոփոխ կը և, մէկ խօսքով, յամառ են : Մարդ ինչ մտադրութիւն որ իրեն սովորական ըրածըլլայ՝ անովիւր նէրաբեր կամ բնութիւնը կը կազմուի : Վարանութիւնը բնութիւն ունեցողը՝ չիկրնար մտադրութիւնը որոշել տկար բնութիւն ունեցողը առաջին անդամ դէմի արդեզր ելլելուն կանդ կ'առնէ, թէթևամիտը ամէն

վայրկեան մտադրութիւնը կը փոխիսէ : Յամառ բնութիւն ունիցողը՝ ինչ որ կանխաւ ուղեց՝ դէշ աղէկ անոր վրայ կը պահէ՝ մինչև որ նպատակին հասնի : Մտածող բնութիւն ունեցողը շուտ կ'որոշէ և կը քալէ դէմի ՚ի նպատակը առանց ետ դառնալու :

Հոգին այսպէս իւր նկարագիրը կազմելով դործարանները կը շարժէ՝ որ այն նպատակին երթայ, հոգին կը գործէ : Երբեմն կ'որոշէ որ այլևս պիտի չ'ընէ, կամ ուշ պիտի ընէ, այսպէս կամ այնպէս պիտի ընէ՝ պարագայները ինչպէս որ բերեն . Այսպէս սպարապետ մը իրիկութնէ կ'որոշէ վաղուան պատերազմը, առաւտօտուն առաջին ժամուն այս ինչ կէտը բունեմ և ոչ այն ինչ կէտը կ'ըսէ, և արշաւանքին գծովը քանի մը օրէն թշնամեյն յաղթելու միջոցները կը կարգադրէ : Մտադրութիւնը այսպիտի պարագայներու մէջ ուղէ գործը բոլորովին կը թողու, ուղէ վաղուան կը ձգէ, կամ դէպքերը երեակայելով անոր համեմատ կը կարգադրէ ընելիքը : Ըստծներէս կը հասկըցուի թէ երկու այս եղելութեանց մէջ այսինքն որոշելուն և գործելուն մէջ թէպէտե շատ անձուկ, կախումն կայ, սակայն տարբեր բաներ են իրարմէ, և մեք պէտք չէ որ շփոթեմք :

Վերջապէս, չորս գլխաւոր մասերէ կը բաղկանայ կամաւ որական երեսութիւն ամբողջը . չու ի-ը ո-չին ո-է ըլլալ, է-ո-է-ին ի-նո-ո-ու, ո-ո-է-լ, է-ո-է-է-լ . բայց շորսն ալ նոյն և մի կարևորութիւնը չ'ունին գործ մը գործուած համարելու . կամ որ նոյն է մարդկային պատասխանատուութիւնը երեան հանելու կողմանէ :

Վասն որոյ դատումը՝ որով կ'ըսեմք թէ այս ինչը ընելու բան է՝ այն ինչն ալչ'ընելու բան, մեր մտքին մէջ ուղեմ շուղեմք կը կատարուի, մեզնէ կախումն

չունի այս դատումը , ինչպէս երկուք և երկուք հինգ չ'ընելու հաւատքը մեղնէ կախումն չ'ունի : կրնամ , օրինակի համար , ըստ հաճոյից իմոց դատել՝ թէ ինծի յանձնուած աւանդը պէտք է ետտամ կամ պէտք չէ ետ տամ . կընամ ընել օդառակար դործ մը և խելացի կամ անխելք դործ մը յանձն առնելով այնպիսի տոյժեր՝ որ չեմ կընար վճարել . կընամ վրաս առնուլ այնպիսի պաշտօն՝ զոր դործածելու տաղանդը չ'ունիմ , կամ ֆիզիդական վիճակս չ'թոյլատբեր կամ զաւակացս ապագային վտանգը արգելք կ'ըլլայ : Ստուգիւ , ամէն այս դէպքերու և այլ ասոնց հանդէտ պարագայներու մէջ ընելիքներնուս վրայ կը խորհիմք՝ այն կերպով և այնպիսի ուժով՝ ինչպէս կը վարուիմք իմացականութեան ուրիշ դատմանց մէջ :

Գանք հիմայ կամաւորական երեւութիւն մի ուրիշ տարերքին , դործադրութեան կամ ֆիզիդական դործողութեան . այս ալ մեր կարողութեան ներքեւ չ'ինար , զի պէտք կ'ըլլայ առողջութիւն կամ դործարանի կորով , թէութիւն մը՝ որ միշտ պատրաստ չ'ենք ունենար : Թող շվեյշակաղ արդելականը զինքը կապով շլթաները խզէ , անդամալցից ձեռոքը շարժել կամ ելել քալել ուզէ , ծանր բեռ մը մէկը առանց լծակի տեղէն խախտել ուզէ , բան մը չ'կընար ընել :

Սակայն , երբոր որոշումն կ'ընեմ , որոշումն ինձմէ կախումն ունի . վասնզի ուղեմ կ'որոշեմ կամ միտքս կը դնեմ ընել , ուզեմ չեմ որոշեր կամ միտքս չեմ դներ ընել , ոչինչ կընայ այս ներքին և դերազանց պարզեց բանաւոր արարածին ձեռոքէն խլել : Այս պարզեց կայ և կը մնայ՝ մանաւանդ դիւ-

ցաղն հոգիներու մէջ , մինչև գերութեան և հալածանաց ներքեւ եղած ատեննին անդամ , բռնութիւնը որքան սաստկանայ՝ բնաւ չ'զօրէր խախտել դիւցազին որոշումը , և դիտեմք՝ թէ որքան անդամ բռնաւորաց մեղապարտ փափազները ոչինչ եղած են :

Բաածէս ի՞նչ կը հետեւի . սա ըսել կուզեմք՝ թէ որոշումը կամ մոտադրութիւնը , առանց սակայն բաժանելու անձնիշխանութենէ , գլխաւոր տարերքնէ՝ որ կամաւորական երեւութիւ մէջ կը ներկայացունէ խսկապէս հոգւոյն յատուկ դործօնէութիւնը :

Այս եղրակացութենէ նաև կը բզիսի սա բարոյական հետեւութիւնը՝ թէ մարդուն առաքինութիւնն ու վատութիւնը ոչ այնքան դործէն կախումն կ'ունենայ՝ որքան որոշումէն կամ մոտադրութենէն դաւաճանը իւր գոհին վրայ յարձակելու ատեն՝ այն ինչ հարուեածը պիտի իջնէր և ահա զոհը խուսափեց , ոչ պակաս մեղապարտ է քան զրուն հարկանողը . զինուորական մը կը մեռնի վասն հայրենեաց , դատաւորը վասն պահպանութեան օրինաց , նաւաստի մը՝ ծովին կյնալով խեղդուելու մօտ մէկը աղատելու համար՝ ինքինքն ծովը կը նետէ , ասոնք դիւցազնական պատիւ ունին՝ մէկ իւրեանց վեհանձն ճգնութեան մէջ չը յաջողին : Սակայն , Աստուծոյ միայն վերապահեալ է թափանցել խղճմանաց խորը , մարդկային դատումներ սրտի մէջ ինչ գաղտնիքներ կան՝ չեն կընար դիտնալ : Մարդկային ընկերական օրէնքը վարձք կամ պատիմ կուտայ միայն երեցած դործօղութեան :

ԳԼՈՒԽ ՃԲ.

Քարոյական ազատութիւն կամ անձնիշխանութիւն . — Քացալայտութիւն ազատութեան . — Հերքումն ազատութիւն ու քացողդրութիւն . — Ճակատագրութիւն . — Սահմանականութիւն :

Ազատութիւն բառը շատ առմամբ գործածուածէ . Երբեմն կը նշանակէ կարողութիւն գործելց՝ դիմադրելով ներհակին . ազատ եմ հիմայ ելելել քալելու , բազուկս շարժելու . շղթայակապ մարդը այս ազատութիւնը չ'ունենար : Երբեմն կը նշանակէ վայելումն իրաւանց , ինչպէս է ազատութիւն ինքիփնքն և իւր հարստութիւնները տնօրինելու , որ նոյն ինքն է բնական ազատութիւնը . ազատութիւն իւր կրօնքը պաշտելու կամ խղճի ազատութիւն ըստածը . բայց ազատութիւն բառին հոգե բանական բուն նշանակութիւնն է՝ կարողութիւն ինքնօրէն որոշելց կամ ընտրութիւն ընելց զանազան իրաց մէջ , որ յատուկ բառով Անյնշանութիւն կ'ըսուի :

Ա . — Բայց այդունիւն կամ աղացոյց աշատութեան , թէ գիտակցութեան փորձառական ապացոյցները և թէ իմաստափրութեան փորձերը միասնաբար կ'ապացուցանեն՝ թէ մարդն է գործող՝ օժտեալ ազատութեամբ , իրաւնտիր հրամանահան իւր գործոց և վախճանին :

Կենաց մէջ մէն մի վայրկեան գիտակցութիւնը մեզ կ'ըսէ՝ թէ մենք իշխանութիւն ունիմք ընելու այս որոշումը կամ այն . այս ընտրութիւնը արտաքին արգելքի հետեանք չէ , մարդկային բնութեան օրինաց ներքին հարկաւորութենէլ ալ չէ , այլ մեր կամաւոր գործոնէութենէն կը բղիս : Ըստ այսմ , կրնամ անխատիր թէ յաջ երթալ և թէ 'ի ձախ , վեր բռնել ձեռքս կամ կախել , խօսել կամ լւել . Եթէ առջևս պտուղ ալ կենայ գիրք ալ , կրնամ պտուղը ձգել գիրքն առնուլ կարդալ , կամ գիրքը չ'առնուլ պտուղը ձեռք առնել , եթէ անդամմը սկսայ կարդալ կրնամ շարունակել ընթերցումն կամ դադրեցընել , կամ եթէ դադրեցուցի՝ վերստին կրնամ շարունակել : Ուրիշ աւելի ծանր օրինակ մը ևս ըսեմ : Երբոր շահը , կիրքը և պարաքը իւրաքանչիւր իւր կողմը կը քաշեն իմ յօժարութիւնս , ազատ եմ՝ ուզեմ պարտուց ձայնին կ'անսամ , ուզեմ կրից աղաղակին , ուզեմ շահու խոստումներուն :

Մարտիրոսք կրնային իրենց կեանքը փրկել սուտ աստուածոց երկրպագելով , բայց աւելի յօժարեցան տանշանաց մատնել զիրենք՝ քան հաւատքնին ուրանալ . Ծնձնասիրութեան և առաքինութեան այս մերթ մութ և մերթ բացայացտ պայքարը ամէն գիտակցութեան մէջ կը պատահէ . այս պայքարն է մարդկային սրտի պատմութիւնը : Բայց վէճը կտրող և յաղթութիւնը որոշող գատաւորն ովէ . հողին է՝ զրահաւորեալ իւրով ազատութեամբ :

Այս առթիւ կը հարցնէ Պայլ . արգեօք մեր մտադրութիւնը յառաջ բերող մաս մը պատճառներ գիտակցութենէ խօս տուած չեն կրնար ըլլալ , անձնիշխանութեան մէջ մեր վատահութիւնը անդիտու-

թեան հետևեանք չը կրնա՞ր ըլլալ, և կերպով մը չե՞նք  
նմանիր արդեօք կենսաւոր շանչանի՝ որ համոզուած  
կըլլայ ազատ շարժելու ընդունականութեանը, բայց  
դժբախտաբար միշտ այն կողմ կրդառնայ՝ որ կողմ՝  
որ հողալ կը փէջ՝ Ստոյդ է, մեր հոդին պաշարող  
ազդեցութեան կամ ներսերնիս անցած երաւոթից  
մէջ կան անանիներ՝ որ հազիւ գիտակցութեան կը  
դպչին, կամ շատ թեթև արթնութիւն մը հազիւ  
հաղ կուտան, և կամ ինչպէս լէիրնիտիոս ըսած է,  
շատ դաղսուկ կը լինին. սակայն ճշմարտութիւն  
մ'է թէ դիտակցութիւնը վերջին բացայացուու  
թեամբ և անվրիպելի իշխանութեամբ մեր դիմաց կը  
կանդնի. պատճառն որ՝ մեր որոշումները, որքան  
ալ արտաքին ըլլայ իրենց շարժառիթը, միշտ մեզնէ  
կը բղխին. Երբեմն ստոյդ չե՞նք գիտնար՝ թէ ինչ  
պատճառներէ շարժեալ գործեցինք, բայց դոր-  
ծելնուս պէս գործող, կամեցող, որոշող մեք ըլլալ-  
նուս վրայ թնաւ տարակցու չեմք ունենար. Այս է դի  
տակցութիւն ըսուածն ամէն առթի մէջ, որոյ վկայ-  
ութիւնն անվրիպելի կ'ապացուցանէ թէ անձնիշխա-  
նութիւն կոյ:

Ըստածնիս հասկցնելու աւելի պայծառ օրինակ  
մը տամ: Գործելէ յառաջ շատ անդամ ես ինքիրենս  
կը խորհիմ, կը ձևեմ, հակառակ կողմի առաւելու-  
թիւններն կը չափեմ, կը հետաքրքրուիմ. Երբոր  
կ'զգամ՝ թէ ինքիրենս չ'պիտի կրնամ որոշել, այ-  
լոց խորհուրդ կը հարցնեմ, անոնք ալ ինձ խրատ  
կուան, կ'աղաջեն, կը խոստանան, կ'ապառնան:  
Գործելուս պէս՝ կամ կ'ուրախանամ, կամ կը զզամ՝  
թէ ինչո՞ւ գործեցի, առեսնողներն ալ կը պարսաւեն  
կամ կը գովեն, եթէ աղէկ ըրե կը սիրեն, եթէ չար-

կը մեղադրեն. Արդ՝ ո՞չ ապաքէն այս եղելութիւն-  
ները կը նշանակեն՝ թէ աղատութիւն կայ. Եթէ  
ազատ չեմ՝ գործս ալ ինձմէ կախումն  
չ'ունենար, ես ուղեմ՝ չ'ուղեմ և ինչ որ ալ ընեն ու-  
ղիները՝ ինչ որ ըլլալ պէտք է՝ այն կըլլայ, ասոր հա-  
մար ինչո՞ւ հետաքրքրուիմ, կամ խորհուրդ հար-  
ցնեմ, ինչո՞ւ ուրիշներն ալ ազաշն, սպառնան կամ  
խոստումներ տան: Տեսներ ես՝ որ մարդիկ իրարու-  
դըւնս գլխի ապավլ խորհին՝ թէ ինչպէս ընենք որ  
մարմինները իրար չըքաշեն, կամ ձգողութեան օ-  
րէնքը փոխելու համար ինչ ընենք:

Եթէ ազատ չեմ, հիմայ ինչ վարք որ ունիմ՝  
անկէ ուրիշ չեմ կրնար ունենալ: Ուրեմն, յիմար  
եմ եղեր՝ որ գործած յանցանքիս վրայ կըզջամ,  
կամ գործած առաքինութեանս վրայ կ'ուրախա-  
նամ: Ուրիշներն ալ նշնակէս յիմար են ուրեմն՝ որ  
զիս կը գովեն կամ կը պարսաւեն, կը պատժեն կամ  
կը վարձատրեն. պատասխանառու նկատելով զիս  
այնպիսի գործոց՝ որ եղան առանց իմ կողմանէ ար-  
գելք կամ հաւանութիւն կենալու, կրակին՝ այրե-  
լուն, ջուրին վագելուն, մագնիսին երկաթը իրեն  
քաշելուն պէս:

Բարցյական պարտուղ գաղափարն ալ կ'ապա-  
ցուցանէ. թէ աղատութիւն կայ: Պարտք անոր հա-  
մար կ'ըսուի՝ որովհետև կրնայ գԹրծաղրուիլ: զիս  
ոչ ոք ստիպեալ է ընել այնպիսի բաներ՝ որ կարս-  
զութեան սահմաններէն անդին է: Խելքերնիս մազ  
ինաց կ'ուտայ՝ թէ մենք պարտքեր ունիմք կատա-  
րելու առ մեր անձն և առ մեր նմանիս, ուրեմն կա-  
րողութիւն ալ ունիմք այս պարտքերնիս կատարե-  
լու: Վերջապէս, եթէ ուրիշ ամէն ապացցներ ըս-

պառին, բաւական ապացոյց չէ ազատութեան՝ առ  
հասարակ բոլոր մարդոց իրենք իրենց համար վկա-  
յելն՝ թէ ազատ են։ Եթէ յիրաւի ազատչէին, այս  
գաղափարն ուստի իրենց եկերէ, այս զգացումը՝ որ  
այնքան հակառակ է բնութեան սովորական ընթաց-  
քին, բնութեան՝ յորում ամէն բանհաս տառուն և  
անփոխսելի օրէնքներով կը վարին, ուստի՞ծ ադածէ։

Բ. — Հերուսակ հայութանքունեան հաստատուն ա-  
պացուցից հակառակ ազատութեան վարդապետու-  
թիւնը շատ մը ներհակողներ ունեցած է, զիսաւոր-  
նելին են Ճակատաբեռներն և Ասճանականերն։

Քննեմք մի ըստ միոջէ ասոնց գլխաւոր առար-  
կութիւնները, սկսելով այն առարկութիւններէն՝ որ  
մարդու ընդհանուր կաղմուածքէն առնուած են,  
և մոռնաւորապէս առիթներու և խառնու ածքնե-  
րուն կամքի վրայ ըրած ազգեցութենէն։

Ի. Հոդին, կըսեն այս կարծեաց ջատադով  
ները, առանց պատճառի չի դործեր։ պատճառ-  
ներուն մէջ որը որ ամենէն զօրաւոր ըլլայ՝ այն դոր-  
ծել կուտայ, ինչպէս ծանրը կոխելուն պէս թեթեւը  
վեր կ'ելլէ նժարքի մէջ, կը հետևի ուրեմն թէ մեր  
որոշումները պատճառի բերք են, և ոչ թէ մեր անձ-  
նաւոր պատճառականութեան արդիւնք։ Կ'ընդու-  
նիմք, թէպետե թէյտ այսքանն ալ կ'ուրանայ. Թէ  
մարդ առանց առիթի չիգործեր, սակայն առիթնե-  
րը կը տրամադրեն, կը հակեցունեն, և ոչ թէ կը  
բռնադատեն։ Ասոր ապացոյցն այն է՝ որ առիթ-  
ներուն հետ կը վիճիմք, և շատ անդամ կը գիմա-  
դրեմք. իմ շահուս և բարոյական պարտուցս ամե-  
նէն յարմար մէկ բանն ալ ըլլայ՝ կ'զգամ. թէ ներ-

պը ուժ մ'ունիմ մերժելու, ընդհակառակն շատ  
ծանր առաջարկութիւն մ'ալ ըլլայ՝ կ'զգամ. թէ  
ուժ մը կայ ներսա կատարելու զայն։ Դնդակ մը գը-  
լորելու ժամանակ ուրիշ գնդակի մը գպելով կանդ  
կ'առնու, ծանրակշռութիւնը որ կողմ որ ըլլայ գը-  
լորման մէտը բազդովի կը տատանի, սակայն հոգին  
մոքի և սրտի ամենէն ուժգին թելագրութեանց  
կամ գրգռմանց առջևն անդամ իւր անկախութիւ-  
նը կը պահէ, գիմակալելու այնպիսի զօրութիւն մը  
ունի ինք իւր մէջ զոր ոչ բանականութիւնը և ոչ  
կիրքը չեն կարող չնչել, և երբ կը յաղթուի՝ պատ-  
ճառն այն է՝ որ ուղեց յաղթուիլ։

2. Ճակատագրի ջատադովք կ'ըսեն նաև. թէ  
խառնուածքը նկարագրի վրայ ազգեցութիւն կ'ը-  
նէ, կենաց սեւը և մարդոց մէջ տարբեր սովորու-  
թիւնները ազատութեան վրայ ներհակ ներդործու-  
թիւն կ'ընեն։ Ասոնց նայելով ինչպէս ոմանք զօրեզ  
կամ նիշար կը ծնանին, նոյնպէս առաքինի կամ  
վատ կը ծնանին, մէկ խօսքով բարոյականը գործա-  
րանէ կախումն ունի։ Ոնչուշտ, խառնուածքներն  
և միտումները գժուարին առաքինութեանց գոր-  
ծադրութիւնը և բարոյական կատարելութեւնը կը  
դիւրացնեն կամ կը գժուարացնեն, բայց խնդիրն  
այս չէ։ Արտաքը կարգի գէպքեր ալ կան, ինչպէս  
արբեցութիւն, քնաշրջութիւն, լիմարութիւն, խրս  
աղատութիւնը կը մժադնի, կը հեղձանի և գործա-  
դրութիւնը կ'ընդհատի. ասոր վրայ ալ խնդիր չ'ու  
նիմք, զի աշխարհ բոլոր գիտէ՝ թէ այս վիճակի  
մէջ աղատութիւնը վրէպ հանդամանք առած կ'ըլ-  
լայ։ Բայց իրաւոնք ունիմք այս օրինակ պատճա-  
նունքներ կարգ և կանոն համարելու, ոչ ապաքին,

բիւր գէպքերու մէջ տեսեր եմք ազատութեան իշխանութիւնը խառնուածքի վրայ վայլիլ : Այս ալ չը մոռնամք՝ որ խառնուածքը հոգւոյն վրայ ուղղակի չի գործեր՝ այլ մեր դդացմունքներն ու գաղափարները միջնորդ առնելով . դդացմունք և գաղափարը ալ տեսակ մը առիթներ են՝ որ մեր ազատութեան վրայ կը ներդործեն՝ բայց չեն բոհանացը : Յայսմէ դաստիարակութեան զօրութեան գաղտնիքը . ասկէց է՝ որ մարդ երկար ատեն իւր խորհրդայ վրայ իշխանութիւն կ'ունենայ . եթէ մեր վախճանը դանկերնուու չենքէն կախումն ունենար , պարագ տեղն է ուրեմն՝ որ մեր ծնողը և դաստիարակը կը ջանան ուղղել մեր մոլեկան յօժարութիւնները , և կամ մեք մեղն պէտք չ'ունիմք ուրեմն հոգալու . որ բարեփոխնմք մեր յութ սովորութիւնը : Մեր ու մեր դաստիարակաց յաջողութիւնները կ'ապացուցանեն՝ թէ դործարանաց ազդեցութիւնը իւր հակաղիւն ունի , և թէ բնադրումը չի ջնջեր ազատութիւնը :

3. Սահմանականներն աւելի խորն իջնելով իրենց աւարկութեանց՝ մարդկային ազատութիւնն հերքելու համար ապացոյց կը բերեն այն ընդհանրական օրէնքը՝ որ տիեզերքի բոլոր եղելութիւնները սահմանեալ պայմաններու ներքեւ առած է , օրէնք մը՝ որմէն չը կրնար , կ'ըսեն , ազատ մնալ մարդուս կամքը :

Ոչ ոք կը աւարակուսի այդ ընդհանուր օրինաց գոյութեան վրայ , սակայն ովլ կրնայ ըսել՝ թէ ազատութիւնը և կամ կամքը չէ այն պայմաններէն մին՝ ուրկէ մասնաւոր դէպքեր ալ կախումն կ'ունենան , ինչպէս են մարդկեղն գործերը . ովլ կը

նայ ըսել՝ թէ բնութեան անզգայ օրինաց կուշոք՝ տիեզերքի մէջ իւր աեղին չ'ունի մեր հոգին , և ինքն զինք կառավարելու յաստուկ կորովը չի վայելեր : Ներքին զգայութիւննիս հաստատապէս կը պնդէ՝ թէ արդարեւ ունիմք : կրնան ըսել սահմանականք՝ թէ գուցէ ներքին զգայութիւննիս խարուեր է , և չենք գիտեր՝ թէ մեր յօժարութիւններն ու իրենց բուն պատճառները ինչ կապ ունին մէջէրնին : Սակայն , ինչ են այս պատճառները , և ովլ կրնայ ցոյց տալ : Եթէ մենք չենք գիտեր , ինչպէս կարելի է որ բացայաց եղելութեան դէմ հաստատուն ձեռնարկութիւնն մը կիսուենք չ'գիտցած և չ'իմացած բաներնուս մէջ : Ուրեմն մինչև վերջը իրաւունք ունիմք պնդելու՝ թէ մեր հոգին բան մը որոշելու ատեն , եթէ ծանօթ և եթէ անծանօթ՝ ինչ շարժառիթներէ ալ թելագրուի , ներքին զգայութիւննիս կ'աղաղակէ՝ թէ մեք եմք որ կ'որոշեմք , կը կամիմք և կը գործեմք :

4. Գամք հիմայ ուրիշ սեռի առարկութեանց՝ զորս ումանք մէջ կը բերեն 'ի հարցումն ազատութեան , այսինքն է մեր ազատութիւնն հանդէպ աստուածային ստորոգելեաց , Սահմանականք կը պնդեն՝ թէ ազատութիւնը ներհակ է .

1. Աստուծոյ կանխագիտութեան , որովհետեւ ազատ գործը չի նախատեսուիր :

2. Աստուծոյ կարողութեան՝ որովհետեւ ազատ գործը նախախնամութեան ներքեւ չի մտներ :

3. Աստուծոյ արդարութեան և բարութեան , զի ազատութիւնն թէ բարի ընելու կարողութիւնն է և թէ չալն . Ստոյդ է , ասոնք այնպիսի առարկութիւններ են՝ որոց առջև տագնապեր են միշտ

վիլիսովիայք և աստուածաբանք, բայց չափազանց կարեղութիւն տալրու առարկութիւն չէ, և թող չը կարծեն սահմանականք՝ թէ անհերքելի փաստ մը դտան իրենց վարդապետութեան :

Կանխագիտութիւն ըսուած բառը՝ որ մեր մը տաց մէջ յաջորդութեան կամ ժամանակի դաշտավար կը յարուցանէ՝ Աստուծոյ ընծայութիլը ճիշդ չէ, զի Աստուծոյ համար ոչ անցեալ կայ և ոչ ապառնի, այլ մշտնչենաւոր ներկայ մը, այնպէս՝ որ ճիշդը խօսելով՝ Աստուած մարդկային դործերը ոչ թէ յառաջուց կը տեսնէ՝ այլ կը տեսնէ. ՚ի բարձանց իւրոյ յաւխտենականութեան, կը տեսնէ մեր դործերը, ինչպէս մարդ մը ՚ի բարձանց բլրոյ կը տեսնէ ինչ որ կ'անցնի դուր դաշտի մը մէջ. Բայց առարկային տեսնուիլը՝ անոր բնութիւնը չի փոխեր, տեսնողին լրկ նոյուածքը ոչ ապատ դործը հարկաւոր կ'ընէ, և ոչ հարկաւոր դործը ապատ։ Ուրեմն Աստուծոյ կանխագիտութիւնը ու մեր աղաստութիւնը իրարու չեն հակառակիլ:

Գլուխ ժգ.

Միաբանութիւն կարողութեանց հոգւոյ.

—Միութիւն արմատի այս կարողութեանց .

—Անձնաւորութիւն մարդոյ :

Ա. Մէկաբանութիւն կորոշութեանց հոգւոյ և Երբ մենք մեր խորը իջնեմք առաջին անդամ դիմացնիս ելած բանը զանազանութիւնն է այն երևութից՝ որ մեր ներսը կան և արագ արագ իրարու կը յաջորդեն ։ Մաքերնիս ամէն վայրկեան մէկ դաղլափարէ միւսուր, մէկ զգացմունքէ ուրիշ զգացմունք կ'երթայ ։ Ծանր պարագաներու տակ՝ հակառակ յուղմանց մէջ, սիրոյ և ատելութեան, բարկութեան և դժութեան, վըսաւահութեան և անյուսութեան մէջ կը տատամիմք կը մնամք, կը տեսնեմք՝ որ մեր ներսը կուիր մը կայ, և կարծես՝ թէ բնութիւննիս հակասութիւններէ հիւսուածք մ'է։ Սակայն, երբոր աւելի խորը իջնեմք, պիտի տեսնեմք՝ որ առերեւոյթ այս խառնակութեանց ներքեւ սքանչելի միաբանութիւն մը կայ ։ Մեր կարողութիւնները՝ որքան այլեւայլ են՝ դէմընդդէմնապատակի չեն հայեր, մէկուն առաւելումը միւս երկու կարողութեանց առաւելման արդելք չ'ենիր։ Զգայականութիւնը իմացականութիւն կը դրդուէ և կը կենդանացնէ և ոչ թէ կը խեղդէ, իմացականութիւնը զգայականութիւնը կը պարզէ առանց եղծանելոյ, և կամքը՝ որքան որ երկուքէն խորհուրդ կ'առնէ և կը թելադրուի, առայս դար-

ձեալ նոյն իսկ թելաղըութեանց մէջ աղատօրէն որոշելու իշխանութիւնը իրեն կը վերապահէ : Բնա կան այսպիսի միաբանութիւն մը կայ այս զանազան կարողութեանց մէջ . ապա թէ ոչ՝ անիմանակի բան մը կը դառնայ մեր հոգեբանական կետնը :

Բ . — Սէւսթիւն արքուուր կամ սկզբան իրաւունեանց հոգու : Տեքարթ փիլիսոփայութեան շէնքը հաստատուն հիման վրայ նստեցնելու համար՝ ուղեց մտքէն դուրս նետել ամէն այն գաղափարը և ծանօթութիւնք՝ որք իրեն երկրպահելի կը թուէին . առաջին անհերքելի եղերութիւն խորհելը նկատեց և կադնեցաւ հօն : Բայց անմիջապէս ալ նկատեց՝ որ խորհելը յառաջ չ'կընար գալ մինչև խորհող ենթակայ մը դոյ ըլլաց, և դրաւ սկզբանակէա մարդկային գիտութեան սա հոչակաւոր եղաւածը . և ի՞ն՛քի՞մ, ուշեմ է :

Ապաքէն անկարելի էր որ ճանչնամք, զգամք և կամիմք՝ մինչև որ այս գործերն երեսն բերող կարողութիւնիս ըստ վերաբերի մէկ սկզբան կամ արմատի, էակի կամ դոյացութեան՝ իրքեւ կեդրոն իւմացական կեանքի : Ինչպէս որ ձև, չարժմունք, և այլ նիւթեղին հանդամանքներ ըմբռնելու համար պէտք է որ ձեւացեալ շարժական, ճաշակաւոր, հընչական և այլն մարմիններ լինին, այսպէս ալ զգացութիւն, յիշողութիւն և յօժարութիւն կենալու համար՝ պէտք է որ զգացող, յիշող, և կամեցող էակ գըտնուի :

Եթէ կայ անհերկրպահելի բան մը՝ այն ալ այս սկզբան միութիւնն է, Հոգեբանական կեանքի երկեղիթ և ները բաղմադիմի են, բայց անոնց արմատը կամ սկիզ-

բը մէկ է : Յայտնի կ'զգամք մեր մէջը՝ թէ խորհուրդը դը մէկ մասին՝ զգացումը միւս մասին՝ կամքը ու ըիշ երբորդի մը յատկութիւնը չէ, այլ մէկ էակի գործողութիւն՝ և մէկ էակի կարողութիւններ են բոլորն ալ : Խելքերնիս այս մասին, ինչպէս ուրիշ ամէն բանի մէջ, համաձայն է մեր ներքին զգացութեան վկայութեանը : Եթէ հոգին բաժանեալ մասանց բովանդակումն եղած լինէր՝ անկարելի կ'ըլլաց հասկնալ՝ թէ ինչ է ուրեմն մեր կարողութեանց այս սքանչելի միաբանութիւնը, միաբանութիւն մը՝ որ աւելի յայտնի կ'ըլլաց երբ զարգացեալ կ'ըլլան բոլոր կարողութիւններն ալ . ասկէ զատ մի քանի ուրիշ առանձին գործողութիւններ ալ կան՝ ինչպէս են բաղդատութիւն և դատումն՝ որ նոյնպէս անհասկանալի պիտի լինէին : Բաղդատութիւնը կը պահանջէ որ կեդրոն մը կենայ՝ ուր բաղդատելի դաղաքարները գումարուին . ամէն դատումն կը պահանջէ՝ որ ազատութիւնն մը կենայ վճռող : Զգայականութիւնն ալ կը պահանջէ՝ որ զգացող ենթակայն միայն մէկ ըլլայ : Կազմագէտք կը հաստատեն, օրինակի համար՝ թէ տեսողական ջինն ու լսողականը շատ մը խոշորացուցով տեսնուելիք նրբաթելեր ունին իրենց մէջ՝ որոց իւրաքանչիւրը յարաբերութիւն ունի անհունապէս փոքրկութեամբ կամ ձայնի կամ գունոյ հետ : Այս բիւրաւոր միասնական ըմբռնումներ ինչպէս կ'ըլլայ՝ որ կը հաւաքուին, կը կապակցեն և ամէնքը մէկէն ձուլուելով միայն մէկ ըմբռնում մը յայտնի բան է՝ որ այս աշխատութիւնն ընող սօժակայն՝ պէտք է որ էակապէս պարզ և մի ըլլայ :

Գ. — Մարդկային անհնատութեան : Բայց այս են թակայն ովէք . - մեք եմք : Ամէնքս ալ գիտեմք՝ թէ գիտակցութեան երևութից ներըև եղած արմատին կամսկղբան մէջ մեք կամք . որովհետեւ այս երեւոյթ ները մեր երևոյթներն են, մեք եմք որ կը ճաշակեմք, կը դատեմք, կ'ուզեմք և կ'զգամք մերթ ուրախութիւն, մերթ արտմութիւն, հեշտութիւն և ցաւ, երկիւղ և յոյս . ասոր համար այս սկիզբը կամ արմատը կ'ըսուի եւ կամ Ունչ ինչպէս նաև Հոդի, երեք այս բառերը եւ, անչ, հոդի՝ հոմանիշ են, թէպէտեւ հոդի ըսելով կը հասկցուի մասնաւորապէս վերացարար նկատուած հոգեղին էակը, իսկ եւ կամ անչ կ'ըսուի ինք իւր վրայ ծանօթութիւն ունեցող ոգեղին էակը : Են, հոդին, անչը էական դործողութիւն ունի, և որց զգացումն և էութիւնը իրար խառնուած են, գոյ ըլլալը՝ ըստ մեղ գործեն է . մեր էութեան հիմք միայն խորհելը չէ . այլ խորհել և գործել միանգամայն, որով կը բարձրանամք հասարակ կենդանեաց կամանասնոց գասէն : Ծնասունք թէպէտեւ մութ զգայականութիւն մ'ունին, սակայն որովհետեւ չեն մտածեր զգացածնուն վրայ, այլ ամէն բան ասոնց համար շվոթ տպաւորութիւններ են, ուստի անձնաւորութիւն շունին, այս աշխարհի մէջ հոգին միայն անձնաւորական էութիւն ունի, որովհետեւ իւր գործողութեանց վրայ ծանօթութիւն ունի, և աէր է կարդադրելու, վասն որոյ իւր շըլապատի բոլոր առարկայններէն կը տարբերի : Հոգւոյն համար համօքէն տիեղերքը երկու մեծ տարբերութեան բաժնուած է, ես և ու - այ կամ անչառոք և շանչառոք :

ԳԼՈՒԽ ԺԴ.

Աննիւթականութիւն ոգւոյ . — Խոթիրն՝ որ ընդ հոգի եւ ընդ մարմին . — Միաբանութիւն երկոցուն . — Օրէնք միաբանութեանն . — Հոգւոյ եւ մարմնոյ տարբերութիւնը ուրացող դրութիւնք :

Ա. — Աննիւթականութիւն ոգւոյ : Հոգին աննիւթկամ հոգեկան էակ է ըսելով կը հասկնամք՝ թէ հոգին դպյացութիւն մ'է որոշ ՚ի մարմնոյ . մարմնոյ պէս նիւթեղին չէ, այսինքն ծաւալ, պնդութիւն, գոյն և այն չունի, այլ հոգեղին է՝ այսինքն խորհուց է : Հոգին երկու գլխաւոր էական ստորոգելիքներ ունի՝ որովք կը հաստատուի իւր աննիւթականութիւնը կամ սոգեղին ըլլալը, որք են պարագնեւն և ասյառնեւն :

*Simple*

1. Հոգին պարուն է, առանձինն է, այսինքն նիւթոյ պէս բաժանելի մասերէ շինուած կամ բաղկացած գոյացութիւն չէ : Ի՞նչ այլանդակ բան է ենթագրել, օրինակի համար, շատ մը և քով քովի կեցած, ինչպէս են մարմնոյ մասունքները, կամ ինչ անպատեհ բացատրութիւն է ըսել այս ինչ անձին կէոր կամ բառորդը՝ ինչպէս կ'ըսենք հացին կէոր կամ չորրորդ բաժինը :

2. Հոգին անչ է, անփոփոխ է, այսինքն ըլլոյնուիր, երկէ ինչ որ էր՝ այսօր ալ նոյն է, այսօր ինչ որ է՝ վաղն ալ նոյն պիտի լինի :

Մեր գիտակցութիւնը և յիշողութիւնը կը վկայեն՝ թէ նոյն և անփոփոխ եմք . գիտակցութիւնն նիս կ'իմացնէ՝ ինչ որ եմք հիմայ , յիշողութիւննիս կ'իմացունէ՝ ինչ որ էինք յառաջ , և ասոնց երկուքին վկայութիւնը մէկտեղ գալով կ'իմանամք՝ թէ առաջ ինչ որ էինք հիմայ ալ նոյն եմք :

Ապաքէն , կարողութիւննիս կը զարդանան , դաշտաբնիս կը փոխուին , ճաշակնիս առջի պէս չը մնար , վարքերնիս եզական հակասութիւններ կ'ունենան . սակայն մոտայ և սրտի այս բարեշրջումներու մէջ մարդկային անձնաւորութիւնը չի փոխուիր՝ չ'այլ կերպիր . նոյն տղայն է՝ որ երիտասարդ կ'ըլլայ , նոյն երիտասարդն է՝ որ մարդ կ'ըլլայ , նոյն մարդն է՝ որ ծեր կ'ըլլայ : կենաց ամենէն վերջին շրջանի մէջ ալ , վաթուն՝ ութուն առջի յառաջքալել , իսուիլ , գրել սկսող անձը մի և նոյն մեք եմք :

Բ . Տարբերութիւն հոգեոյ և հորժոյ : Մարմինը պարզ չէ , այլ անծանօթ մի զօրութիւն բաժանակից մասներով զայս իրար բերած բաղկացուցած է : Յիրաւի կ'ըսեմք հորժն գ , ինչպէս կ'ըսեմք հորժն գ , անցն գ , բայց մարմնոյ միութիւն ըստուիլ ըսկ անուանական է , և ոչ էական . մարմնոյ դոյացութեան չի յարմարի՛ միութիւն անունը տալ , որովհետեւ շատ են :

Մարմինը նոյն չէ , վայրկեանէ վայրկեան շարունակ կը փոխուի : կազմագէտները կը հաստատեն՝ թէ սահմանեալ ժամանակի մը մէջ մեր դորժարանաց դոյացութիւնը բոլորովին կը նորոգուի : Մարմինը թէպէտ և մէկ աստիճան դորժօնէութիւն ունի , բայց ինքնագործ՝ մանաւանդ թէ աղատ չէ , շարժման մէջ ինքնօրինութիւն չ'կայ , եթէ չարժի և

եթէ շարժէ կատարած դործը միշտ կոյր և անդիւակցական է :

իսկ հոգին մի , նոյն և իշխան է իւր գործողութեանց , ուրեմն հոգին մարմին չէ կամ նիւթեղէն չէ : Ցեքարթ ալ հոգւոյ և նիւթոյ վրայ մեր ունեցած այս գաղափարները վերլուծելով՝ կ'եղակաց յունէ՝ թէ արդարե հոգին մի , նոյն և ինքնօրէն գործող է : Ինչ է հոգին . — բան մը՝ որ կը խորհի , կ'ըսէ Տեքարթ . այսինքն կը կասկածի , կ'իմանայ , կը հաստատէ , կը ժխտէ , կը կամի , կը դժկամակի , կ'երեակայէ , կ'դդայ — : Ի՞նչ է նիւթը կամ մարմինը . — բան մը՝ որ ծաւալ ունի , կը գիմակալէ , կը ձեւանայ , կը շարժի , ձայն կը հանէ և այլն . Քիչ տառերութիւն յատկութեանց են այս բաները . Ի՞նչ հանդիսաւութիւն կայ , օրինակի համար , խորհրդուոյ և գունոյ մէջ , ձայնի և հեշտութեան մէջ , մարմին ըստած այս գործարանաւորեալ զանդուածի տարածութեան , և հոգւոյն պարզութեան ապացոյցները հաւաքող մեր այս խորհրդածութեան մէջ : Այն՝ որ դոյացութիւն է՝ իրեն յատկութիւնները պիտի ունենայ , եթէ այլ են մարմնոյ յատկութիւնները և այլ հոգւոյն , կամ թէ երկոցուն մէջ ընաւ հանդիտութիւն չ'կայ , ուրեմն հոգին՝ ի մարմնէ տարբեր դոյութիւն մ'է , դոյութիւն ոգեկան :

Գ . — Հոգեոյ և հորժոյ տարբերութիւնն ուրացանը բարեկանութիւն է ներականութիւն , դրականութիւնը Պայլ , Սկեպտիկեանն Պայլ , կ'ընդունէր՝ թէ մեր հոգւոյն ողեկանութեան ապացոյցները երկրաչափական ապացուցից չափ նիշդ են : Սակայն , հոչակաւոր դորժոց մը՝ որ ամէն բան նիւթեղէն համարելուն համար

կ'ըսուէր նիւթակրօն . այս յայտնի ճշմարտութիւնը կուրանայր , այս դպրոցն էր 'ի հնումն կափկուրոսի և լուկրետիոսի դպրոցը , 'ի նորումն , Հօպակէսի , Կուլնի , Լամեթրի . Օլալախի՝ և այլոց դպրոցը , և վերջերս Պիւխնէր և Մօլեխօֆթ , որոց գրքերը այնչափ համբաւ առին :

Նիւթակրօնից խիստ մերձաւոր ուրիշ դրութեան մը ջատագովներ ալ կամ Դրակնեւ ըսուածները , որոց առջորդութիւնը կամ վարդապետութիւնն է չինտուել՝ թէ ի՞նչ են ըստ ինքեանց էութիւնները և պատճառները , և թէ ի՞նչ է նիւթը և ի՞նչ է հոգին , այլ վիստուել և որոնել միայն իր կամ եղելութիւն՝ որ փորձառութեան ներքեւ կ'իյնայ . և որովհետւ միայն այն իրերն կամ եղելութիւններ կը փնտուեն և կարեւորութիւն կուտան՝ որ նիւթական են , ուստի խորհրդածութեան եղելութիւններն ալ ուղեղի տպաւորութեան կ'ընծայեն . յայտնի բան է՝ թէ սոքա առաջիններէն ասրբեր չ'են: Ուրեմն երկու մոլար վարդապետութեանց դէմ միանդամայն կը նանք հանել մեր ապացոյները 'ի հաստատութիւն դոյութեան հոգւոյ :

1. Նիւթակրօնից ամենէն հին և գլխաւոր առարկութիւնն այնէ՝ թէ հոգին կը վարդանոյ մարմայ հետ , և բաժանորդութիւն ունի անոր ամէն շարժմանց մէջ . ակար է 'ի տպայում և 'ի ծերով , զօրեղ 'ի հասունացեալ հասակի , առոյգ և կենդանի յառողջութեան , գանդաղ և իր ճմիեալ հիւանդութեան ժամանակ : Ապաքին , հոգին մարմայ հետ միացեալ վիճակի մէջ՝ ընդհանրապէս կ'ընթացակցի մարմայն , և գործարանաց վրայ ինկած փոփոխմանց կ'ենթարկի : Բայց այս օրէնքը շատ մը բացառութեան է առաջարկութիւնն է:

Թիւններ չ'ունի . քիչ տղաքներ կան՝ որոնց իմացումը կանսէ քան զմարմնական զարդացումն : Նոյնպէս չ'կան միթէ ծերեր՝ որ մինչեւ մարմայ փտած վիճակը իրենց մոտացիութիւնը և աշխայժը պահեն անյաղթելի 'ի տարեաց և 'ի հիւանդութենէ: Դիցութէ այս մտախն յաճախ անդամ մէջ բերուած օրինակները այնչափ կարեւորութիւն չ'ունենան , վորձուած ճշմարտութիւն է սակայն՝ որ նոյն և մի պատճառներ ուրիշ կերպ կը գործէն հոգւոյն կամ իմացական արմատին վրայ՝ որ մեր մէջը կայ , և ուրիշ՝ մեր գործարանաց վրայ : Յաջող կամ ձախող լուր մը , օրինակի համար , մեր հոգին չափաղանց յուղման մէջ կը ձգէ , բայց գործարաններուն համար այս լուրը ի՞նչ է . տկար շշուկ մը՝ որ թեթևօրէն դղբեց մի մաշկ կամ մի թաղանթ :

Կ'առարկեն՝ թէ մեր իմացական գործողութիւնները միշտ կ'ընկերանան գործարանաց մէկուն շարժմանը և չ'կայ դիտակցութեան և կամ զգացման եղելութիւն մը և խորհուրդ մը՝ որ այս պայմաննէն գուրս մնայ . Սակայն այս առարկութիւնն ալ ոչինչ է: 0՞ն , ընդունիմք՝ թէ ճշմարտիւ կայ այս օրէնքը մեր բնութեան մէջ , սակայն գործարանաց երեսոյթներուն և խորհրդոյ երեսոյթներուն մէջ այնքան որոշ է ասարբերութիւնը , այնպէս որ գործարանաց երեսոյթը խորհուրդի , խորհրդոյ երեսոյթն ալ գործարանաց չ'ենք կրնար տալ , և ոչ երկուքը մէկ արմատի կամ սկզբան ընծայել : Գործարանագէտը թող կարոց և մանրացոյց 'ի ձեռին՝ մարդկային մարմինը կացուցանող այնքան նրբաթելերը մի առ մի թուէ , այն թելերուն դողդոջումը գիտէ , և ջանք ընէ երեւան հանել ինչ յաղաքերութիւն որ գրեր է Արարին իւ-

րաքանչիւր խորհրդոյ և իւրաքանչիւր դործաբա  
նական շարժմանց մէջ, բայց տակաւին հարկ պիտի  
ըլլայ բացատրելով՝ թէ ինչպէս երկրորդը կը յաջորդէ  
առաջին շարժման, ինչպէս դողդոջումը կը փոխուի  
՚ի զդացումն հեշտութեան և ցաւոյ, երկիւղի և սիրոյ,  
դատման և կամաւորական դորդոյ։ Պատճառն որ՝  
ասոնք այնպիսի եղելութիւններ են՝ որ մէկ կերպիւ  
չեն ճանչուիր, և ինչ կերպ որ են գործարանական  
երևոյթներն՝ այնպէս չեն, և կը հաստատեն՝ թէ մեր  
ներսը ոգեղին սկիզբ մը կայ։

Յօ գործարանադէտք կան, որ կ'ըսեն՝ թէ ու-  
ղելն է խորհրդոյ գործավարը և մոածող դպյացու-  
թիւնն սա իսկ է։ կապանէս բժիշկը հռչակաւոր  
գիրք մ'ունի՝ որ կը ճառէ մարդուս ֆիզիդական  
և բարյական վերաբերութեանց վրայ, հետևեալ  
անճունի խօսքերը գրած է՝ որ պատիւ չ'բերին  
իւր գիտնական արժանեաց։ — Տպաւորութիւն-  
ները, կ'ըսէ, ուղեղն համնելով՝ ուղեղին գործել  
կուտան, ինչպէս կերակուրը ստամբախ մէջ իշնե-  
լուն պէս, սա կը գրգռուի զտել և մարսել։ Ուղեղն  
ալ այս կերպով կը մարսէ ընդունած տպաւորու-  
թիւնները, և գործարանի պէս խորհրդոյ զտումը և  
մարսումը գրուի կը հանէ։ Այս բժշկին՝ ոչ պիտակ  
բացատրութեան ըսնիկը ունիմք, թէ պէտև ողջմու-  
տութիւնը կը բողոքէ՝ թէ ինչ այլանդակ է յանպա-  
տեհ հանդիսութենէ բացատրել ուղել իմացակա-  
նութեան գործողութիւնները, և ոչ հակասութիւն-  
ները մէջ պիտի բերեմք կազմադիտաց՝ որ խորհր-  
դոյ ուղղային պայմանաց վրայ անդամ իրարու հետ  
համաձայն չեն, և չեն գիտեր՝ թէ խորհուրդը ուղե-  
ղին հատորէն կախումն կունենայ, թէ ծանրութե-

նէն, թէ ձեւէն, թէ ծալքերուն թիւէն և խորու-  
թենէն, և թէ տարրալուծական բաղկացմանէն։  
Խորն իջնեմք խնդրոյն. չի կրնա՞ր ըլլալ՝ որ ու-  
ղեղը առանց խորհրդոյ նոյն իսկ դպյացութիւնն  
ըլլալով՝ գործիք եղած ըլլայ անոր, ինչպէս ականջը  
գործարան է լսելոց, և ձեռքը գործիք է ուղած ա-  
ռարկայնիս բունելու. Ուղեղը մարմնոյ ուրիշ մասանց  
պէս սոսկ գումար մ'է մասնիկներու՝ որ ժամանակ  
անցնելով կը նորոգուին, հետեւապէս չ'ունի ոչ միու-  
թիւն, և ոչ նոյնութիւն։ Նիւթոյ ընդհանուր տե-  
սակէն է, այսինքն ժաւալ ունի, դոյն ունի, դիմա-  
հար է և այլն, և չ'ունի ինչ երբէք այն որակութիւնն  
ներէն՝ որ զիոգին կը տարբերեն՝ ՚ի նիւթոյ։ Ուրեմնն  
ինչպէս ուղեղը մոտածող ենթակայն կամ էութիւնը  
կրնայ ըլլալ։

Վերջին ժամանակներս նիւթակրօնութիւնը  
կ'առարկեր՝ թէ տակաւին չենք գիտեր՝ թէ ինչ են  
նիւթոյ բոլոր հանգամանքները, բայց պիտի գիտ-  
նամք. Աստուած ամենակարող կրնայ մոտածելոյ կա-  
րողութիւն տալ մարմնոյ։ Լոյք վիխսովիայի գժպա-  
տեհ սոյն բարեպաշտութիւնը աւելի արմեք տուաւ  
այս հիմնապէս սխալ երկրայութեան։ Հակասութիւն  
է ենթագել թէ ծաւալ ունեցող ենթակայն, այսին-  
քըն այն՝ որ բաղկացու և փոփոխական է՝ խորհուրդ-  
կ'ունենայ, զի խորհուղ էակը միութիւն և նոյնու-  
թիւն կամ անփոփխութիւն պիտի ունենայ։ Աստ-  
ուած ամենակարող է՝ բայց հակասող չէ։ Շընէր,  
օրինակի համար, որ բոլորակի շառաւելիներ անհա-  
ւասար լինին, մէկ կետէն միւսն ամենէն երկարը ու-  
ղել գիծն ըլլայ, այսպէս ալ չը կընար Աստուած  
նիւթոյ մէջ ոգեղին տարը կամ խորհրդածութիւն

դնել՝ զի հակասութիւն է Հոգւոյ կամ խորհրդոց  
բոլոր գոյական հանդամանաց :

4. Յունաստանի մէջ Արիստոքսէն անուննիւ-  
թակրօն մը , որ երաժիշտ և փիլիսոփայ էր միանդա-  
մայն , կ'առարկէր՝ թէ ինչպէս որ նուագարանի մէջ  
ներդաշնակութիւնը կը գոյանայ շատ մը հնչում  
ներէ և առանձին ոչ մէկուն մէջն է , այլյամենեսեն  
առ հասարակ , այսպէս ալ հոգին ուրիշ բան չէ՝  
այլ միայն արդիւնքը մեր կաղմաւածքին , կամ հե-  
տևանք մարմնոյն վարած պաշտօններուն : Այս են-  
թաղթութիւնը Արիստոքսէնէն յառաջ ալ կար . սա  
իւր արուեստէն առած ըլլալու է սյս սյլանդակ  
դաղափարի վերջիշումը : Պղատօն Սոկրատայ բեր-  
նով կը հերքէ այս ենթագրութիւները : Ապաքէն ,  
ինչ է ներդաշնակութիւնը : Մի , պարզ , նոյն էսկէ<sup>ա</sup>  
կամ գոյութիւն է : Բայց ովալ կրնայ երևակայել թէ  
ներդաշնակութիւնը գիտակցութիւն ունի , կրնայ  
գիտնալ . թէ երէկ ինչ որ էր՝ սյսօր ալ նոյնն է .  
ներդաշնակութիւնը կրնայ զգալ , մոտածել , ուղել .  
կրնայ զէծի մոնել զինքը կազմող յատուկ մասներուն  
հետ , ձայնի և ձայնն հանող գործարանին հետ :  
Նոր ժամանակի մէջ ալ այս կարծիքն ունեցողներ  
կան և կ'ըլլան , բայց ամենուն ալ բաւական է Պղա-  
տօնի այս հերքումը :

աշ  
աշ

Դ . Զանալան հարծէւներ հոգւոյ և նորհայ դացման քայ :  
Հոգին և մարմինն իրարմէ տարրեր բաներ են , սա-  
կայն ինչ է երկոյուն միաբանութեան կէտը , միու-  
թեան՝ առանց որոյ կարելի չէ հոգւոյն մնալ այս  
երկրաւոր կենաց մէջ . ի՞նչպէս կրնանք բացատրել՝  
թէ բնութեամբ աննման երկու գոյացութիւներ այս-

չափ սերտիւ կրցեր են կապակցիլ իրարու հետ ,  
մինչև այս կենդանի ենթակայն ձևացունել՝ որ ոչ  
հոգի է բոլորովին հրեշտակի պէս , և ոչ ՚ի նիւթոյ  
բազադրեալ է անասունի պէս , այլ հոգեղին և նիւ-  
թեղին միանդամայն է , և կ'ըսուի մարդ : Այս կէտին  
վրայ նոր ժամանակի փիլիսոփայք ալ՝ Տեքարթ ,  
Մալպրանշ , Սպինոզա , Լէիրնետիոս , Եւլեր և այլք  
շատ յոդնեցան . Տեքարթ և անոր աշակերտք կըսեն՝  
թէ հոգի և մարմին , ըստ կարդադրելոյ ամենիմաստ  
Նախաֆինամութեան , կենաց ամէն ընթացից մէջ եր-  
կու միշտ հանդէտ դիմէ եր բռնած կ'երթան , սակայն  
բնութիւննին միշտ տարրեր է իրարմէ : Հոգին՝ որ  
միայն խորհուրդ է՝ չի գործեր մարմնոյ վրայ . մար-  
մինք իրենք իրենց վրայ ալ չեն դործեր . բայց  
Աստուած հոգին այնպէս ըբեր է՝ որ մարմնոյ շարժ-  
մանց հետեւ , և մարմնոյ շարժումն տուեր է՝ որ  
հոգւոյն կամաց հետեւ : Տեքարթի վարկածին մէջ  
սա սկզբունքը կայ՝ թէ իւրաքանչիւր գոյացութիւն  
ոչ այնքան պատճառ է՝ որքան առիթ այն կերպա-  
ւորմանց՝ որ կը գործածուի երկու գոյացութեանց  
մէջ ալ : Ասոր համար փիլիսոփայութեան պատմիչ-  
ները կարդեսեան այս վարդապետութիւնը համա-  
րած են ենթագրութիւն Ամենական պատճառաց :

Լէիրնետիոս կ'ըսէր՝ թէ մարմին և հոգի , իրենց  
յատուկ կեանքը պահելով հանդերձ , այնպէս տրա-  
մադրուած են՝ որ իրարու յարմարին , ինչպէս եր-  
կու բարեյարդար ժամացց՝ որ միննոյն ժամը կը  
ցուցնեն երկուքն ալ : Այս յարմարութիւնը աշխար-  
հէ իսկ վաղ է , հիմը Աստուածային իմաստութեան  
խորհրդոց մէջ է . Լէիրնետիոսի բացարութեան  
նայելով հոգւոյն մարմնոյն երդաշնակութիւնը նախ-  
եղին է և կամ նախարձեալ :

Ուրիշ փելիսովայներ ալ ըսած են, ինչպէս  
Անդ-վիացի կուտալօրթ, թէ միջնորդ գոյացութիւն մը  
կայ հոգւոյ և մարմնոյ մէջ, որ կ'ըսուի Շէնէ հիշուրը,  
որ կը միաբանեցնէ հոգին նիւթոյ հետ՝ երկուքին  
բնութեան մէջ մտնելով:

Ուելի սովորական վարդապետութիւն մ'ալ  
կայ Ֆիլիպական Ներքոքն մարդութիւնը, որ  
կ'ընդունի՝ թէ մարմինն հոգւոյ վրայ հոգին ալ  
մարմնոյ վրայ ուղղակի ներդործութիւն կ'ընեն, այս  
ալ չափադէտ Եւլերի կարծիքն է:

Ամէն այս դրութեանց դէմ շատ ըսելիքներ  
կրնան ըլլալ: Ի՞նչպէս կարելի է որ մեր անձնաւու-  
րական աղատութեան զգացման յարմարին առթա-  
կան պատճառաց և նախակարգ դաշնակութեան  
վարդապետութիւնները: Չեռքս շարժելու ատեն,  
օրինակի համար, կրնամ' համոզուիլ՝ թէ այս շարժ-  
ման անկախ պատճառը ես չեմ, կամ երբ ոտքս  
քարին զարնուի, ասիէց յառաջ եկած յաւը՝ դոր  
զդացի՝ կրնամ' կասկածիլ՝ թէ զարնուածքին անմի-  
ջական արդիւնքը չէ: Ֆիլիդական ներդործման  
վարդապետութիւնն ալ ոչ պակաս հեռուի է ողջմուռ-  
թենէ: Մարդկային աղատութեան վտանդ չ'կայ  
այս ենթագրութեանց մէջ, բայց դոհացուցիչ բա-  
ցատրութիւն մը չէ: Հոգւոյ և մարմնոյ միացման  
ինդիրը բնախօսական և բարոյական շատ մը օդաա-  
կար դիտողութիւններ երևան կրնան համել, բայց  
դժրադդաբար բնաղանցագիտութիւնը բան մը չէ  
կրցած ըսել այս մասին: Կերեկի՝ թէ այս միացման  
խորհրդաւոր պատճառը յաւիտեան ծածկեալ պիտի  
մնայ, ինչպէս շատ մը գտղանի թէութիւններ կան  
ամիեղերքի մէջ՝ որ ծածկեալ են: Սակայն հոգ չէ:

որ այս մասին հաստատուն վարդապետութիւն մը  
չենք գիտեր, Նախալինամութիւնը ինչ որ հարկաւոր  
է մեղ գիտել՝ զայն իմացուցած է, բաւական է այն.  
այսինքն թէ մենք գոյութիւն ունիմք, աղատու-  
թիւն ունիմք, բոլոր էութիւննիս մարմնաւոր չէ,  
այլ իսկապէս զօրութիւն եմք մի նոյն և զարդա-  
րեալ բանականութեամբ և աղատութեամբ:

Ե・Մորդուն առբէնբունեւը անասուններէն: Մեր  
կաղմուածքին նայելով էապէս տարբերութիւն չ'ու-  
նիմք կենդանիներէն՝ մանաւանդ երբ անոնց վերա-  
գցն կարդիներուն հետ բաղդատուիմք: Նոյն պէտ-  
քեր ունիմք, նոյն գործարաններ . և ով որ անդա-  
մահատի կարոցով և մանրացուցիւ գիտէ՝ գործա-  
րանաց մէջ տարբերքներու ալ տարբերութիւն ըլ-  
պիտի գտնէ: Ասոր համար գործարանագիտութեան  
պարապողներ անասոնց վրայ գործողութիւններ կա-  
տարբերվ՝ մարդոց կաղմուածքին վրայ շատ բան  
սորված են: Բայց ի՞նչ են այն բաները՝ որ աշխարհի  
վրայ միայն մարդն ունի: Ահաւասիկ: Ծառենունեւ-  
ունելուական և հորիաւոր գործութեան: Կարողութիւն սեփ-  
հականելոյ այս գաղափարները, զատելոյ ասոնք  
մասնաւորներէ՝ որոց հետ որ միացած են, բարձրա-  
ցնելոյ իրենց վերացական ձևին՝ որ նոյն ինքն թէու-  
թիւնն է գիտունեան:

Համ մը ուրիշ գաղափարաց հետ ունիմք գա-  
ղափար գիտունը պահանջունէ յորմէ կախեալ են աշխարհ  
և մարդ, մէկ խօսքով գաղափար Աստուծոյ, որ  
միայն թէութիւնն է կը գնէ:

Աստուծոյ գաղափարի հետ ունիմք նաև օրունեւ-  
ունելու և լուր, պարտուց և առաքինութեան, որ միայն  
ակն է բարյուկան:

Որքան ուշադրութեամբ դիտեմք՝ ասոնց նման  
բաներ չենք կրնար գտնել կենդանեաց մէջ։ Տե-  
քարիթ սխալցաւ յիրաւի ըսելով թէ կենդանիները  
պարզապէս մեքենայներ են, զի մեքենայներն ասոնց  
ըրածներն չեն կրնար ընել, մէկ աստիճան զգաց-  
մունք և ժամօթութիւն ունին, միայն թէ բոլոր ունե-  
ցածնին մթին գաղափարներ են, որ մարդոց ունե-  
ցածներնուն չեն կրնար բնաւ նմանիլ։ Սոր համար  
է՝ որ կենդանիները չեն խօսիր. ինչ որ յայտնել  
ուզեն՝ անյօդաւոր աղաղակով կը յայտնեն, որ, ինչ-  
պէս դիտեմք, յանհունս տարրեր է մարդոց բար-  
բառէն։ Մարդուն գերազանցութիւնը ապացուցա-  
նող ի՞նչ նշան պէտք է վիճութել. ամէն օր մարդ-  
կային հանճարը նոր նոր կը ճարտարէ, իսկ կենդա-  
նիք իրենց բնաղդման մէջ անշարժելի կեցած են։  
— Մարդիկ, իրենց աշխատութեամբք, կ'ըսէ Պիւ-  
ֆօն, ճախիններ ցամքեցուցին, գետեր պարփա-  
կեցին, անտառներ պայծաւացուցին։ Երկնային  
շարժումներ իմացան, նկարեցին, աշխարհ մեծ-  
ցաւ, արարիչը պաշտեցաւ, դիտութեամբ ծովեր  
դնալի եղան, լերինք հերձան, ժողովուրդք իրա-  
րու մերձեցան, նոր աշխարհ երևան եկաւ։ Վրջա-  
պէս աշխարհիս ո՛ր կողմի որ երթաւ մարդուն կա-  
րողութեան կիրքը պիտի տեսնես։

Եղարակացունեմք Պօսիւէի հետ։ — Անզգայ և  
անզգամէ այն մարդն՝ որ ինքինք անամոց կամ  
անասունք իրեն կը նմանցունէ։

## ԾԱՌԱՋԱՐԱ

ՀԱՄԱԳՈՅՆ ՓԵԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ	44
Ներսածութիւն Փելիսոփայութեան վրայ առ հասարակ	
ՄԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ	
ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ	
Տարբերութիւն Մարդակաղմական և հոգեբանական եղիւու- թեանց . . . Գիտակցութիւն . . .	20
Կարողութիւն հոգւոյ և Զգայականութիւն . . . Խմացա- կանութիւն . . . Կամք . . .	23
Յաղագու Զգայականութիւն . . . Զգայաւութեան . . . Զգացմանց, բնազգմանց, Ճակամիտութեանց, Կրից . . .	55
Խմացականութիւն . . . Ներքին զգայութիւն կամ գիտակցու- թիւն . . . Արտաքին ըմբռնումն . . . Բան . . .	44
Գաղափարաց վրայ առ հասարակ . . . Գտասւորութիւն գա- ղափարաց . . . Դարձումն գաղափարաց . . . Այլ և այլ առաջնութիւնք այս մասին . . .	54
Աւաշն ծանօթութիւնք, կամ առածք և սկզբունք բանա- կանութեան . . .	66
Խմացական գործազրութիւնք . . . Ցիշողութիւնք . . . Լ. ծորդու- թիւն գաղափարաց . . . Երևակայութիւն . . .	74
Քարձեալ իմացական կարողութեանց վրայ Ուշադրու- թիւն . . . Բաղդատառութիւն . . . Ընդհանրացումն . . .	88
Դատում . . . Խմատասիրութիւն . . .	96
Յաղագ նշանաց և Խորհուրդներ բացատրող բարբառայ . . .	104
Յաղագ գործոյ և զանազան յատկութեանց նորա . . . Կամք . . . Բնադրում . . . Սորբութիւնք . . .	424
Բարցական ազատութիւն կամ անձնիշանութիւն . . . Բա- յացացութիւն ազատութեան . . . Հերցումն ազատու- թիւն ուրացող գրութեանց . . . Ճակատագրութիւն . . . Մահմանականութիւն . . .	434
Միաբանութիւն կարողութեանց հոգւոյ . . . Միութիւն ար- մատի այս կարողութեանց . . . Անձնատորութիւն մարդոց . . .	443
Անիւթականութիւն սպաւ . . . Խորին՝ որ ընդ հոգի և ընդ մարմին . . . Միաբանութիւն երկոցուն . . . Որէնք միա- բանութեանն . . . Հոգւոյ և մարդու տարբերութիւնք ուրացող գրութիւնք . . .	448

СИРИЛЛОВСКИЙ 2000 ГИБ.

Сирилловский монастырь в Сириллове

Сирилловский монастырь

## Сирилловский монастырь.

Сирилловский монастырь в Сириллове — это один из старейших монастырей в России. Он был основан в 1382 году преподобным Сирилием, который был учеником преподобного Сергия Радонежского. Монастырь находится в селе Сириллово, что входит в состав Калужской области. В монастыре хранятся мощи преподобного Сирилия и других святых. Монастырь имеет богатую историю и является важным духовным центром для православных верующих. В настоящее время монастырь продолжает свою деятельность и является популярным местом паломничества.

1041

2013

00252x2



